*Հեթանոսական խավարում, ազգային անկախության վերջնական կորստի մթության մեջ, վաղվա և ապագայի անորոշության ու անհայտության մռայլ կեսգիշերին նա մրմնջաց. «Եղիցի լոյս»:*

*«Եւ եղև լոյս»:*

***Պ. Սևակ***

*….Այժմ ես հավատում եմ, հավատո՛ւմ, որ Մաշտոցի հովանավոր աջն ամե՛ն, ամե՛ն տեղ է, ուր ծխում է հայկական օջախը…*

***Ստ. Կուրտիկյան***

# ԱՌԱՋԱԲԱՆ

Գրաբարի կայուն կապակցություններին վերաբերող սույն ձեռնարկը նախատեսված է բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողների համար: Նրանում ընդգրկված նյութը սովորողներին հաղորդում է տեսական և գործնական գիտելիքներ գրաբարի կայուն կապակցությունների ձևակազմական-քերականական և իմաստային հատկանիշների վերաբերյալ:

Ձեռնարկի առաջադրանքներում առկա բնագրային նյութն ընտրված է գրաբարյան ինքնուրույն և թարգմանական գրականությունից, մասնավորաբար մատենագրական երկերից, կարող է ոչ միայն նպաստել ուսանողների գրաբարյան բառապաշարի հարստացմանը, ընդհանրապես բառիմաստային և քերականական գիտելիքների համալրմանն ու խորացմանը, այլև նրանց մասնագիտական բնագավառում ունենալ ճանաչողական արժեք և նշանակություն:

Հավելվածում ներկայացվում են դարձվածաբանական հիմնական եզրույթները, որոնք արտացոլված են ձեռնարկում՝ աշխատանքի էջերին կատարված հղումներով, ինչպես նաև բերվում է սույն աշխատանքի շրջանակներում ի հայտ եկած կայուն կապակցությունների ցանկը՝ համառոտ բացատրություններով:

Արդի բուհական համակարգում ընդհանրապես և հայ իրականության մեջ մասնավորապես կատարվում են կրթության կազմակերպմանը և որակի ապահովմանը միտված մի շարք բարեփոխումեր, որոնք ենթադրում են նորարարական մոտեցումներ լսարանային թե՛ տեսական, թե՛ գործնական դասագործընթացների ժամանակ՝ պահանջելով փոխներգործուն (ինտերակտիվ) ուսուցում, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում, ուսուցման առցանց ու հեռավար կազմակերպում և այլն:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում «Գրաբար» առարկայի դասավանդման ժամանակ՝ հատկապես գրաբարյան բնագրային հատվածների թարգմանության և տեքստային աշխատանքների (տեքստերի լեզվաոճական վերլուծությունների) ընթացքում, նկատել ենք, որ ուսանողներն առավել մեծ հետաքրքրություն են ցուցաբերում դասագործընթացի այն փուլերում, երբ քննարկվում են հին հայերենի ոճերի և դարձվածքների շրջանակներում ի հայտ եկող նախդիր-նախադրությունների գործածությանը, զուգաձևություններին և բազմաձևություններին, իմաստային խմբերին, իմաստային տիպերին, ներկապակցական և միջկապակցական իմաստային

հարաբերություններին, ինչպես նաև այլևայլ ոճական հնարներին վերաբերող հարցերը:

Բուհական համակարգում մասնավորաբար հին հայերենի կայուն կապակցությունների վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների հաղորդումը տեքստային աշխատանքների ընթացքում նույնպես կարող է նպաստել գրաբարի օրինաչափությունների և լեզվական միավորների կիրառության յուրահատկությունների ընկալմանը՝ ձևավորելով ու զարգացնելով գրաբարյան և աշխարհաբարյան համարժեք իրողությունների լեզվաոճական վերլուծություններ կատարելու կարողություններ, գրաբար մատենագրական երկերի լեզվական ուսումնասիրության հմտություններ:

Ուսուցման թե՛ ավանդական, թե՛ արդիական տարաբնույթ մեթոդների ու հնարների կիրառումը գրաբարյան մատենագրական երկերից և այլ բնույթի գործերից, ինչպես նաև Աստվածաշունչ մատյանից քաղված բնագրային հատվածների շուրջ կատարվող լեզվաոճական վերլուծությունների ընթացքում հնարավորություն է ընձեռում վեր հանելու նաև գրաբարի կայուն կապակցությունների ձևակազմական-քերականական և իմաստային առանձնահատկությունները թե՛ լսարանային պայմաններում, թե՛ առցանց ուսուցման տիրույթում: Ընդ որում, հին հայերենի կայուն կապակցությունների ուսուցման տեսանկյունից կարևորում ենք միջառարկայական և ներառարկայական առնչակցությունների հաշվառումն ու ապահովումը: Բուհական համակարգում գրաբարի կայուն կապակցությունների ուսուցման նախապայմանը «Ժամանակակից հայոց լեզվի» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվող դարձվածաբանության իմացության վրա է խարսխվում:

«Գրաբար» առարկայի բուհական ուսուցման ընթացքում կայուն կապակցությունների թե՛ ձևակազմական-քերականական, թե՛ իմաստային հատկանիշների մատուցման առումով արժևորում ենք թեմային վերաբերող հարցերի ու առաջադրանքների, վարժությունների[1] համակարգի, ինչպես նաև յուրաքանչյուր բաժնի վերջում տրվող գրականության ցանկի առկայությունը: Առաջարկվող գրականությունից ուսանողները կարող են օգտվել՝ ըստ անհրաժեշտության:

***Ծանոթություն:*** *Հարցում:* Այս մեթոդի կիրառումը կարևոր է քննարկված նյութի վերաբերյալ ձեռք բերված գիտելիքների ստուգման և ամրապնդման համար: Բանավոր կամ գրավոր հարցադրումներն ունեն թեմայի յուրացման գործընթացը վերահսկող և գնահատող նշանակություն:

*Վարժություններ:* Ուսումնական գործողությունների բազմակի (մտավոր կամ պրակտիկ) կատարումներն ապահովում են թեմայի վերաբերյալ գիտելիքների յուրացումը, ամրապնդումը և բառապաշարի հարստացումը: Դասվում են ուսուցման պրակտիկ մեթոդների շարքը: Վարժությունների կատարման համար կարևոր են սովորողների գիտակցական մոտեցումը, կատարվելիք գործողությունների կանոնների իմացությունը և այլն: Վարժությունները, ըստ դասագործընթացի տարբեր փուլերի, լինում են *նախապատրաստական,*

[1] *Э. Г. Азимов, А. Н. Щукин,* Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам), М., Изд-во ИКАР, 2009, էջ 70, 322-323: *И. А. Бредихина,* Методика преподавания иностранных языков: Обучение основным видам речевой деятельности, Учебное пособие, Екатеринбург, Изд-во УУ, 2018, էջ 23-24, 40-46, 50-58:

*մարզողական, վերլուծական, կիրառական, ստեղծագործական* և *ամփոփիչ:*

*Առաջադրանքներ:* Ուսուցման պրակտիկ մեթոդների շարքն են դասվում առաջադրանքները, որոնք նպաստում են ուսումնասիրվող նյութի գործնական յուրացմանը, սովորողների վերլուծական մտածողության և ինքնուրույն աշխատանքներ կատարելու կարողությունների զարգացմանը: Առաջադրանքների իրականացման համար անհրաժեշտ է կատարվելիք գործողությունների կանոնների իմացություն:

Գրաբարի բուհական դասընթացի շրջանակներում կայուն կապակցությունների ուսուցման հարցում առանձնակի նշանակություն ունեն զանազան գծագրական դասակարգիչները՝ պրիզմա, եռամաս օրագիր, T-աձև աղյուսակ, M-աձև աղյուսակ, Վենի դիագրամ, հասկացությունների քարտեզ[2] և այլն:

***Ծանոթություն:*** *Պրիզմա:* Դասագործընթացի և՛ խթանման, և՛ եզրափակիչ (ուղղորդված պրիզմա) փուլերում կիրառվող մեթոդական (փոխներգործուն) այս հնարի նպատակը ներկայացվող հասկացությունների, գաղափարների արձանագրումն է: Վերջինս մեկնաբառի (քննարկվող հասկացության) և վերջնաբառի միջև տրամաբանական կապ հաստատելուն է ուղղված:

*Եռամաս օրագիր:* Ընթերցանության այս մեթոդը կիրառելիս լրացվում է երեք բաժնից բաղկացած աղյուսակ: Առաջին

[2] *Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան,* Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, «Վանատուր» ՍՊԸ տպ., 2008, էջ 12, 25, 69, 73, 76:

սյունակում, օրինակ, լրացվում է գրաբար բնագրային հատվածը, երկրորդում տրվում է վերջինիս աշխարհաբար թարգմանությունը, երրորդում կատարվում են համապատասխան մեկնաբանություններ: Մեթոդը կիրառելի է գրաբարով, միջին հայերենով, արևմտահայերենով, ինչպես նաև բարբառով գրված ստեղծագործություններ ուսումնասիրելիս:

*Երկթև (T–աձև) աղյուսակ:* Թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքների ժամանակ կարելի է կիրառել փոխներգործուն ուսուցման մեթոդական այս հնարը: Վերջինս աղյուսակ է, որը հիշեցնում է *T* տառը (բաղկացած է երկու բաժնից): Այն միևնույն հարցի երկու կողմերը համեմատելու/ հակադրելու համար է կիրառվում:

*Եռաթև (M-աձև) աղյուսակ:* Մեթոդական (փոխներգործուն) այս հնարը կիրառվում է թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքների ժամանակ: Երեք բաժնից բաղկացած աղյուսակ է, որը հիշեցնում է *M* տառը: Միևնույն հարցի երեք կողմերը համեմատելու/ հակադրելու նպատակով է կիրառվում:

*Վենի գծապատկեր (դիագրամ):* Մեթոդական այս հնարը կիրառվում է ուսումնասիրվող թեմայի ամփոփման և ընդհանրացման ժամանակ: Այն ներկայացվում է կենտրոնում հատման մեծ մակերես ունեցող երկու կամ ավելի շրջանաձև պատկերներով: Ըստ Վենի դիագրամի՝ շեշտվում են գաղափարների, իրողությունների ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Գծապատկերի կենտրոնում նշվում են գաղափարների, երևույթների ընդհանրությունները, իսկ չհատվող մասերում տրվում են նրանց առանձնահատկությունները:

*Հասկացությունների (մտքի) քարտեզ (concepts map):* Փոխներգործուն ուսուցման մեթոդական այս հնարը կիրառվում է դասագործընթացի եզրափակիչ փուլում: Այն ունի գծագրական բնույթ և ամփոփում է քննարկված թեմային առնչվող փոխկապակցված, հարաբերակից տերմինների, հասկացությունների ու մտքերի ամբողջությունը:

Գրաբարի դասագործընթացում ուսանողների ինքնուրույնանհատական աշխատանքներ կատարելու հմտությունների մշակման և համագործակցային ու հաղորդակցական կարողությունների զարգացման հարցում ընդհանրապես արդյունավետ են աշխատանքը բառարաններով և համաբարբառներով, խմբավորման, խմբային հետազոտության և տեքստային աշխատանքի[3] կիրառումը, ուսումնական բանավեճը, ինչպես նաև գրաբարյան բնագրային հատվածների արտահայտիչ և ուղղորդված ընթերցանությունը[4], որոնց ընթացքում նաև կայուն կապակցությունների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման դժվարին ճանապարհը դառնում է դյուրին ու հիմնավոր:

***Ծանոթություն:*** *Խմբավորում:* Մեթոդական այս հնարը գրավոր վարժության տեսակ է, որը կիրառելի է դասի տարբեր փուլերում: Խմբավորման վարժությունները կարելի է կատա-

---

[3] *Թ. Զուհարյան,* Հայոց լեզվի մեթոդիկա, գիրք 1-ին, Ե., «Լույս» հրատ., 1978, էջ 207: *Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշադաջյան,* նշվ. աշխ., էջ 78-79: *Г. К. Селевко,* Энциклопедия образовательных технологий, Том 1, М., Народное образование, 2005, էջ 232-233, 250-261: *Э. Г. Азимов, А. Н. Щукин,* նշվ. աշխ., էջ 55, 303-304:

[4] *Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշադաջյան,* նշվ. աշխ., էջ 28, 44-49: *Г. К. Селевко,* նշվ. աշխ., էջ 125, 158-161, 178: *И. А. Бредихина,* նշվ. աշխ., էջ 73-79:

րել թե՛ անհատապես, թե՛ խմբով, ընդ որում երկու դեպքում էլ աշխատանքի արդյունքները ներկայացվում են ողջ լսարանին: Հնարավոր է կիրառել դասագործընթացի տարբեր փուլերում (թե՛ մինչև տվյալ թեմայի առավել հանգամանալից ուսումնասիրությունը, թե՛ ձեռք բերված գիտելիքներն ամփոփելիս): Այս հնարը տվյալ թեմայի կամ բանալի բառի վերաբերյալ սովորողների իմացության, պատկերացումների, ընկալման և յուրացման մասին գաղափար կազմելու հնարավորություն է տալիս, օգնում բացատրելու կուտակված մտքերի և գաղափարների փոխկապվածությունը:

*Խմբային հետազոտություն:* Ուսուցման համագործակցային տեխնոլոգիայում կիրառվող մեթոդներից է: Քննարկվող թեման դասագործընթացի ժամանակ ուսումնասիրվում է տարբեր տեսանկյուններից: Կատարվում է հետազոտական աշխատանք համագործակցային խմբերով: Դասավանդողը հանդես է գալիս որպես ուսումնական գործընթացը կառավարող, ուղղորդող և խորհրդատու: Աշխատանքի վերջում խմբերը ներկայացնում են իրենց հետազոտական աշխատանքները (հիմնական հասկացություններ, բացատրություններ, մեջբերումներ և եզրակացություններ): Յուրաքանչյուր խմբի կատարած աշխատանքը քննարկվում և գնահատվում է թե՛ մյուս խմբերի, թե՛ դասավանդողի կողմից:

*Տեքստային աշխատանք:* Այս մեթոդը ենթադրում է թեմայի վերաբերյալ յուրացրած գիտելիքների կիրառում գործնականում: Տեքստի հիման վրա կատարվում է ուսումնասիրված լեզվական իրողության քննարկում որպես ինքնուրույն աշխատանք: Տեքստի ուսումնասիրության սկզբունքներն են լեզվաոճական, բովանդակային վերլուծությունները և անհա-

տական ընկալման խթանումը: Տեքստի լեզվաոճական վերլուծության ընթացքում քննարկվում են նրանում ի հայտ եկող բառագիտական, քերականական (ձևաբանական և շարահյուսական) իրողությունները, ինչպես նաև ոճական-արտահայտչական միջոցները:

*Ուսումնական բանավեճ:* Ուսումնառության նկատմամբ (ճանաչողական) հետաքրքրություն առաջացնող մեթոդներից է: Դասագործընթացի եզրափակիչ փուլում նպատակաուղղված, համակարգված կերպով և բոլոր սովորողների ակտիվ մասնակցությամբ փոխանակվում են մտքեր, կարծիքներ, հիմնադրույթներ քննարկվող թեմայի շուրջ: Սովրողները ձեռք են բերում նոր գիտելիքներ թեմայի կամ հիմնահարցի վերաբերյալ, փաստարկումներով, հիմնավորումներով պաշտպանում սեփական տեսակետները: Կիրառելի է բանավեճի թեմայի վերաբերյալ նախնական գիտելիքների առկայության դեպքում:

*Ուղղորդված ընթերցանություն:* Այս (փոխներգործուն) մեթոդի կիրառության ընթացքում հատվածաբար ընթերցվում է տեքստը: Հատված առ հատված ընթերցելուց հետո տրվում են ուղղորդող հարցեր, կատարվում են վերլուծություններ և մեկնաբանություններ քննարկվող նյութի վերաբերյալ, որոնցով էլ մատչելի ու տպավորիչ է դառնում ուսումնասիրվող թեման:

Աշխատանքի վերջում տրվում են հին հայերենի կայուն կապակցությունների վերաբերյալ հանձնարարություններ, որոնք նախատեսված են առցանց ուսուցման հարթակում (էլեկտրոնային տարբերակով) կատարելու համար: Այս իմաս-

տով կարևորում ենք առաջադրանքների բազմազանությունն ու ամփոփիչ բնույթը: Էլեկտրոնային ուսուցման հնարավորությունների (առցանց հարց ու պատասխան, էլեկտրոնային բառացանկի կազմում, համակարգչային Microsoft Power Point (կամ Google) ներկայացում, վեբ-որոնում[5] և այլն) կիրառումը հին հայերենի կայուն կապակցությունների ուսուցման գործընթացում նկատի ենք ունեցել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ժամանակակից իրականության մեջ ընդհանրապես և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում մասնավորապես կրթության որակի ապահովման դիտանկյունից խիստ կարևորվում են ուսուցման առցանց և հեռավար դրսևորումները:

***Ծանոթություն:*** *Համակարգչային* Microsoft Power Point (կամ Google) *ներկայացում:* Էլեկտրոնային այսօրինակ ներկայացումը (լեզվական իրողությունների) ուսուցման արդյունավետ միջոցներից է, որն ուսումնասիրվող նյութի շուրջ աշխատանքը դարձնում է առարկայական և հետաքրքիր, նպաստում սովորողների ինքնուրույնության խթանմանը, համակարգչային ծրագրեր կիրառելու հմտությունների զարգացմանը:

---

5 *Մ. Մարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշադացյան,* նշվ. աշխ., էջ 18-21: *Э. Г. Азимов, А. Н. Щукин,* նշվ. աշխ., էջ 5, 34, 278: *Б. Ф. Раджабов,* Современные методы обучения студентов с использованием ИКТ в условиях Республики Таджикистан, Сборник научных статей по итогам международной научно-практической конференции “ Наука нового времени: от идеи к результату” 18-19 августа 2017 года, Санкт-Петербург, Изд-во “КультИнформПресс”, 2017, էջ 80:

*Վեբ-որոնում (Web-Quest):* Այս մեթոդով ուսուցման ժամանակ համացանցից (կայքեր, առցանց գրադարաններ և այլն) ձեռք են բերվում հետազոտության թեմայի վերաբերյալ տեղեկույթ և գիտելիքներ՝ գործնականում լուծելով առաջադիր հարցը: Մեթոդի կիրառումը հնարավոր է թե՛ անհատական հանձնարարությունների կատարման ժամանակ, թե՛ խմբային ուսուցման ընթացքում: Պահանջում է էլեկտրոնային եղանակով ստացված տեղեկույթի նկատմամբ ընտրողական վերաբերմունք, նպաստում նյութի բազմակողմանի ուսումնասիրությանը (աշխատանքի արդյունքները կարելի է ներկայացնել բանավոր ելույթով, համակարգչային ներկայացմամբ և այլն): Վեբ-որոնման համար նախատեսված առաջադրանքները տարբերվում են ըստ բարդության (1. տրված հղումների օգտագործմամբ թեմայի ուսումնասիրություն, 2. առաջադրված հղումների օգտագործմամբ մուլտիմեդիա նյութի հավաքածուի ստեղծում, 3. թեմային առնչվող կոնկրետ հարցերին պատասխանելու համար տեղեկույթի որոնում, 4. թեմայի վերաբերյալ անհատական հանձնարարություններ, 5. պրոբլեմային հանձնարարություններ, հիմնահարցի մոդելավորում կամ լուծում): Դասավանդողը հետևողականություն է ցուցաբերում տեղեկույթի մշակման, վերլուծության, վարկածների առաջադրման և եզրահանգման փուլերում: Տվյալ մեթոդի կիրառումը նպաստում է սովորողների վերլուծական, տրամաբանական, քննադատական մտածողության զարգացմանը, համագործակցային կարողությունների ձևավորմանը և էլեկտրոնային միջոցների գործածության հմտությունների ձեռքբերմանը:

Տեքստային աշխատանքի (տեքստի լեզվաոճական վերլուծության) ընթացքում գրաբարի կայուն կապակցությունների ուսուցման նպատակն է սովորողներին հաղորդել տեսական և գործնական գիտելիքներ գրաբարի կայուն կապակցությունների ձևակազմական-քերականական և իմաստային հատկանիշների վերաբերյալ:

Գրաբարյան բնագրային աշխատանքների ընթացքում բուհում կայուն կապակցությունների ձևակազմական-քերականական և իմաստային առանձնահատկությունների ուսուցման գործընթացի հիմնախնդիրներն են բացահայտել այդ կարգի միավորների ձևակազմական-քերականական և իմաստային առանձնահատկությունները, արժևորել դրանց դրսևորման յուրահատկությունները խոսքային միջավայրում (գրաբարյան բնագրային հատվածներում): Այս առանցքային խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է՝

1. գաղափար տալ գրաբարի բառակապակցական (անվանողական) և նախադասության ձևավորումով (հաղորդակցական) կայուն կապակցությունների վերաբերյալ,

2. ներկայացնել հին հայերենի կայուն կապակցությունների իմաստաբանությունը. այդ կարգի միավորների իմաստային տիպերը, թեմատիկ հիմնական խմբերը, ինչպես նաև իմաստային ներկապակցական և միջկապակցական հարաբերությունները,

3. ուսուցանել գրաբարյան բնագրային հատվածներում կիրառված կայուն կապակցությունների դերն ու նշանակությունը խոսքի ոճավորման, տեքստի բովանդակության պատկերավորության և վերաիմաստավորված-այլաբանական նշանակությունների արտահայտման հայեցակետերից:

Կայուն կապակցությունների ձևակազմական-քերականական և իմաստային հատկանիշների վերաբերյալ դիտարկումներ և վերլուծություններ կատարելիս մեզ համար ելակետային են եղել ինչպես հայ[6], այնպես էլ արտասահմանյան լեզվաբանության[7] ժամանակակից մակարդակն ու մոտե-

---

[6] Ժամանակակից հայերենի կայուն կապակցությունները քննարկվել են տարբեր տեսանկյուններից (*Մ. Խ. Աբեղյան,* Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. Զ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 124-125, 140, 398-399: *Ա. Ա. Մուրվալյան,* Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1975, էջ 7, 13-16, 22, 27, 47, 69: *Ե. Հ. Գևորգյան,* Հայերենի դարձվածքները, Ե., ԵՊՀ հրատ., 1969, էջ 6-17, 25, 49, 64, 118-119, 134: *Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան,* Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 1975, էջ 6-9, 14: *Ա. Ս. Մարգարյան,* Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 1990, էջ 309-329, 335, 350, 352: *Վ. Ա. Քոսյան,* Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 7, 14, 28-29, 182-183, 431-432: *Պ. Ս. Բեդիրյան,* Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս» հրատ., 1973, էջ 5, 18-20, 29-33, 88, 103-106, 133-139, 161, 177-184, 213-215, 276: Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., ՀՊՄԻ հրատ., 1990, էջ 3-5, 49-51: Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2011, էջ 5: *Խ. Գ. Բաղիկյան,* Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, էջ 81, 91-94, 127-128, 140, 161, 243-244, 259-261, 293-323: Դարձվածային ոճաբանություն, Ե., Եր. համալս. հրատ., 2000, էջ 10-12, 18, 24-26, 45, 47, 50, 81-86, 172: *Լ. Մ. Խաչատրյան,* Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 7-8, 57-58, 61-67, 94-106, 186, 208-246: *Լ. Ն. Ավետիսյան,* Համեմատություն-դարձվածային միավորները ժամանակակից հայերենում, Ե., Էդիթ Պրինտ, 2018, էջ 31-32, 45-46, 53, 71-72, 83, 90-91, 100-101, 135-136, 143-144, 151-152):

[7] Կայուն կապակցությունների տեսական ուսումնասիրության հարցում անառարկելի են արտասահմանյան լեզվաբանական մտքի դերն ու նշանակությունը (*Ш. Балли,* Французская стилистика, М., Изд-во “Иностр. лит-

ցումները՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայ իրականության մեջ ընդհանրապես կայուն կապակցությունների և մասնավորապես դարձվածքների գիտական ուսումնասիրության համար առանցքային նշանակություն ունեն արտասահմանյան լեզվաբանության նվաճումները: Ընդսմին, գրաբարի կայուն կապակցությունները (մասնավորաբար դարձվածային միավորները) և, մանավանդ, վերջիններիս բուհական ուսուցմանն առնչվող հարցերը մեզանում դեռևս առանձնակի ու հանգամանորեն հետազոտված և քննարկված չեն[8]:

---

ры”, 1961, էջ 97, 100-102. *В. В. Виноградов,* Русский язык. Грамматическое учение о слове, М., Изд-во “Высшая школа”, 1986, էջ 28-33. *В. П. Жуков,* Русская фразеология, М., Изд-во “Высшая школа”, 1986, էջ 8, 144, 197, 203-204, 212, 235, 251. *Н. М. Шанский,* Фразеология современного русского языка, М., Изд-во “Высшая школа”, 1985, էջ 18, 30, 37-39, 47, 54, 72-73, 84. *В. Л. Архангельский,* Устойчивые фразы в современном русском языке, Ростов н/Д, Изд-во РУ, 1964, էջ 82, 124, 154-155, 166, 195-197, 222, 233. *А. Д. Райхштейн,* Сопоставительный анализ немецкой и русской фразеологии, М., Изд-во “Высшая школа”, 1980, էջ 14, 17-19, 109, 116-118. *А. В. Кунин,* Английская фразеология, М., Изд-во “Высшая школа”, 1970, էջ 15, 19-23, 26, 32-33, 62, 88, 326-329. *А. Г. Назарян,* Фразеология современного французского языка, М., Изд-во “Высшая школа”, 1987, էջ 58, 60, 64-65, 112-114, 182-183, 192-195, 198-199, 204-205. *И. И. Чернышева,* Фразеология современного немецкого языка, М., Изд-во “Высшая школа”, 1970, էջ 17-20, 29, 48-50, 58, 81, 91, 114. *S. E. Goursky,* The idiomatic heart of the English language, Lvow, “Vishaya shkola” press, 1975, էջ 66, 109, 144):

[8] Գրաբարի դարձվածանին առավելաբար արտացոլված է տարաբնույթ բառարաններում (*Նոր բառգիրք Հայկազեան լեզուի,* հհ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837: *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի,* Անթիլիաս, 1988: *Ռ. Ս. Ղազարյան,* Գրաբարի բառարան, հհ. Ա-Բ, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2000: Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., Եր. համալս. հրատ., 2006: Գրաբարի դարձուածաբանական բառարան, Ե., Եր. պետ. համալս. հրատ.,

Կարծում ենք, որ բուհերի բանասիրական ֆակուլտետնե-րում հին հայերենի՝ լեզվամշակութաբանության հայեցակե-տից կարևորվող կայուն կապակցությունների ուսումնասի-րությունը արդյունավետ կարող է լինել առհասարակ գրա-բարի օրինաչափությունների և լեզվական միավորների կի-րառության յուրահատկությունների ընկալման տեսանկյուն-ներից՝ ապահովելով տեքստային աշխատանքներ, մասնա-

---

2012: *Լ. Մ. Խաչատրյան,* Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանո-րեն տարարժեք բառեր, Ե., «Զանգակ-97» հրատ., 2003: Գրաբարի ուսում-նական բառարան, Ե., «Զանգակ» հրատ., 2013):

Տեսական ուսումնասիրություններում և գրաբարի դասագրքերում կա-յուն կապակցությունները դիտարկվել են դարձվածաբանության, քերակա-նության, ոճաբանության և առհասարակ հայոց լեզվի պատմության այլև-այլ հարցերի քննարկման համատեքստում (*Ա. Բագրատունի,* Հայերէն քե-րականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1852, էջ 97-107, 110, 113-130, 223, 259-261, 277-278, 283-284, 288, 294-297, 321, 332, 365, 420-421, 435, 497, 500, 505, 508, 583, 607: *Վ. Ա. Քոսյան,* Գրաբարի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, էջ 82-83, 169, 179, 182, 255, 276: *Ա. Ա. Աբրահամյան,* Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976, էջ 208, 231, 236, 240, 242-243, 245, 250-251, 253, 260: *Ս. Ղ. Ղազարյան,* Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., Եր. համալս. հրատ., 1981, էջ 137-138, 142-143: Հ. Մ. Ավետիսյան, Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., Եր. համալս. հրատ., 2007, էջ 160, 201, 207, 215: *Վ. Գ. Համբարձումյան,* Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 59-75: Գրաբարի ձեռնարկ, Ե., Էդիթ Պրինտ, 2018, էջ 306, 316, 319-321, 323, 328-329, 332: *Լ. Մ. Խաչատրյան, Գ. Բ. Թումանյան,* Գրաբարի դասագիրք, Ե., «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 218, 241, 251-252, 258-259, 262, 264-265, 267, 272: *Լ. Մ. Խաչատրյան, Լ. Ն. Ավետիսյան,* Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XVI դդ.), Ե., «Զանգակ» հրատ., 2015, էջ 28-124):

վորապես լեզվառճական ինքնուրույն վերլուծություններ կա-
տարելու հմտությունների մշակումը:

*Այսպէս քերականութեամբս մտանել յամէ-*
*նայն արհեստս իմաստասիրութեան պարտ է:*

***Գ. Մագիստրոս***

# ԳՐԱԲԱՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԿԱԶՄԱԿԱՆ-ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

*Կայուն կապակցությունները մասամբ կամ ամբողջությամբ վերաիմաստավորված կամ նոր իմաստավորում չունեցող պատրաստի վերարտադրելի կառույցներ են:*

Մասնագիտական գրականության մեջ նշվում է. «Ազատ են այն բառակապակցությունները, որոնք խոսողության գործընթացում ամեն անգամ նորովի են ստեղծվում՝ ըստ խոսքի պահանջի, իսկ կայուն են նրանք, որոնք ինչպես ամեն մի բառ, պատրաստի գոյություն ունեն լեզվի մեջ, իբրև այդպիսիք էլ խոսողության գործընթացում մուծվում են խոսքի մեջ»[9]:

## Ա. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԻՋՄԱԿԱՐԴԱԿԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կայուն կապակցությունները *միջմակարդակային (բառիմաստային և քերականական-շարահյուսական) իրողություններ* են: Լեզվաբանական գրականության մեջ տարբերակվում է կայուն կապակցությունների երկու տիպ՝

[9] *Պ. Ս. Բեդիրյան,* Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, էջ 3:

1) կայուն կապակցություններ, որոնք համընկնում են բառակապակցություններին,

2) կայուն կապակցություններ, որոնք համընկնում են նախադասություններին[10]:

Բառակապակցության կառուցվածք ունեցող կայուն կապակցություններն ըմբռնվում են որպես անվանողական, իսկ նախադասության ձևավորում ունեցողները՝ հաղորդակցական արժեքով միավորներ:

*1. Անվանողական կայուն կապակցություններ*

*Անվանողական կայուն կապակցությունները* հարաբերակցվում են բառաքերականական կարգերին՝ խոսքի մասերին, միաժամանակ նախադասության կառուցվածքային դիտվածքում հանդես են գալիս որպես նրա մեկ անդամ (*տէգ աչաց* = չար հայացք, *պատուական քան զոսկի* = խիստ լավ՝ գովելի՝ պատվական, *առն լինել (իմ)* = ամուսնանալ (կնոջ մասին), *ակն ի ճանապարհ* = ապարդյուն սպասելով և այլն):

Ըստ կառուցվածքային դիտվածքի՝ գրաբարի անվանողական կայուն կապակցությունները կարելի է քննարկել երկու հիմնական խմբերով՝ միազազաթ կամ միաբևեռ[11] և երկզազաթ կամ երկբևեռ[12] տեսակներով:

---

[10] Հմմտ. *Н. М. Шанский,* Фразеология современного русского языка, էջ 72:

[11] Միազազաթ կապակցություններում բացակայում է քերականորեն գերադաս բաղադրիչը (տե՛ս *Խ. Գ. Բադիկյան,* Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, էջ 260-263): Գրաբարյան այդ կարգի կառույցները ձևավորվում են խնդրով և տարբեր նախդիր-նախադրություններով:

[12] Հին հայերենի կայուն կապակցություններում առանձնացվող երկանդամ (և բազմանդամ) միավորների արտահայտության դիտվածքում ի հայտ են

*ա) Միազագաթ (միաբևեռ) կայուն կապակցություններ. առ աչս, ըստ կարգի, ընդ այգն, ի սրտէ, ի մասնէ, իբրև զշուշան, ոգւով չափ, քան զհարսն, ըստ նմանութեան արազաթև արծուոյ* և այլն:

*բ) Երկզագաթ (երկբևեռ) կայուն կապակցություններ. մայր վանուց, մաքուր որպէս զլոյս, ձայն շրջել, ընկալել քան զոսկի ընտիր, անցանել որպէս զարծուի սրաթև, դատել սրով, հարցանել կենօք, քան զփուշ ևս չար կտտել, բացաւ գլխով, վաղ քաջ* և այլն:

---

գալիս երկու (և ավելի) լիիմաստ բաղադրիչներ: Այդօրինակ կառույցները կոչվում են երկզագաթ կամ երկբևեռ կապակցություններ՝ ի հակադրություն միազագաթ միավորների, որոնցում առկա է լիիմաստ մեկ բաղադրիչ:

ՊՐԻԶՄԱ


1 ԱՆՎԱՆՈՂԱԿԱՆ ԿԿ
2 Միագագաթ
2 Երկգագաթ
3 Չծավալված
3 Ծավալումով
3 Չծավալված
3 Ծավալումով
4 քան զսուր՝ քան *զամենայն* սուր *երկսայրի,* իբրև զհուր՝ իբրև զհուր *բորբոքեալ,* արեամբ չափ՝ արեամբ *քրտամբ* չափ
4 քաղցր քան զմեղր՝ քաղցր քան զմեղու *խորիսխ,* փշրել որպէս զանօթ՝ փշրել որպէս զանօթ *բրտի,* իբրև զարծաթ՝ իբրև զարծաթ *ի բովս*
5 ԳՐԱԲԱՐԻ

*2. Հաղորդակցական կայուն կապակցություններ*

*Հաղորդակացական կայուն կապակցությունները,* ձևավորումով լինելով նախադասություններ, վերարտադրվում են որպես խոսքի ավարտուն հատվածներ:

*ա)* Նրանց ամենակարևոր առանձնահատկություններն են ստորոգումը, հնչերանգը և մտքի ավարտվածությունը: Էական նշանակություն ունեն եղանակավորումը և բաղադրիչների շարադասությունը: Այդօրինակ կայուն կապակցություններն ունեն եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի, հաստատմանժխտման քերականական կարգեր (*Զամենայն ծառ պտղովն ճանաչեմք: Բանիւք իւրեանց խոցեն որպէս սրով: Եղեւ ըստ դնել մտաց իւրոց: Օրհնեցի՛ց զՏէր յամենայն ժամ, հանապազ օրհնութիւն նորա ի բերան իմ: Ո՛ղջ լեր: Որչափ ի մեծութիւն հասանիցես, ի խոնարհութեան կալջի՛ր զանձն: Մի՛ խաբիր լրութեամբ որովայնի: Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց:Հրոյ ընդ խոտոյ ոչ ամուսնութիւն լինի* և այլն):

*բ)* Հաղորդակցական կայուն կապակցությունները հանդես են գալիս թե՛ միակազմ (*Միրեսցես զընկերն քո իբրև զանձն քո),* թե՛ երկկազմ (*Շատախօսութեանն հոսանք իբրև յաղբերէ դիմեն*) նախադասությունների կառուցատիպերով:

*գ) Դիմավոր հաղորդակցական կայուն կապակցությունների* ստորոգյալն արտահայտվում է խոնարհված բայերով (*Անցոյց զքեւ զմեղս քո: Որպէս ի ծովու ալեկոծիմք*):

*Անվանական հաղորդակցական կայուն կապակցություններում* ստորոգումը քերականորեն արտահայտված չէ. վերջինս ընկալվում է խնդրո առարկա կապակցությունների ընդհանուր մտքից (*Ակն ընդական, ատամն ընդ ատաման: Հարկս հարկաւորաց, պատիւս արժանաւորաց*):

*դ)* Քննարկվող կապակցությունները հանդես են գալիս ինչպես *պարզ (Այս լինէր վասն օգնականութեան բարձրեալոյն),* այնպես էլ *բարդ համադասական (Մի՛ լինիր վկայ սուտ՝ ընկերի քում, և մի՛ խաբիր շրթամբք քովք)* և *ստորադասական (Որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ) նախադասությունների կառուցատիպերով:*

**Կայուն կապակցությունների դասակարգումն ըստ հաղորդակցման գործընթացի հետ ունեցած փոխհարաբերության**

| **Բառակապակցության կառուցվածքի կամ անվանողական ԿԿ** | **Նախադասության ձևավորումով կամ հաղորդակցական ԿԿ** |
|---|---|
| Որդի Աստուծոյ, լուսաւոր վարդապետութիւն, զմտօք զառանցեալ, անմխիթար մինչև ի մահ, յական թօթափել, կապարճս դարձուցանել, տեսանել իբր ընդ հայելի օրինակաւ, իբրև լուսաւորք ծագել (իմ), իբրև զկենդանի ի գերեզմանի | Մի՛ դատիք, զի մի՛ դատիցիք: Լաւ է յստակ խորհրդով ննջել, քան պիղծ խորհրդով աղօթս մատուցանել: Խոցոտեցին զիս ի մահ: Անգործ մեղու՝ լաւ է քան զժիր պիծակ: Քեզ փա՜ռք յամենայնի: Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս: Տրտում է անձն իմ մինչև ի մահ: |

*Վարժություններ*

*1. ա) Արտահայտիչ ընթերցե՛ք և թարգմանե՛ք հետևյալ բնագրային հատվածները:*

*բ) Դո՛ւրս գրեք կայուն կապակցությունները՝ առանձնացնելով դրանք ըստ միազազաթ և երկզազաթ կառուցատիպերի:*

*Նմուշ՝ իբրև զկեղև նռան*– միազազաթ ԿԿ,
*ունել (իմ) ի մտի*– երկզազաթ ԿԿ:

Ահաւադիկ կաս գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւադիկ կաս գեղեցիկ, աչք քո աղաւնիք, վարսք քո իբրև զերամակս այծից, որք երևեցան ի Գաղաադէ: Ատամունք քո իբրև զերամակս կտրելոց[1], որք ելանեն ի լուալեաց[2]. ամենեքեան երկուորիք են, և անորդի ոչ գոյ ի նոսա: Իբրև զթել որդան են շրթունք քո, և խօսք քո գեղեցիկք. իբրև զկեղև նռան են այտք քո, իբրև զաշտարակն Դաւթի պարանոց քո: ....Մեղր կաթեցուցանեն շրթունք քո, քոյր իմ հարսն, մեղր և կաթն ի ներքոյ լեզուի քո, և հոտ հանդերձից քոց[3] իբրև զհոտ կնդրկի (Երգ., Դ, էջ 703):

Եւ իբրև զայն ամենայն լուաւ թագաւորն Յունաց՝ երկեաւ[4]. քանզի օրինօք կազմութեամբ, գունդ առ գունդ ճակատել ոչ առնուին յանձն, և ըստ պատգամին պատշաճի ոչ կարէր ունել յանձին, քանզի տկար էր յոսկերաց զօրութեամբ. սրտաթափ եղեալ զարհուրեցաւ[5], քանզի ոչ գիտէր զի՛նչ տացէ բանիցն պատասխանի: ....Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս. և զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական, արկեալ զնովաւ զնշան

թագաւորութեանն. և ոչ ոք գիտէր վասն նորա[6]. հրաման ել ամենեցուն, թէ ինքն իսկ կայսրն իցէ (Ագաթ., Դ, էջ 34, 36):

Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին էին[7] այլ խառնաղանձ[8] բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն և կամ շինականութեանն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իբրև զյորդահեղեղ ինչ անձրևաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին[9], ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն[10], և ոչ կարէին ինչ ունել ի մտի (Բուզ., 3, ԺԳ, էջ 54):

1. *Իբրև զերամակս կտրելոց* – խուզած (ոչխարների) հոտի նման:

2. *Ի լուալեաց* – լողարանից:

3. *Հոտհանղերձիցքոց* – քոզգեստների բույրը:

4. *Երկեաւ* – վախեցավ:

5. *Սրտաթափ եղեալ զարհուրեցաւ* – ահաբեկվելով զարհուրեց:

6. *Վասն նորա* – նրա մասին:

7. *Որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին էին* – որոնք գրագիտության արվեստից զուրկ էին:

*8. Խառնաղանձ* – խառնիճաղանջ:

9. *Նստեալ վարդապետացն .... զվարդապետութիւնն ի վերայ հոսէին* – ուսուցիչները նստելով .... ուսումը նրանց վրա հոսեցնեին:

10. *Ոչ նշմարանս ինչ զոր լսէինն* – ոչ մի նշույլ իրենց լսածներից:

*2. Նախադասության ձևավորում ունեցող հետևյալ կայուն կապակցությունները խմբավորե՛ք ըստ միակազմ և երկկազմ ենթատեսակների:*

Յականջս անզգամի ամենևին մի՛ խօսի՛ր, զի մի՛ անգոսնեսցէ զիմաստուն բանս քո (Առակ., ԻԳ, 680): Ամենայն ինչ կատարեալ է (Յովհ., ԺԹ, 118): Զոր ինչ գրեցի՝ գրեցի (ն. տ., 119): Եղերո՛ւք միամիտք իբրև զաղաւնիս (Ագաթ., 307): Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է (Եղ., 14): Ըստ գործոց մեղաց մերոց հատուցանէ մեզ Տէր (Բուզ., 165): Բանք Տեառն որպէս զարծաթ ընտրեալ և փորձեալ յերկրէ (Փարպ., 34): Տրտում եմ, անմխիթար մինչև ի մահ (ն. տ., 197): Երկու հակառակք իրերաց՝ միմեանց ծախիչք են (Եզն., 64): Քստմունք զնան ընդ անդամսն (ԱԲ, 113): Իբրև յաղբերականց հոսէին յաչաց իւրեանց (ն. տ., 121): Մնա՛ ոչ զանցաւոր կեանս, այլ զյաւիտենականն (ն. տ., 284): Գովեսցէ զքեզ ընկերն՝ և մի քո բերան, օտարն՝ և մի քո շրթունք (ն. տ., 420):

*3. Հետևյալ հաղորդակցական կայուն կապակցությունները դասակարգե՛ք ըստ տրված աղյուսակի:*

Եղիցի լոյս (Ծննդ., Ա, 1): Լաւ է իմաստուն, քան հզօր, և հանճարեղ, քան զայն, որ ունիցի դաստակերտս մեծամեծս (Առակ., ԻԴ, 680-681): Ո՛ղջ լերուք (Ագաթ., 84): Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք (Եղ., 14): Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ զոլ (ն. տ., 15): Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ (ն. տ., 104 ): Օրհնեցի՛ց զՏէր յամենայն ժամ, հանապազ օրհնութիւն

նորա ի բերան իմ (ն. տ., 177): Սարսափիւն զայ զոսկերօքն (Եզն., 177): Կարեվէր եմ մերձ ի մահ (Փարպ., 198): Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ (Խոր., 358 ): Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթք առ ի վարդապետել (ն. տ., 364): Անցին զմտաւ (ԱԲ, 97): Անկարօտք գոլով ըստ բնական պիտոյից, սակայն ի պէտս փառացն անհագ են (ն. տ., 261): Հատուցէ մարդոց ըստ իւրաքանչիւր գործոց նոցա (ն. տ., 497):

| **Պարզ հաղորդակցական ԿԿ** | | **Բարդ հաղորդակցական ԿԿ** | |
|---|---|---|---|
| *Համառոտ ԿԿ* | *Ընդարձակ ԿԿ* | *Համադասական ԿԿ* | *Ստորադասական ԿԿ* |
| | | | |

Բ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրաբարի կայուն կապակցությունները հատկանշվում են կառուցվածքային յուրահատկություններով. *նախադրություններով*[13] *կայուն կապակցություններ,* քննարկվող միավորների

[13] Նախադրությունները որևէ հոլովով խնդիր առնող սպասարկու բառեր են, որոնք հիմնականում գործածվում են նախադաս: Երբեմն նրանց մեջ հանդիպում են հետադրություններ (տե՛ս *Ա. Բագրատունի,* Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, էջ 119: *Ա. Ա. Աբրահամյան,* Գրաբարի ձեռնարկ, էջ 261: *Գ. Բ. Թումնյան,* Գրաբարի նախադրությունները (V-XI դդ.), Լեզվի և ոճի հարցեր, VII, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 24: *Վ. Գ. Համբարձումյան,* Գրաբարի ձեռնարկ, էջ 324-326):

*նախդրավոր*[14] *և առանց նախդիր-նախադրությունների դրսևո-րումներ,* որոնց առկայությունը պայմանավորված է գրաբար-յան լեզվական համակարգի և նորմի առանձնահատկություն-ներով:

*1. Նախդրավոր անվանողական կայուն կապակցություն-ներ.*

*ա)* ***Առ*** *նախդիրը՝ այլևայլ խնդիրներով.* ***առ*** *աչս* = 1. կողմ-նապահությամբ, 2. ձևի համար, ***առ*** *ոչինչ գրել* = բանի տեղ չդնել, ***առ*** *ժամանակ մի* = միաժամանակ (*հայցական* խնդրով), ***առ*** *ականէ* = երեսպաշտությամբ (*բացառական* խնդրով), ***առ*** *աչօք* = 1. աչքի առաջ, 2. աչքին թվալով (*գոր-ծիական* խնդրով):

*բ)* ***Զ*** *նախդիրը՝ այլևայլ խնդիրներով. ծափ* ***զ****ծափի հարկա-նել* = ծափ տալ (*տրական* խնդրով), ***զ****Բանն Աստուած Որդի* = Աստծո միածին որդին. Հիսուս Քրիստոս, *խնդրել* ***զ****վրէժ* = վրեժ լուծել (*հայցական* խնդրով), *զանց առնել* ***զ****իմեքէ* = մի բանից անցնել. մի բանի մասին չհոգալ (*բացառական* խնդրով), *անցեալ* ***զ****աւուրբք* = տարիքն առած, ծերացած,

---

[14] Գրաբարի քերականագիտության մեջ նախդիրները (*առ, զ, ընդ, ըստ, ի (յ)* և *ց*) համարվում են հոլովման համակարգին սպասարկող բառեր: Գրաբարում նախդիրները, բացի ուղղականից, գործածվում են մյուս բոլոր հոլովների հետ (տե՛ս *Մ. Չամչեանց,* Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1843, էջ 71-72: *Ա. Բագրատունի,* նշվ. աշխ., էջ 95: *Ա. Այտընեան,* Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ եւ յաւելուածով, Վիէննա, Մխիթարեանց տպ., 1866, Ե., Եր. համալս. հրատ., 1987, էջ 467: *Լ. Մ. Խաչատրյան, Գ. Բ. Թոսունյան,* Գրաբարի դասագիրք, էջ 249-276):

***զմոտօք զառանցեալ*** = խելքը գցած, խելագար (*գործիական* խնդրով):

*գ) **Ընդ** նախդիրը՝ այլևայլ խնդիրներով. նախանձել (իմ) **ընդ** ումեք* = նախանձել մեկին (*տրական* խնդրով), ***ընդ** միտ ածել* = 1. մտածել, 2. մտքում դնել (*հայցական* խնդրով), ***ընդ** դատարկ բանէն համարս տալ* = դատարկ բանի համար հաշիվ տալ (*բացառական* խնդրով), ***ընդ** ձեռամբ* = ենթակայության ներքո (*գործիական* խնդրով):

*դ) **Ըստ** նախդիրը՝ այլևայլ խնդիրներով. **ըստ** առիծին գոչել* = մռնչալ, խիստ հուզվել՝ զայրանալ (*տրական* խնդրով), ***ըստ** կամս անձանց իւրեանց* = ուզածի պես (*հայցական* խնդրով), *անարատ **ըստ** մարդկանէ* = չափազանց մաքուր, անբիծ (*բացառական* խնդրով):

*ե) **Ի** (յ) նախդիրը՝ այլևայլ խնդիրներով. **ի** մեծի տան* = տիեզերքում (*տրական* խնդրով), ***ի** միտ առնուլ* = խելքը կտրել, հասկանալ (*հայցական* խնդրով), ***ի** բերանոյ ուսանել* = բերանացի սովորեցնել, *յականէ յանուանէ* = անձամբ (*բացառական* խնդրով):

*զ) **Ց** նախդիրը՝ հայցական խնդրով. ուտել **ցյագ*** = շատ-շատ ուտել, *կռուել **ցմահ*** = կռվել մինչև մահ, պայքարել և այլն:

*2. Նախադրություններով (այլև հետադրություններով) անվանողական կայուն կապակցություններ.*

*ա) Սեռական խնդրով. **որպէս զունակ** Արածանւոյ* = խիստ առատ, վարարելով, ***զօրէն** տղայոց* = անփորձ՝ անմիտ կերպով[15], *անկանել (իմ) **ի ձեռն** սրոյ* = սրով ընկնել, սպանվել:

[15] *Որպէս զունակ Արածանւոյ, զօրէն տղայոց* կապակցությունները առանձնացվում են որպես *համեմատություն-դարձվածային արտահայտություններ*:

*բ) Տրական խնդրով. խոզի* ***նման*** = չափազանց կեղտոտ, փնթի, *ծառայել* ***իբրև*** *Աստուծոյ* = խիստ նվիրված լինել՝ պաշտել, ***որպէս*** *փախստէից հետամուտ լինել (իմ)* = համառորեն հետապնդել, ***նման*** *գայլոց* = ագահաբար:

*գ) Հայցական խնդրով.* ***քան*** *զչափ նկանակի միոյ* = շատ քիչ, *պապանձել* ***որպէս*** *համր դեւ* = հանկարծակի համրանալ՝ կարկամել, *զհետ մտանել* ***որպէս*** *առիւծ ընդ նապաստակ* = համառորեն հետապնդել:

*դ) Բացառական խնդրով. խորշել ի ճանապարհաց ումանց* ***իբրև*** *ի պղծութեանց* = խուսափել, փախչել, *գարշել,* ***մերկ*** *ի մեղաց* = մեղք չունեցող, անմեղ, *ի հնոց ժամանակաց* ***հետէ*** = անհիշելի ժամանակներից:

*ե) Գործիական խնդրով. մահուամբ* ***չափ*** = 1. մինչև մահ, 2. մահվան հավասար, մահացու, *խաղալ նովաւ* ***իբրև***[16] *հաւու* = ծաղրել, *արեամբ քրտամբ* ***չափ*** *մարտնչել (իմ)* = շատ-շատ պայքարել, մարտնչել և այլն:

---

Վերջիններս պատկերավորության հիման վրա ստեղծված հիմնականում երկանդամ ստորադասական կառույցներ են, որոնց ձևավորմանը գրաբարում մասնակցում են *իբրև, որպէս, քան, նման, որպէս զունակ, աւրինակ իմն, զօրէն, զոյգ, չափ, որչափ, մինչև, համեմատ, հանգոյն* նախադրությունները, ինչպես նաև *ըստ+տրական, ըստ+ հայցական, ըստ+բացառական* կառույցները (մեր լեզվի զարգացման գրաբար գոյավիճակին բնորոշ համեմատություն-դարձվածային արտահայտությունների մասին հանգամանորեն տե՛ս *Լ. Մ. Խաչատրյան, Լ. Ն. Ավետիսյան,* Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XVI դդ.), էջ 24-124):

[16] Վ. Ա. Քոսյանն անդրադարձել է այն հանգամանքին, որ *իբրև (իբր)* նախադրությունը կարող է գործածվել բոլոր հոլովների հետ՝ այս առումով նմանվելով նախդիրներին (հմմտ. *Վ. Ա. Քոսյան,* Գրաբարի բառակապակցությունները, էջ 169):

*3. Իրենց կազմում նախդիր-նախադրություններ ունեցող հաղորդակցական կայուն կապակցություններ.*

*Աշակերտք հեղգք **առ** ուսումն և փոյթք **առ ի** վարդապետել* = Աշակերտները սովորելու մեջ՝ ծույլ, իսկ սովորեցնելու մեջ՝ փութաջան: *Անցին զմտաւ* = Մտքիցս թռան: *Դարձո՛ զքեզ **ի** բարկութենէդ* = Մի՛ բարկացիր: Զսպի՛ր քեզ: *Ոչինչ է խտիր **ընդ** բազումս կամ **ընդ** սակաւս* = Շատի և քչի միջև զանազանություն չկա: *Հաստուցէ մարդոց **ըստ** իւրաքանչիւր գործոց նոցա* = Հատուցելու է բոլոր մարդկանց համաձայն իրենց գործերի: *Ընկալարո՛ւք զգիտութիւն **քան** զոսկի ընտիր* = Սիրո՛վ ընդունեք գիտությունը: *Բանիւք իւրեանց խոցեն **որպէս** սրով* = Իրենց խոսքերով խոր խոցում են: *Պնդեա՛ **իբրև** այր զմէջ քո* = Խիզախաբար գոտեպնդվի՛ր: ***Ի վերայ** համբերութեան մարդոյն է* = Համբերությունը մարդուն հատուկ է և այլն:

*4. Իրենց կազմում նախդիր-նախադրություններ չունեցող կայուն կապակցություններ.*

*ա) Անվանողական կայուն կապակցություններ. անօթ պատերազմի* = զենք, *մայր եկեղեցի* = գլխավոր՝ աթոռանիստ եկեղեցի, *խոհական հանճարով* = խելացի, խոհեմ, *բուռն ուկերօք* = ամրակազմ, *անցանել բանիւ* = խոսել, *ուշ առնուլ* = 1. ուշադրություն դարձնել, 2. զգուշությամբ նայել, *սրտի մտօք* = սրտանց, *բարձրազլուխ կամակարութեամբ* = բացահայտորեն և այլն:

*բ) Հաղորդակցական կայուն կապակցություններ. Բաժանեա՛, զի տիրեսցես* = Բաժանի՛ր, որպեսզի տիրես: *Բարեկամք մեծատանց բազումք* = Հարուստների բարեկամները

շատ են: Մարդիկ շահամոլ են: *Ո՛ղջ երուք* = Ո՛ղջ եղեք: *Ճշմարտութեան մօտ է*=Ճշմարտանման է և այլն:

| **Կայուն կապակցությունների դասակարգումն ըստ ներկառուցվածքային յուրահատկությունների** | | |
|---|---|---|
| **Առանց նախդիր-նախադրությունների ԿԿ** | **Նախդրավոր ԿԿ** | **Նախադրութ-յուններով ԿԿ** |
| **ա) անվանողական.** զառն Աստուծոյ, ակն արևու, լի ա-ւուրբք, ցամաք մարմնով, սրտակաթ առնել, ձեռն տալ, հարուստ ժամս, համ և հաւան<br>**բ) հաղորդակցական.** Միայն օգտիցն նեթ հայիք: Ամենայնի յաղթեաց ժիր ջան: Երկիւղ՝ թերահաւա-տութեան է նշանակ: | **ա) անվանողական.** մատնել զանձն ի մահ, ըստ ան-ձանց կամս գնալ, ընդ երեկոյս<br>**բ) հաղորդակցա-կան.** Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման: Զամենայն ծառ ի պտղոյն ճանա-չեմք: Մարդ ըստ պատկերի Աստուծոյ արա-րաւ: Զի՞նչ է յարդ առ ցորենաւ: | **ա) անվանողական.** հակառակ որպէս քաղցր դառին, պէս գունակ Բաբելովնի, քան զհողմ թեթև, իբրև գետ ծաւալել (իմ), նման թռչնոյ<br>**բ) հաղորդակցա-կան.** Եղերո՛ւք մի-ամիտք իբրև զա-ղաւնիս: Քանզի ան-պատում է և ի վեր քան զմիտս և զլե-զուս մարդկան: |

***Վարժություններ***

*4. Հետևյալ կայուն կապակցությունները խմբավորե՛ք ըստ երկթև (T–աձև) աղյուսակի:*

*ա) Անվանողական ԿԿ.*

Դարձուցանել զխաւար առ լոյս, իբրև զլոյս տօթագին, Տասնաբանեայ օրէնք, ի գումս իջանել, բանիւ բերանոյ, աստուածագործ զօրութիւն, բակ առնուլ, առ հաւասարակ, որդի կորստեան, պէս գունակ Տրդատայ, ծագել (իմ) իբրև զլոյս, դատել (իմ) սրով, անցեալ զաւուրբք, մտօքն աղքատագոյն, խոցոտել ի մահ, անազան ուրեմն, իբրև ի թանձրամած խաւարի, քան զանապատս անպտուղ, ի կայս և ի կոյս, ընդ ոտս առնել, թափել հրոյ, սիրել ըստ անձին, առ ոտս, առ մի նուագ, դիպաթաւալ կացուցանել, գոչել իբրև զառիւծ զայրացեալ, վայրիկ մի, երեսս առնել, ընտիր իբրև զարեգակն, քան զձիւն սպիտակ, ուշ առնուլ, ըստ նմանութեան հայելւոջ ցուցանել, հաւասարել անասնոց անբանից, իբրև զծառայ, պահել իբրև զմարգարիտ պատուական:

**Անվանողական ԿԿ**

| Առանց նախդիր-նախադրությունների | Նախդիր-նախադրություններով |
|---|---|
| | |

*բ) Հաղորդակցական ԿԿ.*

Թէ ունիցիք հաւատս որչափ զհատն մանանխոյ: Աստուծոյ բարբառ է և ոչ մարդոյ: Օրհնեցի՛ց զՏէր յամենայն ժամ: Որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունս տան լսել նմա: Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ: Զշանթակէզ հրոյն ապրեցաւ: Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ: Ելեր զխրատով նորա: Ունայնութիւն

ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է: Քեզ փա՛ռք յամենայնի: Մի՛ խաբիր լրութեամբ որովայնի: Արիւն ձեր ի գլուխ ձեր: Սահմանք քաջաց զէնն իւրեանց: Խոստանայ ի վեր քան զմարդ և քան զմժիխ ազդել ոչ կարէ: Ո՛ղջ էք: Շաբաթ վասն մարդոյ եղև, և ոչ մարդ վասն շաբաթու: Ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ: Մի՛ լինիր վկայ սուտ՝ ընկերի քում, և մի՛ խաբիր շրթամբք քովք: Ես՝ ձայն բարբառոյ յանապատի:

**Հաղորդակցական ԿԿ**

| Առանց նախդիր-նախադրությունների | Նախդիր-նախադրություններով |
|---|---|
| | |

## Գ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ընդհանրապես *կայուն կապակցություններն օժտված են տարբերակներով հանդես գալու ներունակությամբ:* Տարբերակայնություն ի հայտ է գալիս կայուն կապակցությունների ոչ թե բովանդակության, այլ արտահայտության դիտվածքում: Այդօրինակ միավորների տարբերակների յուրաքանչյուր զույգում կամ շարքում կարևորվում է նրանց իմաստային նույնականության պահպանումը[17]:

[17] *В. М. Мокиенко,* Славянская фразеология, М., Изд-во “Высшая школа”, 1989, էջ 26:

Գրաբարի կայուն կապակցություններում առկա են թե՛ բառային, թե՛ քերականական և թե՛ ծավալային տարբերակներ:

*1. Բառային (հոմանշային) տարբերակներ.*

*շանց* ***զունակ//օրինակ***= ծայրահեղորեն, *իբրև զաւազ ծովու* ***անչափ//անթիւ//բազում***= խիստ շատ, *փոյթ* ***ունել (իմ) //առնել***= հոգ տանել, ջանալ, ***շտապ//խուճապ*** *տագնապի*= սաստիկ իրարանցում, *օրէնք* ***մազդեզանց // մոգուց***= զրադաշտական կրոն, ***լուսաւոր//երկնաւոր*** *վարդապետութիւն*= քրիստոնեական վարդապետություն, ***յաղթ//բուռն*** *մարմնով* = հաղթանդամ, ուժեղ, ***ճակատ//թշնամութիւն*** *յուզել* = պատերազմ բորբոքել, ***արեան//մահու*** *չափ*= սաստիկ և այլն:

*2. Քերականական տարբերակներ.*

*ա) Ձևաբանական տարբերակներ. մէջ* ***գիշերի//գիշերոյ***= կեսգիշեր, **արեան**//***արեամբ*** *չափ*= խիստ շատ, սաստիկ, ***վէգ //ի վէգ*** *գալ*= վիճել, *բստ* ***միտս//մտաց***= ուզածի պես, *կեանք* ***յաւիտենական // յաւիտենականք*** = անմահություն, ***վրէժ // վրէժս*** *խնդրել* = վրեժ լուծել, *իբրև* ***զոչխար//զոչխարս***= հնազանդորեն և այլն:

*բ) Շարահյուսական տարբերակներ. զարդ կայսերական // կայսերական զարդ* = թագավորական նշան, *զգիշերն ամենայն և զտիւն ամենայն // զտիւն ամենայն* և *զգիշերն ամենայն*= գիշեր-ցերեկ, շարունակ, *քաղցր քան զմեղու խորիսխ // քաղցր քան զխորիսխ մեղու* = չափազանց քաղցր, *յական թօթափել // ի թօթափել ական* = մի ակնթարթում, *սպիտակ իբրև զձիւն//զոր օրինակ ձիւն սպիտակութեամբն*=չափա-

զանց սպիտակ, *բառնալ թողուլ // բարձի թողի առնել* = ու-շադրություն չդարձնել և այլն:

*3. Ծավալային տարբերակներ.*

*բան Աստուծոյ // բան Աստուծոյ* ***էական*** = Աստծո խոսքի մարմնացումը, Աստծո միածին որդին. Քրիստոս, *իբրև զապա-ռաժ // իբրև զապառաժ* ***խստաքար*** = խիստ դաժան, անգութ, *դիաթաւալ խաղալ // թաւալ* ***անկեալ գլոր*** *խաղալ* = սպանվելով ընկնել, գետնի վրա թավալվել, *առ ժամանակ մի //* ***մինչև*** *առ ժամանակ* = միաժամանակ, *որպէս մեղուս // որպես մեղուս* ***ընդդէմ ծաղկանց*** = ժրաջանորեն աշխատելով և այլն:

***Վարժություններ***

*5. Հետևյալ տարբերակային կայուն կապակցությունները խմբավորե՛ք ըստ տրված եռաթև (M–աձև) աղյուսակի:*

Ատեան հարցափորձի // հանդէս հարցափորձի, անկանել (իմ) ի ձեռն սրոյ // անկանել (իմ) ի ձեռս սրոյ, ընդ վնասիւք արկանել // արկանել ընդ վնասիւք, վարել ի գերութիւն // առ-նուլ ի գերութիւն, իբրև զայր // իբրև զարս, իբրև զփայլակն // իբրև զփայլակն անկեալ յերկնից, դիպան ելանել // դիպան պատահել, մայր արեգական // մայր արևու, ըստ կարգի // կարգ ըստ կարգի, բան Հօր // բան փրկչին, սպիտակ որպէս զասր // սպիտակ որպէս զկաթն, անտի առնել // անտիս առ-նել, հարուստ ոսկերօք // քաջ հարուստ ոսկերօք, կոտամահ առնել // կոտամահ սատակել, զոր օրինակ // որպէս լոյս առ խաւար, ի բացէ ի բաց // բաց ի բաց, ձայն բառնալ // ձայն ար-

կանել, խաղալ նովաւ իբրև հաւու // իբրև հաւու խաղալ նովաւ, յայտ առնել // յայտ ածել, իբրև զառինք // իբրև զզառինս, սպասաւորութիւն հարկանել // սպասաւորութիւն մատուցանել, անցանել բանիւ // անցանել զրով:

**Տարբերակային ԿԿ**

| *Բառային տարբերակներ* | *Քերականական տարբերակներ* | *Ծավալային տարբերակներ* |
|---|---|---|
| | | |

*6. Հետևյալ նախադասություններից դո՛ւրս գրեք կայուն կապակցությունները և դասակարգե՛ք ըստ քերականական տարբերակների՝ որոշելով նրանց ենթատեսակները (ձևաբանական և շարահյուսական):*

1. Պատիւս և մեծութիւնս նման արծաթոյն ընդ մատնութեանն խմայէլացի վաճառականացն (Փարպ., 25): 2. Այլ տեսիլ նորա անարգ, նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան (Ղեւ, 739): 3. Հասեալ գեղեցկագոյն իբրև զպատուական մարգարիտն (Ազաթ., 9): 4. Ըստ կամս դիւրութեան անձանց մերոց զնասցուք (ն. տ., 49): 5. Լիջի՛ք իբրև զմանկունս զայսպիկ (ն. տ., 221): 6. Իսկ զհոգևորացն առաքինութիւն աստուածասէր սիրողացն մեծութիւն իբրև զմարգարիտն պատուական (ն. տ., 6): 7. Իբրև զմանուկ ի գիրկս առեալ տանէին (ն. տ., 317): 8. Ոչ կարէ որդի մարդոյ յանձնէ առնել և ոչ ինչ (Ղեւ., 739): 9. Իբրև զարծաթ ընտիր՝ յամենայն ազգս ընդունողաց սփռեալ տարածեցաւ բանն (Փարպ., 33): 10. Եւ զել և

զմուտ բարեկամացն որպէս ի տուրնջեան նոյնպէս և ի գիշերի սահմանէր (Խոր., 91): 11. Այնուհետև ըստ կամաց գնային (Բուզ., 30): 12. Զայն պաշտօնէիցն ի տուէ և ի գիշերի անհատ էին ի սուրբ սաղմոսն (Եղ., 68):

## Դ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ըստ իրենց ընդհանրական իմաստի՝ բառակապակցության կառուցվածք ունեցող կամ անվանողական կայուն կապակցությունները համախմբվում են՝ հարաբերակցվելով խոսքի մասերին:

Հին հայերենի ոչ հաղորդակցական կայուն կապակցությունները *ձևաբանական դասակարգմամբ* բաժանվում են հիմնականում *գոյականական, ածականական, բայական* և *մակբայական խմբերի:*

### *1. Գոյականական կայուն կապակցություններ*

Գոյականի արժեք ունեցող կայուն կապակցությունների գերադաս բաղադրիչը գոյական է կամ փոխանվանաբար (գոյականաբար) գործածված այլ խոսքի մաս: Այդ կարգի կառույցներն արտահայտում են հասկացություն. զուրկ են հաղորդակցական դերից (*մթերք որովայնի* = փորոտիք, *հիւրամեծար գետոց*= ծով, *արծաթ կենդանի*= սնդիկ, *քաջ արանց*= կայսր, թագավոր, մեծ իշխան, *որդի մարդոյ* = Հիսուս Քրիստոս, *կցորդ արեան* = արյունակից, *վախճան մահու* = մահվան օրհաս, մահ, *ճրագարան տեսութեանց*= աչքեր):

*2. Ածականական կայուն կապակցություններ*

Գրաբարի ածականական կայուն կապակցությունները հիմնականում պահպանում են այդ խոսքի մասին բնորոշ իմաստային հատկանիշները. արտահայտում են հասկացություն, ունեն անվանողական դեր (*հաշմ մտօք* = խիստ ապուշ, *վատթարագոյն քան զշուն* = չափազանց չար՝ վիրավորող՝ անամոթ, վատթար, *խոհական հանճարով* = շատ խելացի՝ խոհեմ, *սքանչելի իբրև զտեսիլ հրեշտակաց* = հրեշտականման, սքանչելի): Խնդրո առարկա կառույցները կարող են կազմվել նաև առանց ածականների մասնակցության (*զերդ զապակի* = խիստ հարթ և թափանցիկ, *իբրև զաշտարակն Դաւթի* = շատ բարձր՝ սլացիկ):

*3. Բայական կայուն կապակցություններ*

Մասնագիտական գրականության մեջ առկա այն դիտարկումը, որ դարձվածքների մեծ մասը պատկանում է բայերի և մակբայների կարգերին[18], հատկանշական է նաև գրաբարի կայուն կապակցությունների համար, որոնք ունեն անվանողական արժեք: Այդ կարգի կառույցների գերադաս բաղադրիչն անպայման բայ է (*թիկունս դարձուցանել* = 1. արհամարհել, 2. փախչել, *ակն դնել ումեք* = 1. մեկի վրա վատ մտքով աչք դնել, 2. հետամուտ լինել, *առաջի արկանել* = ձեռնարկել, նպատակ դնել, *պաշտօն հարկանել* = մեծարել, երկրպագել, *վճարել զկենցաղս* = մեռնել, *արկանել ի սուր սուսերի* = սրի մատնել, կոտորել, *փշրել որպէս զանօթ* = 1. ա-

[18] *В. П. Жуков,* Русская фразеология, էջ 204:

րագորեն փշրվել՝ խորտակվել, 2. խիստ տրտմել, վշտանալ, *բառնալ ի վերայ ուսոց* = հաղթահարել, *խօսել իբրև ընդ տղայս* = արհամարհանքով՝ խաբելով խոսել մեկի հետ): Ինչպես տեսնում ենք, քննարկվող բայական կառույցները կարող են հանդես գալ ինչպես նախդիր-նախադրություններով, այնպես էլ առանց այդ կարգի սպասարկու բառերի:

*4. Մակբայական կայուն կապակցություններ*

Հին հայերենում զգալի տեսակարար կշիռ ունեն մակբայի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող կայուն կապակցությունները: Այդ կարգի միավորները հատկանշվում են որոշ յուրահատկություններով, որոնք պայմանավորված են ոչ միայն մակբայի խոսքիմասային առանձնահատկություններով, այլև այդօրինակ կապակցությունների ձևաիմաստային բնութագրով: Մակբայական կայուն կապակցություններն ունեն անվանողական դեր (*իբրև դժոխք* = սարսափելիորեն, սահմռկեցուցիչ կերպով, *արագապէս որպէս թռչունք* = չափազանց արագ, *ուշի մտօք* = ամբողջ ուշադրությամբ, *առ ականէ* = երեսպաշտությամբ, *անողորմաբար որպէս գազանք* = չափազանց դաժան կերպով, *արագ քան զմիտս* = խիստ արագ, *ուշ ի կուրծս* = ուշադրություն դարձնելով, հիշելով, ջանալով): Քննարկվող միավորներում պարտադիր չէ մակբայ գերադաս բաղադրիչի առկայությունը. վերջիններս կարող են ձևավորվել նաև առանց մակբայների մասնակցության, ընդ որում, նրանցում գերակշռում են միազազաթ կառույցները (*շանց զունակ* = շատ-շատ, ծայրահեղորեն, *ի ձեռն հրեշտա-*

*կաց* = հրաշքով, *ի ձեռն զաւազանի* = հանկարծակի, *զերդ ի սգի* = վշտաբեկ):

*5. Տարարժեք կայուն կապակցություններ*

Գրաբարի կայուն կապակցություններում հանդիպում են այնպիսիները, որոնք *համատեղում են խոսքիմասային տարբեր արժեքներ*[19], ինչպես՝ *ածական // գոյական. զառ ի թափ* (զառիվայր), *մակբայ // գոյական. ընդ մէջ* (1. մեջտեղից, 2. խտրություն երկու բանի միջև), *ածական // մակբայ. նման Յուդայի* (1. դավաճան, 2. դավաճանաբար), *մակբայ // ածական. մահու չափ* (1. մեռնելու աստիճանին մոտ, 2. մահվան հավասար, մահացու) և այլն: Խոսքիմասային տարարժեքություն դրսևորող կայուն կապակցությունների իմաստաարժեքային իրացումները կատարվում են խոսքային միջավայրում, ինչպես՝ 1. Մի որք *նման Յուդայի ...* նման նմա զտցի (Փարպ., 71): 2. Որոշեալ ճեղքեսցի և նա *նման Յուդայի* (ն. տ., 53):

---

[19] Ներխոսքիմասային և միջխոսքիմասային տարարժեքության մասին հանգամանորեն տե՛ս *Լ. Մ. Խաչատրյան,* Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, էջ 84-201:

**Անվանողական կայուն կապակցությունների դասակարգումն ըստ ձևաբանական արժեքի**

| Գոյականի արժեք ունեցող ԿԿ | Ածականի արժեք ունեցող ԿԿ | Բայի արժեք ունեցող ԿԿ | Մակբայի արժեք ունեցող ԿԿ |
|---|---|---|---|
| լիճ հրոյ, բանք Ժողովողի, երկիր աւետեաց, այր զօրաւոր, աչք մտաց, աւազ աչք, մարգարէապետ Հօր, այրեցեալ զօտի, դաշն հաւատոյ | գեղեցիկ իբրև զլուսին, առատ քան զգինի, հոծեալ լեզու, լի զաւուրբք, ի բաց ընկեցիկ, հեղգ առ ուսումն | իբրև զծուխ պակասել, որպէս աղօթս առնել, ոտնհար լինել (իմ), հասանել յականջ, զուլամբ երթալ, երկիր պագանել | ձեռն ի ձեռն, ակն ի խոնարհ, պարզ սրտիւք, մերկ գլխով, ընդ մի բերան, գունակ ի խաղս գնդակաց, մի ըստ եզոջէ, ի լուր ականջաց |

***Վարժություններ***

*7. Հետևյալ կայուն կապակցությունները դասակարգե՛ք ըստ խոսքիմասային պատկանելության:*

Դէտ ունեմ (իմ), օրինակ իմն որպէս փոթորիկ, սրբասէրք իբրև զանմարմինս, կարգ եկեղեցւոյ, առ աչս, առանցիկ ճառ, տապանակ ուխտի, զնմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի, ընչատեացք իբրև զանկարօտս, յորդել (իմ) իբրև զհեղեղ անհուն, լիճ լուսոյ, յառաջ քան զմարմնով զալուստն Քրիստոսի, ժաման լինել (իմ), անաչառք իբրև զարդարադատս, ըստ օրինակի երիտասարդի, մինչև ի մահ, աշխատ առնել, իբրև զանխորհուրդս, երէց եկեղեցւոյ, հանգոյն մահու,

ժառանգաւոր եկեղեցւոյ, ապաստան առնել, յոյս կենաց, ըստ օրինակի տեառն մերոյ մեռանել (իմ), առ աչօք, կաթողիկէ եկեղեցի, Աստուած կենդանի, համեմատ Յիսուսի, այր զօրութեան, զահ տեառն գիտելով չափ, մտանել իբրև զբոց հնոցի, ըստ Արարչին հրամայելն, Գիրք Մնացորդաց, նման եդեման դրախտին, մինչև յաւիտեանս, զառն Աստուծոյ, իբրև զօձ թունաւոր, ազատ առնել, մթերք ոսկւոյ:

*8. Լ. Մ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր» աշխատությունից դո՛ւրս գրեք խոսքիմասային տարարաժեքություն ցուցաբերող կայուն կապակցություններ, որոնք դրսևորեն՝*

ա) գոյական // ածական երկարժեքություն,

բ) գոյական // մակբայ երկարժեքություն,

գ) ածական // մակբայ երկարժեքություն,

դ) գոյական // ածական // մակբայ եռարժեքություն:

## Ե. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Խոսքիմասային տարբեր արժեքներով հատկանշվող (անվանողական) կայուն կապակցությունները գրաբարում հանդես են գալիս շարահյուսական բազմազան կիրառություններով:

*1. Գոյականի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող* կայուն կապակցությունները գործածվում են որպես՝

*ա) ենթակա.*

Իսկ *Մխիթարիչն Հոգին Սուրբ* ուսուցէ ձեզ զամենայն (Յովh., ԺԴ, 114)։ Կամաւ չարչարի *Որդին Աստուծոյ* (Ագաթ., 229)։

*բ) Ստորոգելի.*

Կոստանդիոս *էր քրիստոնեայ ճշմարիտ* (Սեբ., 211)։ *Ուխտաւոր Աստուծոյ եղիցի* մանուկն անդստին յորովայնէ (Դատ., ԺԳ, 275)։

*գ) Որոշիչ.*

Զքեզ, սուրբ Հայր, և *զՈրդիդ* քո *միածին* զտէր մեր Յիսուս Քրիստոս, և զսուրբ Հոգիդ կենդանարար. խոստովանիմք արարիչ երկնի և երկրի (Փարպ., 61)։

*գ) Հատկացուցիչ.*

Եւ գրեալ՝ ոչ մրով, այլ Հոգւովն *Աստուծոյ կենդանւոյ* (Բ. Կորն., Գ, 187)։ Մեծ և բարձր է պատիւ *կաթողիկէ եկեղեցւոյ* քան զամենայն բարձրութիւնս սրբոցն (Ագաթ., 389)։

*դ) Բացահայտիչ.*

Զայս ամենայն զգործեցեալսն Երուանդայ պարգևէ մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, *որպէս* մտերմաց և *արեան կցորդաց* ազգին Արշակունեաց (Խոր., 167)։

*ե) Խնդիրներ.*

*Ուղիղ խնդիր.* Ի ձեռն որոց և մեք յընթեռնուլն զառ ի նոցանէ շարածս բանից՝ ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասիմք, .... յորժամ զայսպիսիս ընթերցասիրիցեմք *իմաստութեան ճառս* և զրուցատրութիւնս (Խոր., 10)։ Ի մէջ տանն ի ներքուստ կողմանէ պատրաստեաց, դնել անդ *զտապանակ ուխտին* Տեառն (Գ. Թագ., Զ, 370)։

*Անուղղակի խնդիրներ.* Յեկեղեցւոյ մանկանց սարկաւագ մի ապրեցաւ *յ*անհնարին *մահուն երկիւղէ* (Յհ. Կթ., 350)։ Եւ ի

միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս, և զարդարեցին զՏրդատիոս *ի զարդ կայսերական* (Ագաթ., 36)։ Ոչ միայն յոգիսն մխիթարեալ կացին *առ անե-րևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից,* այլ և մարմնոյ նեղու-թեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան (Եղ., 200) և այլն։

*գ) Պարագաներ.*

Այլ զի ասացեր, եթէ զքեզ *յանշէջ հուրն* արկանէ՝ ես զքեզ աստէն իսկ այրեցից շիջանուտ հրով. տեսցուք, քո Աստուածն զի՞ արասցէ (Ագաթ., 74)։ Քանզի ի բառնալ ազգին Արշակու-նեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն *օրհնօք մոգուց* (Եղ., 6)։ *Հոգւոյն աչօք* տեսանէ զաներևոյթ յստակ լոյսն ճառագայթից իմանա-լի արեգական (ն. տ., 110) և այլն։

*2. Ածականի խոսքիմասային նշանակությամբ արժեքա-վորվող* կայուն կապակցությունները նախադասության շա-րահյուսական դիտվածքում կատարում են ինչպես (անվա-նաբայական բաղադրյալ ստորոգյալի կազմում) ստորոգելիի, այնպես էլ որոշչային և պարագայական գործառույթներ։

*ա) Ստորոգելի.*

*Իբրև զմայրսն Լիբանանու բազումք եղիցին* (Ագաթ., 329)։ Բնաւ *այլ ընդ այլոյ լինի* իմաստն ամենայն (Փարպ., 161)։

*բ) Որոշիչ.*

*Երբեմն նախադաս կիրառությամբ.* Ցուցանելով նոցա *այլ ընդ այլ*ստութեամբ *(Եղ., 93):*

*Հիմնականում հետադաս կիրառությամբ.* Եւ էր սա այր *անհեթեթ անձամբ* և *գեղեցիկ տեսլեամբ* (Սեբ., 87): Վարսք նորա կռածոյք՝ *սեաւ իբրև զագռաւ* (Երզ., Ե, 704):

*գ) Ձևի պարագա.*

*Իբրև զարծաթ ընտիր* յամենայն ազգս ընդունողաց սփռեալ տարածեցաւ բանն (Փարպ., 33) և այլն:

*3. Բայի խոսքիմաստային նշանակությամբ արժեքավորվող* կայուն կապակցությունները խոսքային միջավայրում կատարում են տարբեր շարահյուսական գործառույթներ:

ա*) Պարզ ստորոգյալ.*

Հրապուրեալ *արկանէ ընդ վնասիւք* զանմեղն (Եզն., 62): Եւ զբազումս յարանց *ընդ սուր անցուցանէին* (Ղեւ., 7): Եւ ամենայն թագաւորութիւնք որ հակառակ կացին իշխանութեան նորա՝ *փշրեցան որպէս զանօթ բրտի* (ն. տ., 143): Եւ անպատժելի մահուամբ *բառնայցեն* զձեզ *ի կենաց* (ն. տ., 144): Իմ այդ տեղի, ուր դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի, թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է, ապա եթէ յաշխարհին իմ հասից, մեծամեծ *վրէժս խնդրեցից* ի քէն (Բուզ., 260): Մի՛ երկուցեալ զանգիտեացուք ի բազմութենէ հեթանոսացն և *մի՛* յահագին սրոյ առն մահկանացուի *զթիկունս դարձուցուք* (Եղ., 101): Արդ զայս *ա՛ծ զմտաւ* հանապազ, զայս յիշեա՛ միշտ (Մանդ., 137):

*բ) Բայական բաղադրյալ ստորոգյալ.* Քանզի *սկսաւ երթալ* Մուշկան Նիսալաւուրտ *զհետ* չար խրատուն Վասակայ (Եղ., 122):

*գ) Պարագաներ.*

Եւ *ի փախուստ դարձուցեալ* զթշնամիսն սատակէին (Ղեւ., 149): Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն զՔասաղ գետով ..... *Կռել կոփել զդուռն* Երուանդայ արքայի (Խոր., 199): Զի որ լաւ ոք *եկեալ յաշխարհ* մեռանէր ... զպատկերն ի նկարու հանէին (Եզն., 206) և այլն:

*4. Մակբայի խոսքիմաստային նշանակությամբ արժեքավորվող* կայուն կապակցությունները շարահյուսական միջավայրում կատարում են հիմնականում պարագայական գործառույթներ:

*ա) Տեղի պարագա.*

Արդ բարիոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ, և մեզ և ամենայն արարածոց՝ որ ի ներքոյ երկնից՝ յօգուտ և ի դարման, իբրև ճրագ մի *ի մեծի տան* ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ՝ առ ի զխաւարն և զստուերն զերկուց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ (Եզն., 11):

*բ) Ժամանակի պարագա.*

Եւ զել և զմուտ բարեկամացն որպէս ի *տուընջեան* նոյնպէս *և ի զիշերի* սահմանէր (Խոր., 91): Գերութիւն Հրէիցն *նախ քան զմարմնով գալուստն Քրիստոսի* եղև (Ղեւ., 54):

*գ) Ձևի պարագա.*

Եւ ոչ ինչ կամեցաւ ամենևին ունկն դնել նմա մարզպանն, զի *սրտի մտօք* կալեալ էր զպարսկական օրէնս (Եղ., 63): *Նման գայլոց* յարձակեցան յարարս իմ (Փարպ., 197):

*դ)Չափ ու քանակի պարագա.*

Վայրիկ մի ևս, *սակաւիկ մի* ևս կալցիս ժոյժ, և ահա հասեալ է օգնականութիւն (Բուզ., 264): Նա՝ որ այսպիսի սիրով և օրհնութեամբ լինին միաւորեալ, ի վերայ իրերաց *արեամբ չափ* մեռանին (Նարեկ. Երգ., 393-394):

*ե) Ստորոգելի.*

Հիրաւի *են իբրև զանասունս* (Ագաթ., 37):

***Վարժություններ***

*9. Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի համաբարբառից (Կազմեցին՝ Օ. Խաչատրյան և ուրիշներ, հհ. 1-3) դո՛ւրս գրեք բնագրային օրինակներ՝*

ա) ենթակայի գործառույթ ունեցող կայուն կապակցություններով,

բ) ստորոգյալի գործառույթ ունեցող կայուն կապակցություններով,

գ) գոյականական անդամի լրացումների գործառույթներ ունեցող կայուն կապակցություններով,

դ) բայական անդամի լրացումների գործառույթներ ունեցող կայուն կապակցություններով:

*10. ա) Արտահատիչ ընթերցե՛ք հետևյալ բնագրային հատվածը:*

*բ) Դո՛ւրս գրեք անվանողական կայուն կապակցությունները, որոշե՛ք նրանց խոսքիմասային պատկանելությունը և շարահյուսական գործառույթները:*

Նմուշ՝ *հրձիգ առնել* (հրկիզել) – բայական ԿԿ՝ պարզ ստորոգյալի գործառույթով (հմմտ. Եւ առ յոյժ յիմարութեան …. յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց, …. և զամենայն եկեղեցիս *հրձիգ արար*):

## ԵՂԻՇԷ
## ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Արդ որովհետև ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ[1], սկսցուք ուստի արժան է սկսանել, թէպէտ և ոչ յօժարիցեմք զթշուառութիւն ազգիս մերոյ ողբալ: Այլ ոչ ըստ կամաց արտօսրալիր ողբովք ճառագրեմք զբազում հարուածս՝ յորում[2] պատահեցաք և մեք իսկ ականատեսքլինելով:

Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց[3], տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուց և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին[4], սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, և կռուէր մինչեւ յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վռամշապհոյ: Եւ իբրև զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և զանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի: Վասն որոյ և աստուածպաշտութիւնն բարձրազլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբանց տէրութեանն Շապհոյ արքայից արքայի մինչև յամն

երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, և ելից զնա իբրև զպատկանդարան դեղեալ նետիւք: Եւ սկսաւ եղջեւր ածել անօրէնութեամբ, զոռոզանայր, և զոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի, և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իւր զհաւատացեալքս ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղասէր կենօք:

Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն և արիւնհեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, եթէ յո՞ թափեցից[5] զդառնութիւն[6] թիւնաւոր[7], կամ ո՞ւր բացատրեցից[8] զբազմութիւն նետիցն: Եւ առ յոյժ յիմարութեան[9] իբրև զգազան կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց, եհար մինչ ի քաղաքն Մծբին, և բազում զաւառս Հոռոմոց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի, և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին:

Իսկ երանելին Թէոդոս կայսր, քանզի էր խաղաղասէր ի Քրիստոս, ոչ կամեցաւ ընդ առաջ նորա ելանել պատերազմաւ. այլ այր մի Անատոլ անուն[10], որ էր նորա սպարապետ արևելից, առաքեաց առ նա բազում գանձիւք: Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան[11] և էին ի քաղաքի կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա: Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա, և արգել զնա ի բազում բարկութենէն, և դարձաւ[12] անդրէն ի քաղաքն իւր Տիզբոն (I յեղանակ, էջ 5-7):

1. *Յաննախանձ բոյոց բարուց բնութեանդ* – քո աննախանձ բարք ու բնությունից:

2. *Յորում* – այստեղ՝ *որոնց մեջ:*
3. *Ի բառնալ ազգին Արշակունեաց* – երբ Արշակունյաց ցեղը վերացավ:
4. *Ոչ ընդ նովին օրինօք մտանէին* – ովքեր չէին ընդունում նույն կրոնը:
5. *Յո՞ թափեցից* – ո՞ւմ վրա թափեմ (հմմտ. ո՞ւմ վրա թափի):
6. *Ջղառնութիւն* – այստեղ՝ *դառը*, հմմտ. *զբազմութիւն* – այստեղ՝ *բազում:*
7. *Թիւնաւոր* – կամ՝ *թիւնից* (թույներս, հմմտ. թույները):
8. *Ո՞ւր բացատրեցից* – ո՞ւր արձակեմ (հմմտ. ո՞ւր արձակի):
9. *Առ յոյժ յիմարութեան* – սաստիկ հիմարության պատճառով:
10. *Անատոլ անուն* – Անատոլ անունով:
11. *Վասն քրիստոնէութեան* – քրիստոնյա լինելու պատճառով:
12. *Դարձաւ* – վերադարձավ: Այլ օրինակում՝ *դարձոյց* – վերադարձրեց:

*11. Արտահայտիչ ընթերցե՛ք հետևյալ բնագրային հատվածները: Դո՛ւրս գրեք կայուն կապակցությունները և որոշե՛ք՝*

ա) ներկառուցվածքային հատկանիշները,
բ) խոսքիմաստային արժեքները,
գ) շարահյուսական գործառույթները:

Նմուշ՝ *լուսաւոր որպէսական բիբ* ԿԿ՝
ա) նախադրությամբ ձևավորված,
բ) ածականական,

գ) որոշչի շարահյուսական գործառույթով (հմմտ. Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, *լուսաւոր որպէս ական բիբ*)։

Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց[1] նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիբ։ Իսկ շուրջ զմարդկութեամբն[2]՝ ծաղկոցաց և հոտաբանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական։ Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբր զարտեւանանց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ։ Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց[3]՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն։ Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս։ Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն գոզցես[4] ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. և արդարև բերրի և թագաւորական դաստակերտն (Խոր., II, ԽԲ, էջ 167)։

Արդ բարիոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ, և մեզ և ամենայն արարածոց՝ որ ի ներքոյ երկնից՝ յօգուտ և ի դարման, իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ՝ առ ի զխաւարն և զստուերն զերկուց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ[5]. բայց ինքն եթէ իցէ և եթէ չիցէ[6]՝ զայն ոչ գիտէ, զի չէ ի բանաւորաց և ի մտաւորաց. նոյնպէս և այլքն յանշնչոցն արարածոց։ Եւ թէ ջուր, թէ հուր, թէ երկիր, թէ օդ, թէ իցեն եւ թէ չիցեն՝ զայն ոչ գիտեն, և զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան՝ անդադար մատուցանեն, վարելով այնր[7]՝ որ

կազմեացն զնոսա: Եւ մեք ոչ անարգեմք զնոսա, և ոչ պաշտօն մատուցանեմք նոցա. այլ հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա և զյօրինիչ, զի մեզ ի պէտս են, և կարգչին իւ- րեանց ի փառս:

Զիա՞րդ պաշտիցեմք զարեգակն, որ մերթ կոչի իբրև զծա- ռայ առ ի սպասն՝ յոր կարգեցաւ՝ հասանելոյ, և մերթ երթայ ղօղէ իբրև զարհուրեալ, և տայ տեղի խաւարին լնուլ զմիջոց ի մեծի տանս և ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ՝ առ ի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից. յայտ ա- րարեալ եթէ. «Չեմ ես արժանի պաշտաման, այլ այն՝ որ զիս և զամենայն տիւ լուսաւոր պահէ, և զցայգ ղօղեցուցանէ, և եր- բէք երբէք խաւարեցուցանէ» և իբրև խօսուն բերանով ան- շշունջն բողոքէ՝ եթէ «Չեմ արժանի պաշտօն առնլոյ, այլ պաշ- տօն հարկանելոյ»: Կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի, զրեթէ և մեռանի, և ապա սկիզբն առնու կենդանանալոյ, զի քեզ զյարութեան օրինակն նկարիցէ (Եզն., I, Գ, էջ 11-12):

1. *Յօրինեաց*– այստեղ՝ *կառուցեց:*
2. *Շուրջ զմարդկութեամբն*– բնակության շուրջը:
3. *Հարթութիւն դաշտաց*– հարթ դաշտերը:
4. *Գոզցես*–կարծես:
5. *Առ ի .... փարատելոյ*– վերացնելու համար, հմմտ. *առ ի ....հասանելոյ*–հասնելու համար:
6. *Եթէ իցէ և եթէ չիցէ*– գոյություն ունի՞, թե՞ ոչ:
7. *Վարելով այնր*–ղեկավարվելով նրա կողմից:

*12. Արտագրե՛ք գրաբար և աշխարհաբար համարժեք հե- տևյալ նախադասությունները, դո՛ւրս գրեք կայուն կապակ- ցությունները՝ վերջիններս ենթարկելով ձևակազմական-բա-*

* րականական վերլուծության (կառուցատիպ, խոսքիմաստային արժեք և շարահյուսական կիրառություն)՝ըստ Վենի գծապատկերի (դիագրամի) ուշադրություն դարձնելով լեզվական տարբեր գոյավիճակներում քննարկվող միավորների դրսևորած ընդհանրություններին և տարբերություններին:*

1. Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, ո՛րպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին (Եղ., 117) = Որովհետև ո՞վ կարող է պատմել ահավոր ձայների մեծ իրարանցումը, և թե ինչպես վահանավորների թնդյունն ու աղեղների լարերի ճայթյունն առհասարակ խլացնում էին բոլորի ականջները: 2. Ամենեքեան միահամուռ զերկբաւոր նախանձ բերելով՝ ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ, որ ոչ ճաշակեցին զաշխարհ (ն. տ., 200) = Բոլորը, միահամուռ երկնավոր նախանձով լցված, ամենևին պակաս չմնացին նրանցից, ովքեր աշխարհ չէին մտել: 3. Ոչ միայն յոգիսն մխիթարեալ կացին առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան (ն. տ.) = Ոչ միայն իրենց հոգիներում մխիթարված էին հավիտենական հույսի աներևույթ զորությամբ, այլև մարմնի նեղություններով էլ ավելի կրեցին ծանր բեռը: 4. Ջի թէ գազանք ահազինք են, և վիշապք և օձք և այլ ճճիք վնասակարք, և մարդն այնչափ հպարտացեալ է՝ մինչ ըստ աստուծոյ երկիւղին սահմանս արտաքոյ ելեալ անսաստէ, եթէ այնպիսի զարհուրեցուցիչք չէին՝ ո՞րչափ ևս առաւել չկայր երբէք յակաստանի (Եզն., 63) = Թեև կան ահռելի գազաններ, վիշապներ, օձեր և ուրիշ վնասակար սողուններ, սակայն մարդն այնքան գոռոզացած է, որ մինչև անգամ աստծու երկյուղի սահմաններից դուրս գալով՝

արհամարհում է. իսկ եթե այդպիսի զարհուրեցնողները չլինեին, որքան ավելի չէր մնա չափ ու սահմանի մեջ: 5. Զի որ չար ինչ է, նորա և ամենայն ինչ վնասակար է, և մորթ և միս. այլ նոցա որպէս զմորթն զգենումք, և ոչ վնասէ, և զմիսն եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր՝ ոչ վնասէր (ն. տ., 47) = Չէ՞ որ չարի ամեն ինչը վնասակար պետք է լինի՝ և՛ մորթին, և՛ միսը: Բայց, օրինակ, նրանց մորթին հագնում ենք, և չի վնասում, և եթե միսն էլ մեկի սիրտը վերցներ, և ուտեր, չէր վնասի: 6. Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նմա, իսկ Որմիզդ վասն նորա յո՞ր սակս առնէր. միթէ կասկա՞ծ ինչ ուստեք էր նմա, և այնր աղագաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել, միթէ յորմէ զորդի՞ն խնդրեաց, թէ գուցէ ընդ որդւոյն տալոյ՝ զնա բաժ առնուցու (ն. տ., 90) = Արդ եթե ինքը զոհ էր անում նրա (Որմիզդի) համար, որ նա ծնվի իրեն որդի, իսկ Որմիզդը ի՞նչ նպատակով պիտի զոհ աներ իր (Զրվանի) համար. մի՞թե Զրվանը որևէ տեղից կասկած ուներ և այն պատճառով էր պատվիրում նրան իր համար զոհ անել. մի՞թե նրանից (էր կասկածում), որից խնդրեց որդին՝ (մտածելով), թե որդին տալու դիմաց գուցե հատուցում պահանջի: 7. Զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ, եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն (ն. տ., 91) = Որովհետև հնարավոր չէ, որ մեկը լինելու սկիզբ առնի՝ առանց ուրիշից գոյացում ստանալու: 8. Պարտ է կրօնաւորին արեամբ չափ հակառակ կալ ընդդէմ մարմնական ցանկութեանց (ն. տ., 310) = Կրոնավորը պարտավոր է արյան չափ հակառակվել մարմնական ցանկություններին:


առանձնահատկություն
առանձնահատկություն
ընդհանրություն

ԱՄՓՈՓՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԻ



*Ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ*

*1. Արտահայտիչ ընթերցե՛լ և թարգմանե՛լ բնագրային հետևյալ հատվածը: Տեքստից դո՛ւրս գրել կայուն կապակցությունները և վերլուծե՛լ՝*

ա) ըստ անվանողական և հաղորդակցական տեսակների,

բ) ըստ նրանց արտահայտության դիտվածքում նախդիր-նախադրությունների առկայության կամ բացակայության,

գ) ըստ խոսքիմասային արժեքի,

դ) ըստ շարահյուսական կիրառությունների:

Նմուշ՝ *ունել (իմ) յանձին* (հանձն առնել) ԿԿ.

ա) անվանողական,

բ) նախդրավոր,

գ) բայական,

դ) պարզ ստորոգյալի գործառույթով (հմմտ. Իբրև ոչ *կալան յանձին* ամենեքին, ոչ ինչ կարի ստիպեաց):

## ԵՂԻՇԷ
## ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի, և յամենայն բանէ խռովի, և յամենայն իրաց դողայ. ե-րազագէտ է այնպիսին ի կեանս իւրում, և յանգիւտ կորուստն

յուղարկի ի մահուան իւրում: Որպէս և ասաց ոմն ի հնումն, մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ:

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ: Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն[1] զրկի ի կատարեալ կենաց: Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք: Որպէս մեծ է ոգի, քան զմարմին՝ այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց:

Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, և[2] մտօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումս. որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և յոր մեծն է քան զամենայն: Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ զոլ: Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, ո՛րչափ ևս առաւել առ հոգևորն…

Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն[3], և պատրաստեալ հուրն՝ մինչև ուրուք ի նա փչեալ[4]՝ վառումն նորա յայտնի իմացաւ երկիւղածացն Աստուծոյ, սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարութեանն. և անբժշկական վէրս յոգիս և ի մարմինս տեսանէր[5]:

Մերթ շանթէր զալարէր իբրև զօձ թիւնաւոր, մերթ պարզէր գոչէր իբրև զառիւծ զայրացեալ. գելոյր, գլորէր, տապալէր երկդիմի մտօք և զխորհուրդս կամացն կամէր կատարել: Քանզի ձեռն արկանել և ունել ոչ կարէր, - վասն զի ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա, - սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրսերս յաւագաց և զանարգս ի պատուականաց և

զտզէտս ի զիտնոց և զանարիս ի քաջ արանց. և զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր և զամենայն զարժանաւորսն յետս տանէր. մինչև զհայր և զոր-դի քակէր ի միմեանց…

Եւ ահա իշխանութիւն առեալ չարասէր սպասաւորացն, զի զչորս զինուորսն ի բուն աւազացն մատուսցեն ի փորձու-թիւն տանջանացն: Եւ զառաջեաւ դատեալ բազում հարուա-ծովք, նովին կապանօք անցուցին ի տեղիս արգելանին: Իսկ այլոցն խաբէութեամբ առ ժամանակ մի թողութիւն արարեալ, և զամենայն վնասուն պատճառս արկանէր զկապելովքն. և զայս առնէր սատանայական խրատուն:

Իսկ յետ երկոտասան աւուր հրաման տայր ընթրիս գործել առատութեամբ և աւելի քան զաւուրց սովորութիւն, և կոչէր զբազումս ի զինուորական քրիստոնէիցն: Եւ ի ժամ զահուն պատրաստութեան զիւրաքանչիւր տեղի շնորհէր նոցա զբազմականին. և սիրով խոնարհութեամբ խօսէր ընդ նոսա ըստ առաջնում կարգին, զի թերևս հաւանեսցին ուտել զմիս զոհեալ, զոր ոչ էր երբէք օրէն ուտել քրիստոնէից: Իբրև[6] ոչ կալան յանձին ամենեքին, ոչ ինչ կարի ստիպեաց, այլ հրա-մայեաց մատուցանել նոցա զսովորական կերակուրն, և ա-ռաւել զինեօքն յաւելոյր ի տաճարին զխրախութիւն[7]:

Եւ անտի ի դուրս ելեալ իր սրահին արքունի, արգելին զո-մանս ի նոցանէ ձեռս յետս կապելով, և զխոնջանունսն կնքե-լով և զգուշութեամբ պահելով՝ էր որ զերկուս աւուրս, և էր որ զերիս: Բազում և այլ ևս յանարժան հարուածս չարչարէին, զոր և ոչ ընդ գրով իսկ արժանի համարեցաք արկանել: Եւ զո-մանս ի նոցանէ հեռացուցին և քարշեցին յազնուական պատույն անարգեալ:

Եւ զունդս զունդս դարձեալ զումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր՝ յամուրս անապատին՝ ի մարտ պատերազմի[8] թշնամեացն արքայի. և բազմաց իսկ անդէն հասանէր վախճան մահու սրով: Եւ զամենեցուն զկարգեալ թոշակն նուազեցուցանէին, և քաղցիւ և ծարաւով տառապեցուցանէին զնոսա, և ձմերոցի տեղիս զդժնեայ վայրսն հրամայէին նոցա. և անարգս և վատթարս յաչս ամենեցուն զնոսա ցուցանէին (II յեղանակ, էջ 14-16, 20-21):

1. *Տզիտութիւն*– այստեղ՝ *տգետը:*
2. *Եւ*– այստեղ՝ *բայց:*
3. *Խորամանկութիւն խորհրդոյն*– խորամանկ մտադրությունը:
4. *Մինչև ուրուք ի նա փչեալ* – դեռ ոչ ոք նրա վրա չփչած:
5. *Անբժշկական վէրս յոգիս և ի մարմինս տեսանէր* – անբուժելի վերքեր էր պատրաստում հոգիների և մարմինների համար:
6. *Իբրև*- այստեղ՝ *երբ:*
7. *ի տաճարին զխրախութիւն*– սեղանի ուրախությունը:
8. *ի մարտ պատերազմի* – մարտի՝ պատերազմի համար:

*2. Ռ. Ս. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանից» դո՛ւրս գրեք կայուն կապակցությունների՝*

ա) բառային (հոմանշային) տարբերակներ,

բ) քերականական (ձևաբանական և շարահյուսական) տարբերակներ,

գ) ծավալային տարբերակներ:

*3. Կատարե՛լ բառաբանային աշխատանք գոյականական, ածականական, բայական և մակբայական կայուն կապակցությունների շուրջ՝ կազմելով միևնույն սկզբունքով խմբավորվող կապակցությունների շարքեր:*

*4. Գրաբարյան մատենագիրներից (ըստ նախընտրության) մեկ-երկուսի համաբարբառներից դո՛ւրս գրել անվանողական (միազգած և երկզգած) ու հաղորդակցական (միակազմ և երկկազմ) տասնական կայուն կապակցություն՝ համապատասխան բնագրային օրինակներով հանդերձ:*

*5. Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի համաբարբառից (Կազմեց՝ Գ. Թոսունյան) դո՛ւրս գրեք կայուն կապակցությունների բառային (հոմանշային) տարբերակներ՝ բնագրային օրինակներով հանդերձ:*

## *Հարցեր*

1. Որո՞նք են ազատ և կայուն կապակցությունները:
2. Ինչո՞ւ են կայուն կապակցություններն առանձնացվում որպես միջմակարդակային իրողություններ:
3. Ըստ հաղորդակցման գործընթացի հետ փոխհարաբերության՝ գրաբարի կայուն կապակցություններն ի՞նչ խմբերի են բաժանվում:

4. Որո՞նք են բառակապակցական կայուն կապակցությունների հիմնական կառուցատիպերը:
5. Կառուցվածքային և իմաստային ի՞նչ առանձնահատկություններ ունեն հաղորդակցական կայուն կապակցությունները: Որո՞նք են նրանց ամենակարևոր հատկանիշները:
6. Ներկառուցվածքային ի՞նչ յուրահատկություններ են դրսևորում գրաբարի կայուն կապակցությունները:
7. Ի՞նչ է տարբերակայնությունը: Հին հայերենի կայուն կապակցություններում ի՞նչ տարբերակներ են առանձնացվում:
8. Ըստ ձևաբանական դասակարգման՝ գրաբարի կայուն կապակցություններն ի՞նչ խմբերի են բաժանվում:
9. Ի՞նչ է խոսքիմասային տարարժեքությունը: Հին հայերենի կայուն կապակցությունները ձևաբանական ի՞նչ արժեքների համատեղումով կարող են հանդես գալ: Խոսքիմասային երկարժեք և եռարժեք ի՞նչ կայուն կապակցություններ գիտեք:
10. Խոսքիմասային այս կամ այն նշանակությամբ արժեքավորվող կայուն կապակցությունները շարահյուսական ի՞նչ կիրառություններ ունեն:
11. Ի՞նչ դեր ունեն գրաբարի կայուն կապակցությունները Ձեր քերականական, ընդհանրապես լեզվառճական գիտելիքների ձեռքբերման և հարստացման հարցերում:

***Անդրադարձ***

*Գործնական առաջադրանքների կատարում:*

*Վերլուծական աշխատանք.* բնագրային վերլուծություն:

Արտահայտիչ ընթերցանություն:

Վարժություններ:

*Հետադարձ կապ. բանավոր և գրավոր հիմնավորումներ, դատողություններ:*

*Բառարանային աշխատանք* դարձվածաբանական նյութի շուրջ: Կայուն կապակցությունների ցանկերի կազմում:

*Աշխատանք համաբարբառներով:*

*Հետադարձ կապ. գրավոր վերլուծություն:*

*Ուսումնական բանավեճ* (թեմա՝ *Կայուն կապակցություն-ների ձևակազմական-քերականական հատկանիշները գրաբարում և արդի հայերենում):*

## ***Գրականություն***

### ***Ա. Սկզբնաղբյուրների համառոտագրություններ***

1. Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց (Ամերիկեան ընկերութիւն Գրոց Սրբոց, Վիեննա, 1929):

*Առակ* – Առակք Սողոմոնի:

*Դատ.* – Դատաւորք:

*Երգ.* – Երգ երգոց:

*Թագ.* – Գիրք թագաւորութեանց Գ.:

*Ծննդ.* – Ծնունդք:

*Կորն.* – Թուղթ Պօղոսի առաքելոյ առ Կորնթացիս Բ.:

*Յովհ.* – Աւետարան ըստ Յովհաննու:

2. Մատենագրական երկեր և այլ բնույթի գործեր

*ԱԲ* - Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1852:

*Ագաթ.* – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի, Երևան, 1983:

*Բուզ.* – Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, բնագիրը Ք. Պատկանյանի, Երևան, 1987:

*Եզն.* – Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, Թիֆլիս, 1914: Աղանդների հերքումը, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970:

*Եղ.* – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան), Երևան, 1957: Վարդանի և հայոց պատերազմի մասին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1994:

*Խոր.* – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981:

*Ղեւ.* – Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887:

*Մանդ.* – Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի Ճառք, Վենետիկ, 1860:

*Յհ. Կթ.* – Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

*Նարեկ. Երգ.* – Գրիգորի Նարեկայ Վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1827 (Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի, էջ 389-487):

*Սեբ.* – Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի, Թիֆլիս, 1913, Երևան, 1939:

*Փարպ.* – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, Թիֆլիս, 1907:

### *Բ. Տեսական գրականություն*

1. *Աբրահամյան Ա. Ա.,* Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976:
2. *Այտընեան Ա.,* Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ եւ յաւելուածով, Վիէննա, Մխիթարեանց տպարան, 1866, Ե., Եր. համալս. հրատ., 1987:
3. *Բագրատունի Ա.,* Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1852:
4. *Բադիկյան Խ. Գ.,* Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986:
5. *Բեդիրյան Պ. Ս.,* Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., ՀՊՄԻ, 1990:
6. *Թումանյան Գ. Բ.,* Գրաբարի նախադրությունները (V-XI դդ.), Լեզվի և ոճի հարցեր, VII, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:
7. *Խաչատրյան Լ. Մ.,* Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996:

8. *Խաչատրյան Լ. Մ., Ավետիսյան Լ. Ն.,* Համեմատութ-յուն-դարձվածային արտահայտությունները հայերե-նում (V-XVI դդ.), Ե., «Զանգակ» հրատ., 2015:
9. *Խաչատրյան Լ. Մ., Թումնյան Գ. Բ.,* Գրաբարի դասա-գիրք, Ե., «Զանգակ-94» հրատ., 2004:
10. *Համբարձումյան Վ. Գ.,* Գրաբարի ձեռնարկ, Ե., Էդիթ Պրինտ, 2018:
11. *Մկրտչյան Է. Ս.,* Գրաբարի դասընթաց. ուսումնաօ-ժանդակ ձեռնարկ, Ե., «Մանկավարժ» հրատ., 2008:
12. *Չամչեանց Մ.,* Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1843:
13. *Քոսյան Վ. Ա.,* Գրաբարի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:
14. *Жуков В. П.,* Русская фразеология, М., Изд-во “Высшая школа”, 1986.
15. *Мокиенко В. М.,* Славянская фразеология, М., Изд-во “Высшая школа”, 1989.
16. *Шанский Н. М.,* Фразеология современного русского языка, М., Изд-во “Высшая школа”, 1985.

### *Գ. Բառարաններ*

1. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Անթիլիաս, 1988:
2. *Խաչատրյան Լ. Մ.,* Գրաբարի բացատրական բառա-րան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Ե., «Զանգակ-97» հրատ., 2003:
3. *Խաչատրյան Լ. Մ.,* Գրաբարի ուսումնական բառարան, Ե., «Զանգակ» հրատ., 2013:

4. *Ղազարեան Ռ. Ս.,* Գրաբարի դարձուածաբանական բառարան, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2012:
5. *Ղազարյան Ռ. Ս.,* Գրաբարի բառարան, հհ. Ա-Բ, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2000:
6. *Մալխասեանց Ս.,* Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., «Հայպետհրատ», 1944-1945:
7. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հհ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837:

### *Դ. Համաբարբառներ*

1. Համաբարբառ *Ագաթանգեղայ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեցին՝ Օ. Խաչատրյան և ուրիշներ), հհ. Ա-Բ, Ե., 1973:
2. Համաբարբառ *Փ. Բիւզանդացւոյ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեց՝ Վ. Գևորգյան), հհ. 1-3, Ե., 1974-1978:
3. Համաբարբառ *Եզնկայ Կողբացւոյ* «Եղծ աղանդոց» երկի (Կազմեց՝ Գ. Թոսունյան), Ե., 1972:
4. Համաբարբառ *Եղիշէի* «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի (Կազմեց՝ Լ. Գուլգազարյան), հհ. 1-2, Ե., 1974-1978:
5. Համաբարբառ *Մ. Խորենացւոյ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեցին՝ Օ. Խաչատրյան և ուրիշներ), հհ. 1-3, Ե., 1975-1976:
6. Համաբարբառ հին եւ նոր կտակարանաց, Աշխատասիւրութիւն *Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցւոյ,* Երուսաղէմ, 1895:

7. Համաբարբառ *Ղեւոնդեայ վարդապետի* «Պատմութիւն» երկի (Կազմեց՝ Պ. Բեդիրյան), Ե., 1978:
8. Համաբարբառ *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեց՝ Ս. Ղազարյան), հհ. 1-3, 1976-1983:
9. Համաբարբառ *Սեբէոսի* «Պատմութիւն Սեբէոսի» երկի (Կազմեց՝ Գ. Խաչատրյան), Ե., 2004:
10. Համաբարբառ *Ղ. Փարպեցւոյ* «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկի (Կազմեց՝ Հ. Հովհաննիսյան), Ե., 1973:
11. Համաբարբառ *Ղ. Փարպեցւոյ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեց՝ Ալ. Մարգարյան), հհ. 1-3, Ե., 1975-1978:

*Ի միտ առցէ զառակս և զբանս խորհինս, զճառս իմաստնոց և զառակս նոցա:*

***Առակ. Ա***

## ԳՐԱԲԱՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանրապես կայուն կապակցությունները կարելի է դիտարկել ոչ միայն բաղադրիչների քանակային և քերականական առումներով, այլև հասկացական բովանդակության հայեցակետից: Ընդ որում, գրաբարի կայուն կապակցություններում ի հայտ եկող ոճերն ու դարձվածքներն «իրենց տարբեր իմաստներով հնարավորություն են ընձեռել բազմապիսի հասկացություններ առանց որևէ դժվարության արտահայտելու համար»[20]: Կայուն կապակցությունները այս կամ այն ժողովրդի հոգևոր մշակույթի պատմության ամենավառ դրսևորումներից են: Որևէ ժողովրդի լեզվամտածողության յուրահատկությունները, լեզվամշակութաբանության հայեցակետից կարևորվող ազգային առանձնահատկություններն առավելագույնս ցայտուն են դրսևորվում հատկապես խնդրո առարկա միավորներում:

Առհասարակ կայուն կապակցությունների իմաստաբանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդօրինակ կապակցությունները՝ որպես լեզվական միավորներ, ենթարկվում են համընդհանուր իմաստաբանական օրենքներին կամ կանոններին. այդպիսի կապակցությունները դասակարգվում են ըստ իմաստային տիպերի և իմաստային խմբերի, ինչպես նաև ունեն միմյանց հետ համակարգային իմաստային հարաբերությունների մեջ մտնելու ներունակություն: Գրաբարի կա-

[20] Տե՛ս *Ս. Ղ. Ղազարյան,* Հայոց լեզվի համառոտ պատմություն, էջ 137-138:

յուն կապակցությունները նույնպես կարելի է խմբավորել ըստ իմաստային առանձնահատկությունների՝ ըստ այդմ առանձնացնելով թե՛ անվանողական, թե՛ հաղորդակցական կայուն կապակցությունների *իմաստային տիպերն ու խմբերը,* ինչպես նաև անվանողական միավորների *իմաստային (ներկապակցական և միջկապակցական) հարաբերությունները:*

## Ա. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

*Ըստ իմաստային տիպերի (ըստ վերաիմաստավորման և ոչ փոխաբերական նշանակությունների)*՝ գրաբարի կայուն կապակցություններում հանդիպում են թե՛ *մասնակի* կամ *ամբողջական վերաիմաստավորումով* հանդես եկող միավորներ, թե՛ *փոխաբերական նշանակություններ չարտահայտող* կառույցներ:

**Կայուն կապակցությունների իմաստային տիպերը**

| **Վերաիմաստավորում չունեցող կամ ոչ դարձվածային ԿԿ** | **Վերաիմաստավորված-դարձվածային ԿԿ** |
| --- | --- |
| դրան երէց, վարազ նկարագիր մատանի, վաստակ արքունի, գեղեցիկ տեսլեամբ, չափ հասակաւ, ազեւոր աստղ, առաջս դնել, բազմաշահ լինել (իմ), դադար տալ, աւաջ ասել, վաղ քաջ, ըստ կարգի, անդէն ի սկզբանէ, ի միում վայրկենի | խօսք հաւու, լիճ լուսոյ, իբրև զխարիսխ հաստատուն, զօրէն վարդի, ձեռն ի ձեռն, բարձր պարանոց, պաշտօն առնել, կոծ ջերմացուցանել, մեծամեծս փքալ, արև կրել, իբրև զշուն անպիտան ընդ վայր հաջել, որպէս ի խաւարէն զերծեալք ի լոյս |

*1. Ոչ դարձվածային կայուն կապակցություններ*

*Վերաիմաստավորում չունեցող (ոչ դարձվածային) կայուն կապակցություններն* իմաստային տեսակետից տրոհելի են. ունեն իմաստային պատճառաբանվածություն: Նրանց բաղադրիչ բառերը գործածվում են իրենց սովորական բառային իմաստներով: Այդ կարգի կապակցությունները բնութագրվում են պատրաստի վերարտադրելիությամբ՝ ի հակադրություն ազատ բառակապակցությունների, որոնք ձևավորվում են խոսելու ընթացքում[21]: Այդպիսի միավորներ ի հայտ են գալիս թե՛ անվանողական (*աղեղն երկնից* = ծիածան, *թագ առնուլ* = թագ կրել, թագավորել, *ծախս ծախել* = ծախս անել, *ըստ կամի* = ուզածի պես), թե՛ հաղորդակցական (*Գինի ուրախ առնէ զմարդ* = Գինին մարդուն ուրախացնում է: *Թէ թշնամւոյն չաղօթես որպէս քեզ, ապա լաւ է չաղօթել* = Եթե թշնամուդ համար չես աղոթելու այնպես, ինչպես քեզ համար, ապա լավ է չաղոթել) կայուն կապակցությունների շրջանակներում:

*2. Դարձվածային կայուն կապակցություններ*

*Կայուն կապակցությունների բաղադրիչների մասնակի* կամ *ամբողջական վերաիմաստավորումը* կապակցությունը

---

[21] Լեզվաբանական գրականության մեջ կայուն կապակցությունների շրջանակներում առանձնացվում են հետևյալ տեսակները՝ 1. բաղադրյալ անվանումներ, 2. դարձվածային արտահայտություններ, 3. ոչ փոխաբերական հարադրական բայեր, 4. դարձվածքներ (տե՛ս *Պ. Մ. Բեդիրյան,* Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, էջ 5): Վերաիմաստավորում չունեցող, սակայն պատրաստի վերարտադրելի կայուն կապակցությունները մասնագիտական գրականության մեջ կոչվում են դարձվածային արտահայտություններ (տե՛ս *Պ. Մ. Բեդիրյան,* Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, էջ 31: *Ա. Մ. Սուքիասյան,* Ժամանակակից հայոց լեզու, Ե., Եր. համալս. հրատ., 1999, էջ 304):

դարձվածք դիտելու կարևորագույն պահանջներից մեկն է: Ընդ որում, առհասարակ ամբողջական վերաիմաստավորմամբ կայուն կապակցությունները մասնագիտական գրականության մեջ կոչվում են *իդիոմներ* կամ *իդիոմատիկ արտահայտություններ,* իսկ մասնակի նոր իմաստավորմամբ կառույցները՝ *միաբնեռ դարձվածային միավորներ*[22]*:*

*ա) Միաբնեռ դարձվածային միավորներ*

*Մասնակի վերաիմաստավորում ունեցող* կամ *միաբնեռ դարձվածային միավորները* հատկանշվում են *դարձվածայնորեն կապված անդամի (անդամների)* առկայությամբ: Բառի դարձվածայնորեն կապված իմաստը կապակցության կազմում և նրա շնորհիվ ձեռք բերված իմաստն է[23]: Այդ կարգի կապակցությունները բնութագրվում են *միակողմ* կամ *միաբնեռ իմաստային կախվածությամբ* և առկա են թե՛ անվանողական (*մարտիրոսական խորան* = մատուռ, *սպասավորական հոգիք*=հրեշտակներ, *հակառակ որպէս սպիտակ թխոյ* = չափազանց հակառակ՝ հակադիր, *ակնկառոյց լինել (իմ)* = հույս ունենալ, *ուշ առնել* = հետամուտ լինել, ջանալ), թե՛ հաղորդակցական (*Եղև ընտ դնել մտաց իւրոց* = Հիանալի եղավ: *Քանզի անպատում է և ի վեր քան զմիտս և զլեզուս մարդկան* = Խելքից՝ մտքից դուրս է: Աներևակայելի է) կառույցներում:

*բ) Իդիոմատիկ արտահայտություններ*

*Իդիոմներին* կամ *իդիոմատիկ արտահայտություններին* բնորոշ է *ամբողջական վերաիմաստավորումը,* ընդ որում, վերջինս կախված չէ նրանց բաղադրիչների առանձին ի-

[22] Տե՛ս *А. Г. Назарян,* Фразеология современного французского языка, էջ 64:

[23] Տե՛ս *О. С. Ахманова,* Словарь лингвистических терминов, М., Изд-во “Сов. энциклопедия ”, 1969, էջ 164, 503:

մաստներից: Առհասարակ որպես իդիոմներ առանձնացվում են *դարձվածային սերտաճումները* և *դարձվածային միասնությունները*[24], որոնք ևս հանդիպում են և՛ անվանողական (*խիստ պարանոց* = համառություն, *եղջիւր անել* = հոխորտալ, գոռոզանալ, *բացաւ գլխով* = անամոթաբար), և՛ հաղորդակցական արժեքով կապակցություններում (*Զի՞նչ է յարդ աւ ցորենաւ* = Իրական արժեքն անցողիկ բաներից տարբերել է պետք: *Հրոյ ընդ խոտոյ ոչ ամուսնութիւն լինի* = Իրար հակառակ բաները միմյանց ոչնչացնողներ են):

**Դարձվածային կայուն կապակցություններ**

| Միաբնեռ ԿԿ | Իդիոմատիկ ԿԿ |
|---|---|
| **Անվանողական.** ըստ աչս, անձին հրամայել, աշխատ առնել, թիկունս դարձուցանել, լուսաւոր որպէս ական բիբ, իբրև զամպ թռչել, արագ քան զմիտս, առաջի դնել, ակն դնել ումեք, իբրև սաղմոս ասել, իջանել իբրև զցօղ:<br>**Հաղորդակցական.** Ընկալարո՛ւք զգիտութիւն քան զոսկի ընտիր: Մի՛ խաբիր լրութեամբ որովայնի: Տո՛ւք զկայսերն կայսեր և զաստուծոյն աստուծոյ: Թէ ունիցիք հաւատս որչափ զհատն մանանխոյ: | **Անվանողական.** լիճ հրոյ, երկիր աւետեաց, իբրև ծով ի սաստիկ հողմոյ գալ ի ծփանս, փայլատակել իբրև յամպոյ մեծէ, որպէս հուր ինչ մոլեկան հրդեհի, լուծանել ուրեք, անբեդուն միտս ունել (իմ):<br>**Հաղորդակցական.** Զամենայն ծառ պտղովն ճանաչեմք: Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման: Որպէս ի ծովու ալեկոծիմք: Զշանթակէզ հրոյն ապրեցաւ: Ո՞վ է որ փուշ տնկէ՝ և խաղող կթիցէ. կամ որոմն սերմանիցէ՝ և ցորեան հնձիցէ: |

[24] Հմմտ. *Խ. Գ. Բաղիկյան,* Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, էջ 81:

*Վարժություններ*

*1. Հետևյալ անվանողական կայուն կապակցությունները դասակարգե՛ք ըստ երկթև (T–աձև) աղյուսակի:*

Անփոյթ առնել, կալ աչաց, մի ազգ, արտաքոյ մտաց, մայր հասարակաց, բանտարգել առնել, յականէ յանուանէ, գեղեցկագոյն քան զսիրամարգ, Գիրք Մնացորդաց, խօսս դնել, արտաքոյ կարգի, որդի կորստեան, խառնազնաց լինել (իմ), ի մեծի տան, սպասաւորել հրամանի, իբրև զսառն ձմերայնոյ հալել (իմ), այլ ընդ այլ, շնորհս առնել, դեն մազդեզանց, յաւիտենական Հայր, վաճառականութիւն բանից, անխալամ զէսք, նախանձ արկանել, ընդ աղօտս, սրտակաթ առնել, աւաչ ասել, հանդերձեալ հուր, աւազ աչք, արք աղեղանց, ակն ունել (իմ), ընդ բնաւ, յայս կոյս, տուիչ պարգեւաց, այլ ընդ այլոյ, ճառ արկանել, առ աչօք, զգալի աշխարհ, աչք հոգւոյ, խոհական հանճարով, ակն ի ճանապարհ, հանդէս հարցափորձի, առ յափոյ, իբրև զջահ վառել, հարցանել կենօք, անդ և անդր վաղվաղակի, որպէս կիսամեռք, տէգ աչաց, իբրև զկաւեղէն անօթ փշրել, ընդ ձեռամբ, յոգիս ապաստան, ամենայն իրօք, ի գումարտակի, հարուստ մի, ջանալ հողմոյ, լու առնել, ողն բեկանել, իբր դառնութիւն եղեալ ընդ քաղցու:

| *Ոչ դարձվածային անվանողական ԿԿ* | *Դարձվածային անվանողական ԿԿ* |
|---|---|
| | |

*2.*

*ա) Բարձրաձայն կարդացե՛ք և թարգմանե՛ք հետևյալ բնագրային հատվածները:*

*բ) Տրված հատվածներից դո՛ւրս գրեք կայուն կապակցությունները և որոշե՛ք նրանց տեսակներն ըստ բաղադրիչների իմաստային կախվածության աստիճանի (վերաիմաստավորված և առանց վերաիմաստավորման կայուն կապակցություններ):*

*Նմուշ՝ Որդի Աստուծոյ* (Աստծո միածին որդին. Քրիստոս) - առանց վերաիմաստավորման ԿԿ:

*Ձայն շրջել* (ձայն հանել, լեզու բանեցնել, խոսել) - վերաիմաստավորված ԿԿ:

Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք[1] ի բազմութենէ հեթանոսացն, և մի յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմն ճշմարտութեան. և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ[2]. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք (Եղ., V յեղ., էջ 101 - 102):

Իսկ Շապուհ արքայ, առեալ զձեռանէ[3] նորա, շրջէր ճեմելով, ի չքմեղս առեալ զնա ածէր ի հայակողմն ի հողն հարեալ յատակն: Իսկ իբրև յայն տեղի հասանէր, և զհայ հողն կոխէր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր. սկսանէր խօսել և ասել. «Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ, տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Արտևանայ արքայի: Զի այժ-

միկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ»: Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զաւացեալսն….: Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել ի հայ հողն, ևս խստագոյն քան զառաջինսն բարբառէր….(Բուզ., IV, ԾԴ, էջ 258):

Իսկ յետ վախճանելոյն, կամ փախստական լինելոյն Նինոսի ի Կրետէ, որպէս հաւանեալ եմ[4], համարձակ պատուելով Շամիրամայ զախտն՝ առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգևաց, գալ առ նա[5] ի Նինուէ, կա՛մ առնուլ կնութեան և թագաւորել ի վերայ ամենայնի՝ որոց տիրէր և Նինոս, և կա՛մ կատարել զկամս ցանկութեան նորա և դառնալ մեծաւ պատարագօք և խաղաղութեամբ ի տեղի իւր: Եւ ի բազում անգամ երթևեկութեան հրեշտակագնացութեանն լինել, և յոչ հաւանել Արային, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ՝ ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց, և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց ի վերայ Արայի: Բայց որչափ դիմացն էր նշանակեալ[6], ոչ այնչափ ի սպանանել զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զբռամբածել, զի լցցէ զկամս ցանկութեան իւրոյ. զի առ յոյժ ցանկականի մոլեգնութեանն[7], ի բանսն որ զնմանէ՝որպէս ի տեսութիւն շամբշութեամբ վառեալ էր (Խոր., I, ԺԵ, էջ 48-49):

Հոգիդ քո ազդեալ մեծդ ողորմութեամբ, Ըստ յաւետարանին բժշկեցելոյ, Հրաշափառապէս բարեգործեցե՛ս[8], Բանդ կենդանի, Ինձ խօսողութիւն անսայթաքելի: ….Զծածկեցեալն ի տեսողութեանց Զչարագործին թիւնիցն[9] այտուցմունս, Քո

ինքնաւորդ զօրեղութեամբ[10], Որդի՛ Աստուծոյ, Գթածաբար առողջացուսցես[11] (Նար., Բան ԺԸ, Բ, էջ 80-81):

1. *Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք*– չերկնչենք:
2. *Խնդութեամբ սրտիւ* – սրտի խնդությամբ:
3. *Ձձեռանէ* – ձեռքից:
4. *Հաւանեալ եմ*– այստեղ՝ *համոզված եմ:*
5. *Առնա*– այստեղ՝ *իր մոտ:*
6. *Դիմացն էր նշանակեալ* – դեմքից երևում էր:
7. *Առ յոյժ ցանկականի մոլեգնութեանն* - մոլեգին ցանկությանպատճառով:
8. *Բարեգործեսցես* – այստեղ՝ *շնորհի՛ր:*
9. *Չչարագործին թիւնիցն*– եղեռնագործի թույնից:
10. *Քո ինքնաւորդ զօրեղութեամբ*– քեզ հատուկ քո կարողությամբ:
11. *Առողջացուսցես*– այստեղ՝ *առողջացրո՛ւ:*

## Բ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

*Ըստ իմաստային խմբերի*՝ գրաբարի կայուն կապակցություններում առանձնացվում են թե՛ անվանողական, թե՛ հաղորդակցական միավորների թեմատիկ մի շարք ենթախմբեր, որոնց հիմքում ընկած են օբյեկտիվ իրականության և հասարակական կյանքի տարբեր դրսևորումներ:




*1. Կենդանական աշխարհ.*

*ա) Անվանողական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *խոզքհաւու, գազանի վայրէ, հաւահար լինել (իմ), գազանամարտ լինել (իմ):*

*բ) Հաղորդակցական կայուն կապակցություն. Անգործ մեղու՝ լաւ է քան զժիր պիծակ:*

*2. Բնության երևույթներ.*

*ա) Անվանողական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *հիւրամեծար գետոց, աղեղն երկնից, ատեան հողմոյ, իջանել իբրև զցօղ, զտուընջեան և ի գիշերի, ի ծովէ մինչև ի ծով, բակ արեգական, զհասարակ գիշերաւ:*

*բ) Հաղորդակցական կայուն կապակցություն. Ժամն ընդ երեկոյ կոյս էր խոնարհեալ:*

*3. Բնական իրողություններ.*

*ա) Անվանողական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *մթերք որովայնի, կցորդ արեան, դառնալ աւուր, հակառակ որպէս քաղցր դառին, իբրև զփոշի մանր, որչափ յական թօթափել, իբրև զմարդիկ մեռանել (իմ), յոգիս ապաստան:*

*բ) Հաղորդակցական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *Մարդկաբար զկեանս ընտրեցէ՛ք քան զմահ: Կենդանի՛ է անձն քո: Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ: Իբրև յաղբերականց հոսէին յաչաց իւրեանց:*

*4. Կրոնածիսական իրողություններ, հավատալիքներ, քրիստոնեական վարդապետություն.*

*ա) Անվանողական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *յաշտ առնել, դենի մազդեզն, շրջել ի հաւատոց, դրան երէց, պաշտօն առնել, ի ձեռն հաւատոց, խորան սրբութեան, զգենուլ բանին զմարմին, խայտալ զեկեղեցեաւ, ի խաչ ելանել, տապանակ վկայութեան:*

*բ) Հաղորդակցական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *Ըստ գործոց մերոց հատուցանէ մեզ Տէր: Ամենայն աշխատութիւնք վարձատրութեամբ են յԱստուծոյ:*

*5. Ռազմական գործ.*

*ա) Անվանողական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *զօրաժողով լինել (իմ), այրուձի առնել, հասանել ի թիկունս, գումարտակ դնել, ճակատ յարդարել, ճապաղիք արեան, քան զամենայն սուր երկսայրի, ընդ սուր հանել, արք աղեղանց, աւար առնուլ:*

*բ) Հաղորդակցական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *Պնդեա՛ իբրև այր զմէջ քո: Սահմանք քաջաց՝ զէնն իւրեանց:*

*6. Պետական և հասարակական կյանք.*

*ա) Անվանողական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *դուռն արքունի, սակ արկանել, բաժ առնել, վարազ նկարագիր մատանի, ըստ օրինաց, ընդ ձեռամբ, խազմ առնել, հարկս հարկանել, դատ դնել, առնուլ ի կնութիւն:*

*բ) Հաղորդակցական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *Հարկ զօրէնս լուծանէ: Որչափ մեծ է իշխանութիւն, դժուարին է մարդն: Բարեկամք մեծատանց բազումք: Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ:*

*7. Իմացություն և գիտություն.*

*ա) Անվանողական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *յիշատակացդպիր, հանել յայլ լեզու, դրօշեալ գիրք նուիրականք, բանին ծառայել, նախակարգ բանի, իմաստութեան ճառ, ընդ գրով արկանել:*

*բ) Հաղորդակցական կայուն կապակցություններ,* ինչպես՝ *Ծանի՛ր զքեզ: Ընկալարո՛ւք զգիտութիւն քան զոսկի ընտիր:*

**Կայուն կապակցությունների իմաստային խմբերը**

**Կենդանական աշխարհ**
խօսել հաւու, անգործ մեղու, աղբաբոյն որովայն, գազանակուր դառնալ, օձ աւազակ

**Բնության երևույթներ**
դառնալ աւուր, ընդ առաւօտն, իջանել իբրև զտեղատարափ ի վերայ խոտոյ, կիրք լուսնի, պայթիւն երկնից, ագեւոր աստղ

**Բնական իրողություններ**
դեղակուր լինել (իմ), օրինակ իմն կիսամահ, յարնէ անկանել (իմ), խորշ առնուլ առագաստից, պակասել ի կենաց

**Կրոնածիսական իրողություններ և քրիստոնեական վարդապետություն**
ի ձեռն հրեշտակաց, մայր վանուց, Աստուածեղէն գիրք, ծունր կրկնել, կնիք առնուլ, կալ յաղօթս, պատարագ մատուցանել, ահեղ դատաստան

**Պետական և հասարակական կյանք**
արուեստաւոր գործաւոր, արքունական ճանապարհ, աղ կնքեալ, քաղաք ամարաստանի, մայր քաղաքաց, աշխարհագիր առնել, թուխ զգենուլ, ծաղր և այպն առնել

**Ռազմական գործ**
այրընտիր լինել (իմ), կռել դաշինս, դակիշ ածել, անկանել (իմ) ի ձեռն սրոյ, կապարճս դարձուցանել, զօր հատանել, վարել յաւարի

**Իմացություն և գիտություն**
վաճառականութիւն բանից, թևամուխ միջամուխ լինել (իմ), աւազ աչք, հասուցանել ի գիտութիւն, ի բերանոյ աւանդել, գրով դրոշմել, զգրովք գալ, դնել գիրս, ոճով երկրորդել, ընթերցակից լինել (իմ)

*Վարժություններ*

*3. Տրված կայուն կապակցությունները ենթարկե՛ք իմաստային դասակարգման՝ առանձնացնելով հետևյալ խմբերը՝*

ա) կենդանական աշխարհ,

բ) բնության և բնական երևույթներ,

գ) կրոն,

դ) իմացություն և գիտություն,

ե) ռազմական գործ,

զ) պետական և հասարակական կյանք:

Իբրև ոչխարս, ոգեղն զչար, յարնելս կոյս, կռել կոփել զդուռն, քան զհողմ թեթև, որպէս զաղեղն հաստ, խոզի նման, Օրհնութիւն օրհնութեանց, թագ ի գլուխ, իբրև զաստեղս բազմանալ, ակն արևու, հաճ և հաւան, զհետ մտանել որպէս առիւծ ընդ նապաստակ, ըստ նմանութեան ամպոյ հոսել, դարձուցանել զսուր ի պատեան, թափել հրոյ, զօրէն անասնոց, խանգար առնել, տեղ յերկրէ մինչև յերկին, քան զհիրամարգ, ըստ օրինին, զլեռան լեառն, ճռաքաղ առնել, ճակատ յուզել, լոյս առնուլ, տապաստ անկանել (իմ), քան զեզն պակասամտագոյն, ոգի բերել, պատգամս յղել, ըստ նմանութեան արագաթև արծուոյ, հակառակ որպէս սպիտակ թխոյ, խօսել (իմ) ի խաղաղութիւն, ի դուրս ուտչել (իմ) որպէս փայլատականաց ճառագայթք, ի յայտ բերել, արև կրել, բացաւ գլխով, ընդ ցից հանել, շանց գունակ, կայսերակերպ զարդ, որպէս Աստուած, շնորհս առնել, իբրև զէշ քարշել, նախ քան զմարմնով գալուստն Քրիստոսի, ըստ առիւծին գոչել, բարձրագլուխ կամակարութեամբ, արև տալ, նման մեղուի, զէր զհռչակելին և

զվեհն ամենայն քերթողաց Հոմերոս, խօսել (իմ) զոք ումեք, խորագէտք իբրև զօձս, յայգէ մինչև ցերեկոյ, նման գայլոց, ձաղածանակ առնել, որպէս լոյս առ խաւար, իբրև զխաշինս ցրուեալս և վայրավատնեալս, ճաշակել զաշխարհ, յուխտին կալ, վաստակ արքունի, իբրև զշուն մեռանել (իմ), զանձինս առ իմաստունս ունել (իմ):

*4.*

*ա) Արտահայտիչ ընթերցե՛ք և թարգմանե՛ք հետևյալ բնագրային հատվածները:*

*բ) Դո՛ւրս գրեք կայուն կապակցությունները՝ առանձնացնելով դրանք ըստ իմաստային (թեմատիկ) խմբերի:*

Նմուշ՝ *Իմացություն և գիտություն* իմաստային (թեմատիկ) խումբ. *նախակարգ բանի* (առաջաբան), *ուշ դնել* (մտքում դնել, նկատի ունենալ), *միջամուխ լինել (իմ)* (խորամուխ լինել) և այլն:

Ես եղի ընդ նմա ուխտ խաղաղութեան, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեանն ի գլխաւորութիւն այնմ[1], զոր աւետարանն կոչեն. նախ այն երդմանն ստեաց: Ես նմա բեւր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել նմա[2], և նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց: Իսկ ես կոչեցի զերիցունս եկեղեցւոյն Տիփոնի քաղաքի, և կարծեցի, թէ նոքա նենգութեամբ ինչ ետուն նմա զերդումն և ետուն ինձ ստել: Եւ պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս. իսկ ասէ ցիս[3] Մարի երէց գլխաւորն նոցա. ասէին՝ թէ մեք արդարութեամբ տուաք նմա զերդումն. բայց եթէ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր: Եւ ես նոցա ոչ լուայ. և ետու

հրաման՝ եւթանասուն զնոսա ի մի զուբ փողոտել, և զուսումնակիցս[4] նոցա հանել ընդ սուր։ Զաւետարանն՝ յոր[5] երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութիւն ուսմանց նոցա քրիստոնէութեանն, կապեցի շղթայիւք, և կայ ի գանձի իմում։ Բայց բանքն Մարեայ երիցոյ ուշ եղեն ինձ. և յիշեցի, զի ասէր՝ թէ մի՛ սպանաներ զմեզ, այլ ես գիտեմ՝ զի նոյն աւետարանն ածէ զԱրշակ արքայ ի ծունկս քո։ Աիաւասիկ բանք արդարութեամբ կատարեցան, զոր ասէրն….։ Բայց թէ գիտէի՝ թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում և ի հնազանդութեան բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանօք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհին» (Բուզ., IV, ԾԴ, էջ 254, 256)։

Առն, զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ։ ….Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն։ Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ և թեամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն։

….Առեալ այնուհետև երանելւոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան։ Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած և աստուածասէր, որում անուն էր[6] Շաբիթ, և ասպնջական հիւրամեծար գտեալ՝ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի։ Իսկ երանելւոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն ար-

կանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

....Բազում հարցափորձի և քննութեան զանձինս[7] պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ (Կոր., էջ 36-44):

1. *Իգլխաւորութիւն այնմ* – գլխավոր սրբության վրա:
2. *Նմա* – նրան:
3. *Ցիս* – Ինձ:
4. *Զուսումնակիցս* – կրոնակիցներին:
5. *Յոր* – որի վրա:
6. *Որում անուն էր* – որի անունն էր:
7. *Զանձինս* – իրենց:

*5. Բարձրաձայն կարդացե՛ք հետևյալ հաղորդակցական կայուն կապակցությունները և բացատրե՛ք նրանց իմաստները:*

1. Ձայն բազմաց, ձայն Աստուծոյ:
2. Նմանն զնմանն սիրէ:
3. Գովեսցէ զքեզ ընկերն՝ և մի քո բերան, օտարն՝ և մի քո շրթունք:
4. Ոչ ոք է՝ որ հրով հուր շիջուցանէ:
5. Որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունս տան լսել նմա:
6. Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց:
7. Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալ է:

8. Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի:
9. Որ ոչ լսէ ընկամբ, լուիցէ թիկամբ:
10. Բազումք են կոչեցեալք, և սակաւք ընտրեալք:

## Գ.ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես բառերին, այնպես էլ կայուն կապակցություններին բնորոշ է նրանց իմաստների դասակարգումն ըստ այս կամ այն հարաբերությունների, որոնք առկա են կա՛մ կայուն կապակցությունների ներսում՝ նրանց իմաստային կառուցվածքում, կա՛մ այդօրինակ միավորների միջև: Ըստ այդմ, գրաբարի կայուն կապակցությունների միջև առկա են *ներկապակցական* և *միջկապակցական իմաստային հարաբերություններ*[25]*:*

[25] Հմմտ. *Լ. Մ. Խաչատրյան, Լ. Ն. Ավետիսյան,* Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XVI դդ.), էջ 103:

**Կայուն կապակցությունների դասակարգումն ըստ իմաստային հարաբերությունների**

| Ներկապակցական իմաստային հարաբերություններ | | Միջկապակցական իմաստային հարաբերություններ | |
|---|---|---|---|
| **Մենիմաստ ԿԿ** | **Բազմիմաստ ԿԿ** | **Հոմանիշ ԿԿ** | **Հականիշ ԿԿ** |
| *սեաւ իբրև զագռաւ* = չափազանց սև, *Գիրք Ժողովողի* = Հին կտակարանի գրքերից մեկը, *զհասարակ գիշերաւ* = կեսգիշերին, *Օրհնութիւն օրհնութեանց* = Սողոմոն Իմաստունին վերագրվող «Երգ երգոց» գիրքը, *լի աւուրբք* = տարիքն առած | *դէմ յանդիման* = 1. դեմառդեմ, երես առ երես, 2. դեմուդեմ, ճիշտ դիմացը, 3. անձամբ, *երանի տալ* = 1. երանի ասել, 2. մեկին բարեբախտ համարել, *ակն արկանել* = 1. թեթևակի նկարագրել, 2. ակնարկել, *օրինակ իմն* = 1. որոշ չափով, 2. որպես օրինակ, *զօրէն վարդի* = 1. վառ կարմիր, 2. շատ գեղեցիկ | *ի վէգ գալ, խազմ առնել, կռուել ցմահ, արեամբ քրտամբ չափ մարտնչել (իմ)* = վիճել, պայքարել, մարտնչել, *գեղեցկագոյնքան զսիրամարգ, սքանչելի իբրև զտեսիլ հրեշտակաց* = շատ գեղեցիկ, չքնաղ՝ սքանչելի, *առ հարկի, յոչ կամաց* = չկամենալով, ակամա | *ի գումարտակի* = կռվի մեջ – *համ և հաւան* = հաշտ, միաբանված, *մտօքն աղքատագոյն* = խիստ հիմար – *խոհական հանճարով* = շատ խելացի, *իբրև զծուխ պակասել* = արագ սպառվել – *իբրև զաւազ բազմանալ* = արագ բազմանալ |

*1. Ներկապակցական իրողություններ*

*Ներկապակցական իմաստային հարաբերություններ* ի հայտ են գալիս միևնույն կայուն կապակցության շրջանակներում. լեզվական մեկ միավորի իմաստային կառուցվածքում կարող են լինել մեկ կամ մի քանի իմաստներ:

Ընդհանրապես կայուն կապակցությունները (մասնավորաբար դարձվածքները) մեծ մասամբ *միիմաստ* են (*Աստուածեղէն գիրք* = Աստվածաշունչ, *յորդել (իմ) իբրև գհեղեղ* = առատորեն հորդել, *Որդի Միածին* = Քրիստոս՝ որպես միակ ծնունդ Մարիամ Աստվածածնի, *արտաքոյ մտաց* = խելքը զցած, *անարատ ըստ մարդկանէ* = անբասիր, *չափ հասակաւ* =միջահասակ):

*Բազմիմաստությունը* մեկից ավելի իմաստների համատեղումն է լեզվական մեկ միավորի սահմաններում: Ընդ որում, *բազմիմաստ* կառույցների իմաստային դիտվածքում առկա մեկից ավելի իմաստային ճյուղավորումների համար կարևորվում է համատեղող, միավորող ընդհանուր տարրի առկայությունը: Գրաբարի կայուն կապակցություններում բազմիմաստություն առկա է առանձին դեպքերում (*առ հասարակ* = 1. հավասար չափով, 2. ընդհանրապես, 3. միանաբար, *տալ ակն* = 1. նայել, նկատել, 2. տեսության գնալ, այցելել, *այլ ընդ այլոյ* = *ա./մ.* 1. մի քանի տեղ ուրիշ բան, 2. խառն, շփոթ, խառնակ, խառնիխուռն, ներհակ, 3. դեպի այս ու այն կողմ, *չար առնել* = 1. վատ բան անել, 2. վնաս հասցնել, չարիք գործել):

Բազմիմաստ կայուն կապակցությունների իմաստային իրացումները կատարվում են խոսքային միջավայրում. *1.* Եւ

ապէս ի վերին օգնականութենէն զօրացեալ *առ հասարակ* զօրքն Յունաց և Հայոց, դիակամբք թշնամեացն լցին դաշտն ամենայն (Խոր., 304): *2.* Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմե-ծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, ո՛րպէս կոփիւնք վահա-նաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն *առ հասարակ* խլացուցանէին (Եղ., 117): *3.* Յանկարծակի փախուցեալք *առ հասարակ* սրանային գունդքն ամենայն Հայոց (Փարպ., 135):

## *Վարժություններ*

*6. Կատարե՛ք բառարանային աշխատանք՝ հետևյալ կա-յուն կապակցությունները խմբավորելով ըստ աղյուսակի:*

Գիրք Մնացորդաց, ունկնդիր լինել (իմ), ի վերայ հասանել, ընդ մէջ, կաթողիկէ եկեղեցի, քաջ ի բաց, որդի կորստեան, փաշաման կրել, օրէնք քրիստոնէութեանն, ըստգիւտ լինել (իմ), լուսաւոր վարդապետութիւն, կռել կոփել զդուռն, ձեռն տալ, տապանակ ուխտի, ի չքմեղս առնուլ, հեղգ առ ուսումն, բեկանել սրտի, տասնաբանեայ օրէնք, ընդ ակամբ հայել (իմ), հարուստ մի, խռիական հանճարով, հաշմ մտօք, վեր ի վերոյ, եւ անդր, Որդի Աստուծոյ, նման Յուդայի, փոխադրել (իմ) առ Քրիստոս, սպաս առնել, բանք Ժողովողի, յաչս դնել, նման ե-ղեման դրախտին, մայր եկեղեցի, առ մի նուագ, քան զիրեշ-տակս, տեղի տալ (ցիմեքէ՝ յումեքէ), զեր ի վերոյ:

| **Մենիմաստ ԿԿ** | **Բազմիմաստ ԿԿ** |
|---|---|
| | |

*2. Միջկապակցական իրողություններ*

Ըստ *միջկապակցական իմաստային հարաբերություննե-րի*՝ գրաբարի կայուն կապակցություններում ի հայտ են գա-լիս հիմնականում հոմանշային և հականշային միավորներ:

*Ա. Հոմանիշ կայուն կապակցություններ*

*Ինչպես հոմանիշ բառերին, այնպես էլ հոմանիշ կայուն կապակցություններին բնորոշ են տարբեր ձև, ընդհանուր նշանակություն ունենալը, իմաստային և ոճական տարբեր ե-րանգներ արտահայտելը, ինչպես նաև կապակցելիության տարբերություններ դրսևորելը:*

Առհասարակ թե՛ հոմանիշ, թե՛ հականիշ կայուն կապակ-ցությունների շարքի անդամների միևնույն խոսքիմասային պատկանելությունն անհրաժեշտություն է: Ըստ այդմ, հին հայերենում առանձնացվում են գոյականական, ածականա-կան, բայական և մակբայական հոմանիշ և հականիշ կայուն կապակցություններ:

*Ըստ իմաստային հատկանիշների և հուզարտահայտչա-կան տարբերությունների*՝ մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է հոմանիշ կայուն կապակցությունների երեք տեսակ՝ *1. հոմանշային տարբերակներ, 2. բուն հոմա-նիշներ, 3. ոճական հոմանիշներ*[26]*:*

[26] *И. И. Чернышева,* Фразеология современного немецкого языка, էջ 81:

*1. Նույնանիշ կայուն կապակցություններ*

*Ընդհանրապես կայուն կապակցությունների հոմանշային տարբերակները հաճախ միևնույն իմաստն են արտահայտում՝ հանդես գալով որպես նույնանիշներ* (*ի ձեռն հաւատոց // ի ձեռն հրեշտակաց* = հավատքով, հրաշքով, *ձայն ածել // ձայն ամբառնալ* = խոսել, *յառաջ սահմանել // յառաջագոյն սահմանել* = նախասահմանել, *սպիտակ որպէս զլոյս // սպիտակ քան զկաթն* = չափազանց սպիտակ, *զառ ի կող // զառ ի թափ*=զառիվայր):

*2. Համանիշ կայուն կապակցություններ*

*Բուն հոմանիշները կամ համանիշ կայուն կապակցությունները կազմվում են տարբեր բառային միջոցներով և ունենում են իմաստային ու հուզարտահայտչական տարբերություններ* (*առ աչս, վեր ի վերոյ* = ձևի համար, մակերեսայնորեն, երեսանց, արտաքուստ, *բակ արեգական, աղեղն երկնից* = արեգակի շուրջը եղած ծիրանի գոտի, ծիածան, *հաճ և հաւան, բարով իմն, սրտի մտօք* = սիրով, խաղաղությամբ, անկեղծությամբ, բարությամբ, *առ աչս պարծել, մեծամեծս փքալ, եղջիւր ածել* = արտաքուստ պարծենալ, հոխորտալ, գոռոզանալ, *ակնակառոյց լինել (իմ)* (խսկց.), *ոգւով չափ սիրել* (գր.) = աչք դնել, կարոտով նայել, աչքը վրան մնալ, չափազանց շատ սիրել):

## Հոմանիշ կայուն կապակցություններ

| Հոմանշային տարբերակներ (նույնանիշներ) | Բուն հոմանիշներ (համանիշներ) | Ոճական հոմանիշներ |
|---|---|---|
| ըստ մտի // ըստ կամի, հաճ և հաւան // հաւանք և հաւասաւք, ի վեր քան զմիտս // զերազանց քան զմիտս, տրտում մինչև ի մահ // անմխիթար մինչև ի մահ, հակառակ որպէս սպիտակ թխոյ // հակառակ որպէս քաղցր դառին, թոպամահ առնել // կտտամահ առնել, ի մատենի հարկանել // ի մատենի տալ, ասպատակ առնել // ասպատակ սփռել | առ խուռն – այլ ընդ այլոյ – ամենայն իրօք – ընդ յոլով եղանակս, գեղեցիկ տեսլեամբ – իբրև զշուշան, ի ձեռն գաւազանի – առ յափոյ – անդէն վաղվաղակի, զդողի հարկանել – ընդ ահիւ անկանել (իմ) – սարսուռ առնուլ, գելուլ զսիրտ – գալարել զաղիս, նկուն ելանել – յամօթի լինել (իմ), մինչև արևուն մտանելոյ – ընդ երեկոյս | դաշնաւոր լինել (իմ) (խսկց.) – դարձուցանել զսուր ի պատեան (գրք.), թշնամանս դնել (համագործած.) – ընդ երեսս թքանել (խսկց.), նման մեղուի (համագործած.) – իբրև զջորի (խսկց.), պիղծ իբրև զԵսաւ (գրք.) – լիրբ քան զամենայն շուն (խսկց.) |

*Վարժություններ*

*7.* Հետևյալ *կայուն կապակցություններից գտե՛ք և կողք կողքի գրե՛ք հոմանշային կառույցները (10 զույգ):*

Լուծանել զսանձս լեզուի, իբրև զիոտ կնդրկի, առնուլ զկերպարանս մահու, հզօր իբրև զկաղնի, զկապ բերանոյն արձակել, մրուր տալ, յակն առեալ սիրել, օրինակ իմն չարագոյն զազանի ինչ, ի հող դառնալ, զօրէն տարաշխարհիկ, իբրև զվէմ հաստատուն, ի հիացման լինել (իմ), յառաջ քան զՆոյ, զհետ մտանել, ի հնոց ժամանակաց հետէ, յետս ընկենուլ, ի վեր քան զլեզուս մարդկան, քան զամենայն խունկս անուշութեան, հալածական առնել, զէր քան զամենայն:

*8. Արտագրե՛ք հետևյալ նախադասությունները՝ ընդգծված բայական կայուն կապակցությունները փոխարինելով նախադասությունների բովանդակությանն ու ոճին համապատասխանող հոմանիշ կառույցներով:*

1. Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ, և ընդդիմակաց ամենեցուն, որք *ամբառնային զձեռն* միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց (Խոր., 32): 2. Ապա *զօրաժողով լինի* ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիւ հետևակ զօրաց. գայ հասանէ ի հիւսիսի յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ (ն. տ., 34): 3. *Փախստական լինի* Կադմոս առ Հայկ, քաջընթացիկս առաջի իւր առաքէ (ն. տ.): 3. Իսկ ի գրգռել միւսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ

տիկնոջն Շամիրամայ, *քինախնդիր լինել* մահուանն Արայի, ասէ. «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա, և կենդանասցի» (ն. տ., 50): 4. Վասն որոյ զիմոյ բազում յանցանացն *անտես արարի,* ձերոյ վշտացդ լինիմ վշտակից, և ողբամ զաներևոյթ վէր բեկման անձին ձերոյ (Մանդ., 131-132): 5. Յիշեա՛ զբանն ահեղ, թէ վայ որ ծիծաղիցին այժմիկ, զի նոքա սգայցեն. վայ որ խնդան այժմ, զի նոքա լացցեն և ողբասցեն. վայ որ *ըմպեն զինի յարբենալ,* և անոյշ իւղօք օծանին. վայ ձեզ մեծատանցդ՝ զի ընկալայք աստէն զհատուցումն բարութեան ձերոյ. զի բազում նեղութեամբ պարտ է *մտանել յարքայութիւնն աստուծոյ* (ն. տ., 136):

*Բ. Հականիշ կայուն կապակցություններ*

*Հականիշ կայուն կապակցությունները ձևով տարբեր կամ մասամբ տարբեր են լինում, սակայն կարևորը նրանցում առկա իմաստային հակադրությունը կամ բևեռայնությունն է:*

**Հականիշ կայուն կապակցություններ**

| **Ոչ լիարժեք հականիշներ** | **Լիարժեք հականիշներ** |
|---|---|
| կցորդ արեան – ի բացեայ, պատուական քան զոսկի – վատթարագոյն քան զշուն, ի ծածուկ – բարձրագլուխ կամակարութեամբ, իբրև տէր – իբրև զոչխար, բանիւք իւրեանց խոցել որպէս սրով – տալ թևս որպէս զաղաւնւոյ, արև կրել – առնուլ զհրաժեշտ մեղանչական կենցաղոյս, ձեռն տալ – խանգար առնել | մտօքն աղքատագոյն – խռհական հանճարով, հիւրամեծար զետոց – մայր հասարակաց, ի կամաց – յոչ կամաց, փոյթ առնել – անփոյթ առնել, ի մտի արկանել – մոռացօնս առնել, խրախ առնել – կոծ ջերմացուցանել, որպէս փախստէից հետամուտ լինել (իմ) – փախստեայ լինել (իմ), գալ ի ծնունդ – յաճիւն վախճանել, արև կրել – անկանել (իմ) յարևէ |

Հականիշ կայուն կապակցություններում իմաստային ա-ռումով առանձնացվում են՝

*1. Լիարժեք հականիշներ, որոնք ունեն բառային իմաստի լրիվ հակադրություն, առարկայական միանման հարաբերակցություն, ոճական միևնույն առանձնահատկությունը* (*իբրև տէր* = տիրաբար – *իբրև ծառայ* = ստրկամտորեն, *անհեղեղ անձամբ* = հաղթանդամ – *ցամաք մարմնով* = վտիտ, *իբրև զձիւն սպիտակել* = սաստիկ սպիտակել –*իբրև զածուխ սևանալ* = սաստիկ սևանալ, *յակն առեալ սիրել* = չափազանց շատ սիրել–*բերել ատելութիւն*=խիստ ատել):

*2. Ոչ լիարժեք հականիշներ, որոնք վերը նշված կողմերից որևէ մեկով տարբերություն են ցուցաբերում* (*ճակատ յուզել* (համազորձած.) = պատերազմ բորբոքել – *դարձուցանել զսուր ի պատեան* (գրք.) = խաղաղություն հաստատել, *ածել ի համբոյր և ի քծինս* (գրք.) = շողոքորթել – *թիկունս դարձուցանել* (գրք.) = արհամարհել, *իբրև ծով ի սաստիկ հողմոյ գալ ի ծփանս* (գրք.) = հանկարծակի ալեկոծվել՝ խռովվել – *լինել (իմ)իբրև զԵրուսաղէմ*(գրք.)=խաղաղվել:

### *Վարժություններ*

*9.* Հետևյալ *կայուն կապակցություններից գտե՛ք և կողք կողքի գրե՛ք հականշային կառույցները (11 զույգ):*

Ի բնէ, հրաժարել իբրև ի պղծոյ, քաղցր քան զմեղր, ակն առնուլ, տալ քաջալերս, թափել յերկրէ, անազան ուրեմն, զօրէն վարդի, գալ յաշխարհ, քան զչափ նկանակի միոյ, սպիտակ իբրև զեղեամն ի վերայ երկրի, արտ ևս քան զչափն, ապախտ առնել, ի հող դառնալ, պահել իբրև զբիբական, զօրէն

տղայոց, սեաւ իբրև զկապերտ այծեայ, զօրէն վաճառակա-նաց, դառնագոյն քան զլեղի, խոցոտել ի մահ, որպէս կենդա-նի ի գերեզմանի, դառնալ ընդ կրունկն:

*10. Արտագրե՛ք տրված նախադասությունները՝ ընդգծված կայուն կապակցությունները փոխարինելով նախադասութ-յունների բովանդակությանն ու ոճին համապատասխանող հականիշ կառույցներով:*

1. Եւ ահա վերաբերիմք ընդ քեզ ճախրելով, և իբրև բարձ-րաթռիչս եղեալ՝ զամենայն վնասակար մրրկածին օդովք ան-ցանիցեմք, և *փոքր ի շատէ* ծծելով յանապական վերին օդոցն՝ առնուցումք զզիտութիւն ի փրկութիւն անձանց և ի փառս ա-մենայաղթ եկեղեցւոյ (Եղ., 5): 2. *Կարգէր և կազմէր զճակատն* …. դէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ գետոյն (ն. տ., 116): 2. Եւ *մինչև ի մուտս արեգականն* անդադար լինէր գործ դառնութեանն (ն. տ., 118): 4. Եւ այս սովորեալ, որ *զչա-րութիւնն նիւթէր,* ուսուցանէր նմա ի տան և ի հրապարակս (Խոր., 92): 5. Եւ *առ ոտն հարեալ կոխեցէր* զհաւատս առաքե-լական եկեղեցւոյ. և *առ ոչինչ համարեցայք* զսրբութիւնս մարմնոյ և արեանն Քրիստոսի (Մանդ., 132): 6. *Իբրև զշուն կատաղեալ* զամենեսեան առհասարակ *խածանէ* (ն. տ., 136):

*11.*

*ա) Արտագրե՛ք գրաբար և աշխարհաբար համարժեք հետևյալ նախադասությունները, դո՛ւրս գրեք կայուն կա-պակցությունները:*

*բ) Կատարե՛ք գրաբար և աշխարհաբար համարժեք կա-յուն կապակցությունների համեմատական վերլուծություն՝*

*ըստ Վենի գծապատկերի (դիագրամի) ուշադրություն դարձնելով գրաբարից աշխարհաբար թարգմանական ընդհանրություններին և, մանավանդ, առանձնահատկություններին (1. կայուն կապակցության փոխարինում հոմանիշ բառով կամ ազատ բառակապակցությամբ, 2. կայուն կապակցության բառացի թարգմանություն աշխարհաբար համարժեքով, 3. կայուն կապակցության փոխարինում իմաստով մոտ այդ կարգի այլ կապակցությամբ):*

1. Եւ այնպէս շտապ տագնապի ի վերայ հասուցանէր, մինչև գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, դեռևս քաջ քաջ ի փախուստ դառնային (Եղ., 117) = Եվ այնպիսի տագնապ ու իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գնդի հաստատուն կազմակերպությունը քայքայվեց-ցրիվ եկավ, և նա, դեռևս պարտություն չկրած, փախուստ տվեց: 2. Ապա դէտակն ի վեր ամբառնայր Մուշկան Նիսալաւուրտ, քակեալ զոմանս տեսանէր ի գնդէն Հայոց, և զկնի մնացեալ ի հովիտս լերանցն (ն. տ.) = Ապա աչքերը վեր բարձրացրեց Մուշկան Նիսալավուրտը և տեսավ, որ Հայոց զորքից ոմանք բաժանվել և ետ են ընկել լեռների հովիտներում: 3. Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ միայն որ աւազագոյնքն էին, այլ զբազումս ի կրսեբազունաց անտի (ն. տ., 199-200) = Հինգ հարյուրի չափ անունանուն ճանաչում եմ ոչ միայն նրանցից, ովքեր ավագագույններից էին, այլև շատերին կրտսերագույններից: 4. Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, գիտասջի՛ր՝ զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ, և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ, զնոյն ճակատս և զնոյն թշնամու-

թիւն յուզէ (Բուզ., 256) = Որովհետև եթե հայկական հողի վրա խիստ լեզվով խոսի, իմացի՛ր, որ երբ հասնի Հայոց աշխարհը, հենց նույն օրը նույն լեզուն կբանեցնի, նույն պատերազմը կնորոգի քեզ հետ, նույն ճակատամարտերը, նույն թշնամություն կշարունակի: 5. Եւ զի ոչ ունին արմատս յանձինս, այլ առ ժամանակ մի են, ապա ի հասանել նեղութեան կամ հալածման վասն բանին՝ վաղվաղակի գայթակղին (Մարկ., Դ, 38) = Եվ քանի որ իրենց մեջ արմատ չունեն, այլ ժամանակավոր են, հետո երբ այն խոսքի համար նեղություն կամ հալածանք է լինում, շուտով գայթակղվում են: 6. Առ ոչինչ համարեալ զբազմութիւն զօրաց նորա (Խոր., 170) = Բանի տեղ չդնելով նրա զորքի բազմությանը: 7. Եւ եթէ մոզ իցէ, և չարի արարած զգազանսն վասն գազանութեանն ասիցէ, ի հասարակաց մտաց փաշաման կրեալ՝ ըմբերանեսցի (Եզն., 46) = Եվ եթե գազանները գազանության պատճառով չարի արարած համարողը մոզ է, հասարակական կարծիքից դատապարտվելով՝ կլռի: 8. Ասիցէ՝ թէ քան զհողմս թեթևք են (ն. տ., 90) = Կասի, թե քամիներից թեթև են:



*Խմբային աշխատանք*

*Տրվածբնագրային հատվածները ենթարկե՛լ լեզվաոճական վերլուծության և հիմնավորել՝ կատարելով հետևյալ խմբային աշխատանքը.*

**1-ին խումբ.** Հետևյալ բնագրային հատվածներից դո՛ւրս գրել մենիմաստ և բազմիմաստ կայուն կապակցությունները: Բազմիմաստ կառույցները բացատրե՛լ ըստ տվյալ կիրառության՝ նշելով բոլոր իմաստները (աղյուսակ 1):

Զոր և մեր ընդ հրամանին քում[1] ընկալեալ՝ յօժարութեամբ ձեռնարկեցաք զայս ինչ, որ է մխիթարութիւն սիրելեաց և յոյս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց, կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան, յառաջոյ տեսանելով զզօրագլուխն յաղթութեան, որ և ոչ ումեք[2] ոտնիար լիցի թշնամութեամբ, այլ ամենեցուն ուսուցանէ զիւր անպարտելի զօրութիւնն: Եւ ահա ո՛ ոք կամեսցի[3]՝ ընդունի իբրև զնահատակ առաքինի:

.... Ուստի և բազում սուրբ պաշտօնեայքն զուարթութեամբ կատարեսցեն զսպաս վիճակին իւրեանց, ի փառս Հօրն բոլորեցուն. ուր ընդ նմին[4] սուրբ Երրորդութիւնն ցնծացեալ բերկրիցի[5] յանտրտմական յիւրում էութեանն (Եղ., էջ 4-5):

Եւ ոչ ինչ կամեցաւ ամենևին ունկն դնել նմա մարզպանն, զի սրտի մտօք կալեալ էր զպարսկական օրէնս (ն. տ., III յեղ., էջ 63):

....Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեղօք Հայոց աշխարհին, ոչ երևեցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրև զշուն մեռաւ և իբրև զէշ քարշեցաւ (ն. տ., VI յեղ., էջ 140):

....Մի՝ զի յառաջ քան զՆինոսի ժամանակ թագաւորութեանն է, յորում ոչ ոք այսպիսի իրաց փոյթ յանձին ունէր. երկրորդ՝ զի ոչ հարկ ինչ և ոչ պէտք կարևորք էին նոցա՝ զազգաց օտարաց և զաշխարհաց ի բացեայ և զհամբաւս հինս և զզրոյցս նախնականս յիւրեանց թագաւորաց կամ մեհենից մատեանս գրել... (Խոր., I, ԺԴ, էջ 47):

....Սակաւ ինչ տեղի տայ ազգն Ալանաց, և գնացեալ անցանէ ընդ գետն մեծ Կուր, և բանակի առ եզերբ գետոյն ի հիւսիսոյ. և հասեալ Արտաշէս բանակի ի հարաւոյ, և գետն ընդ մէջ նոցա:

Բայց քանզի զորդի Ալանաց արքային ձերբակալ արարեալ զօրացն Հայոց ածեն առ Արտաշէս՝ զխաղաղութիւն խնդրէր արքայն Ալանաց, տալ Արտաշիսի զի՛նչ և խնդրեսցէ. և երդմունս և դաշինս ասէր հաստատել մշտնջենաւորս, որպէս զի մի՛ ևս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից[6] ելցեն յաշխարհս Հայոց (ն. տ., II, Ծ, էջ 177-178):

....Նա և ոչ մատենագրութիւնք Դիոդորի հուպ առ մեզ են, զի ի նմա պահելով զակն՝ անմոռաց անցանէաք ընդ բնաւն, զի մի ինչ ի մէնջ մնասցէ ի գլխաւորացն և ի պիտանեացն, և արժանի յիշատակի մերոց շարագրութեանց (ն. տ., III, Ա, էջ 257):

Ապա փոյթ ինձ Թովմայի, որ ոչ վերջոտնեալ կալայ ամօթով զյետին տեղին, այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս յայս, ձեռն արկեալ անհմաստաբար լի անհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթածութենէ: Բայց հրաման քո ճոխութեանդ ձգեաց զիս յայս մեծ ձեռնարկութիւնս, սակս որոյ[7] բացաձգեցայց արտաքոյ շաղակրատոյ լեզուաց փառամոլ ոգոց (Արծր., I, ԺԱ, էջ 122):

Աղյուսակ 1

| Մենիմաստ ԿԿ | Բազմիմաստ ԿԿ | |
|---|---|---|
| | *Բառարանային իմաստներ* | *Իմաստային իրացում տվյալ խոսքաշարում* |
| Նմուշ՝ *սրտի մտօք*– սրտանց, ամբողջ սրտով: | Նմուշ՝ *ոտնհարլինել (իմ)– 1. ն.* ընկածին աքացի տալ, *փխբ.* ընկածին ծաղրի ենթարկել, արհամարհել, չարախնդալ, *2. կ.* աքացի՝ հարված կրել, *փխբ.* նախատինքի՝ ծաղրի ենթարկվել, արհամարհվել: | Նմուշ՝ *1.* ....Որ և ոչ ումեք *ոտնհար լիցի* թշնամութեամբ (Եղ., էջ 4) = ....Որը ոչ ոքի թշնամությամբ չի *արհամարհի:* |

1. *Ընդ հրամանին քում*– քո հրամանի հետ:
2. *Ոչ ումեք*– ոչ ոքի:
3. *Ո՛ք կամեսցի*– ով կամենա:
4. *Ընդ նմին*– նրա հետ:
5. *Ցնծացեալ բերկրիցի* – ցնծա ու բերկրի:
6. *Ասպատակաւ հինից*– ավազակային հարձակմամբ:
7. *Սակս որոյ*– որի համար:

**2-րդ խումբ.** Գտնե՛լ և կողք կողքի գրե՛լ հետևյալ բնագրային հատվածում առկա հոմանշային կայուն կապակցությունները՝ նշելով նրանց իմաստային տեսակը (նույնանիշներ և բուն հոմանիշներ) (աղյուսակ 2):

Կարգէր և կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն ե-րեսս դաշտին[1] դէմ յանդիման Արեաց զնդին, առ ափն Տղմուտ գետոյն:

Եւ իբրև[2] այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կող-մանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանա-յին, և գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին, և ամ-բոխ աղաղակին երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչումն ձայնից զքարան-ձաւս լերանցն շարժէր: Ի բազմութենէ սաղաւարտիցն և ի փայլիւն պատենազէն վառելոցն իբրև նշոյլք արեգական հա-տանէին: Նա և ի շողալ[3] բազում սուսերացն և ի ճօճել բազմա-խուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք ե-ռային: Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, ո՛րպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթ-մունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին:

Անդ էր տեսանել[4] շտապ մեծի տագնապին և զաղէտս ան-բաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն՝ առ ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քանզի թանձրամիտքն հիմարէին և վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին և նահատակքն գոչէին: Եւ խումբ արարեալ ամենայն բազմու-թեանն՝ զգետն ի մէջ փակէին, և զանգիտեալ գունդն Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ զտեղեաւն զեռալ սկսան: Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի ի վերայ առեալ յարձա-կէին մեծաւ զօրութեամբ. սաստկապէս բախեալք ընդ մի-մեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր ան-կեալ դիաթաւալ խաղային:

....Վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զհւ-րեաւ զզօրս Արեաց, որք զտեղի առեալ կային ընդդէմ գնդին Վարդանայ:

.... Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոջն գործեաց, յորում տեղւոջ և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութիւնն:

.... Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց. վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտիւ[5] ի վե-րայ սուրբ մարմնոյ երանելեացն, և սաստիկ խուճապ տագ-նապի էր կողմանցն երկոցունց անկելոց:

.... Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց: Մանա-ւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն գալարէին... (Եղ., V յեղանակ, էջ 116-119):

Աղյուսակ 2

| **Հոմանշային ԿԿ** | |
|---|---|
| *Նույնանիշներ* | *Բուն հոմանիշներ* |
| Նմուշ՝<br>*խուճապ տագնապի, շտապ տագնապի* | Նմուշ՝<br>*խումբ առնել, ճակատ կազմել* |

1. *Ընդ ամենայն երեսս դաշտին*– ամբողջ դաշտի երեսին:
2. *Իբրև* - այստեղ՝ *երբ:*
3. *ի շողալ, ի ճօճել* – շողալիս, ճոճելիս:
4. *Անդ էր տեսանել* – այնտեղ կարելի էր տեսնել:
5. *Ոչ կարէին կալ ճշմարտիւ* – չէին կարողանում ստույգ ճանաչել:

**3-րդ խումբ.** Գտնե՛լ և կողք կողքի գրե՛լ հետևյալ բնագրային հատվածներում առկա հականշային կայուն կապակցությունները՝ նշելով նրանց իմաստային տեսակը (լիարժեք և ոչ լիարժեք հականիշներ) (աղյուսակ 3):

…. Յետ նաւելոյն Քսիսութրեայ ի Հայս և դիպելոյ ցամաքի, զնայ, ասէ, մի յորդւոց նորա կոչեցեալն Սեմ ընդ արևմուտս հիւսիսոյ դիտել զերկիրն, և դիպեալ դաշտի միում փոքու առ երկայնանստիւ միով լերամբ[1], գետոյ ընդ մէջ նորա անցանելով, ի կողմանս Ասորեստանի, դադարէ առ գետովն երկլուսնեայ աւուրս, և անուանէ յանուն[2] իւր զլեառնն Սիմ, և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ, ուստի եկն (Խոր., I, Զ, էջ 26):

«Այս, ասէ, Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ: …. Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան[3] ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլաց և ուժաւորաց»: Քանզի անդ[4] մոլեգնեալ այր իւրաքանչիւր, սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի դէպ ելանէին Բելայ[5]՝ բռնանալ ունել զամենայն երկիր: Որում

ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արա-րադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք, թուով իբրև[6] երեքհարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա[7] և բոլոր աղխիւ» (Խոր., I, Ժ, էջ 32-33):

…. «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռուցեալ մեղկեա՛ զցրտութիւն սառուցեալ քո հպար-տացեալ բարուցդ, և հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտու-թեան, ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան»:

…. «Գիտեա՛, ասէ, ով մեծդ դիւցազանց, զի դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք[8] և երկնադիզօք հսսակօք սկայիւք մրցողօք: Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ՝ փախեայ, և գամ աւասիկ տագնապաւ: Արդ՝ աճապարեա՛ խորհել զոր ինչ գործելոց ես» (Խոր., I, ԺԱ, էջ 34):

Զի ամենայն որք հաւատով և երկիւղիւն մերձենան ի Քրիստոս, սուրբ Հոգւովն լուսաւորին, և օր ըստ օրէ գործովք առաքինութեամբ ի վեր ելանեն, և մեկնեալ հեռանան յամե-նայն խաբից սատանայի: Եւ որ պղծութեամբ թատերացն առ դևս[9] հպին հանապազ խաւարին վարիւք միզապատեալք մթանան, …. և օր ըստ օրէ անօրէնութեամբք ծանրացեալք ի վայր կործանին, մինչև ուծացեալ հեռանան[10] յերկիւղէն պատուիրանացն աստծոյ, և լինին աման սատանայական խորհրդոցն (Մանդ., ԺԷ, էջ 134-135):

Աղյուսակ 3

| Հականշային ԿԿ | |
|---|---|
| *Լիարժեք հականիշներ* | *Ոչլիարժեքհականիշներ* |
| Նմուշ՝<br>*ի վեր ելանել – ի վայր կործանել*<br>*(իմ)* | Նմուշ՝<br>*ամբառնալ զձեռն–հնազանդ լինել*<br>*(իմ)* |

1. *Առ երկայնանստիւ միով լերամբ* – մի երկայնանիստ լեռան մոտ:
2. *Յանուն* – անունով:
3. *Ի տարածանել ազգի մարդկան* – մարդկային ցեղի տարածվելու ժամանակ:
4. *Անդ* – այն ժամանակ:
5. *Պատահմունք ի դէպ ելանէին Բելայ* – Բելին պատահաբար հաջողվեց:
6. *Իբրն* - այստեղ՝ *մոտավորապես:*
7. *Եկօքյարեցելովքի նա* – նրան հարած եկվորներով:
8. *Յաւերժիւք քաջօք* – անմահ քաջերով:
9. *Առդևս* – դևերի հետ:
10. *Ուժացեալ հեռանան* - հեռանում են:

ԱՄՓՈՓՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԻ



***Ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ***

*1. Կարդա՛լ և թարգմանե՛լ բնագրային հետևյալ հատվածը:*

*ա) Տեքստից դո՛ւրս գրել կայուն կապակցությունները և վերլուծել՝ըստ մենիմաստության և բազմիմաստության:*

*բ) Տեքստից ընտրե՛լ երեք կայուն կապակցություն և կազմե՛լ նրանց հոմանշային ու հականշային շարքերը:*

Նմուշ՝ *ա) Ձեռն դնել* (բազմիմաստ ԿԿ) – 1. քահանա դարձնել, ձեռնադրել, 2. ստորագրել:

*բ) Ի վէզ զալ,* հակառակ կալ, կիցս ընկենուլ (հոմանիշ ԿԿ-ներ):

*Ի վէզ զալ*-հաւանակից լինել (իմ) (հականիշ ԿԿ-ներ):

*Ի վէզ զալ,* հակառակ կալ, կիցս ընկենուլ- Հաւան լինել (իմ), հաւանակից լինել (իմ), առնուլ յանձն (հականշություն ԿԿ-ների շարքերի միջև):

# ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ
# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

## ՅԱՂԱԳՍ ՅՈՀԱՆՆՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԵՒ ՎԱՐՈՒՑ ՆՈՐԱ, ԵՒ ԱՆՄՏՈՒԹԵԱՆՆ ԵՒ ՇԱՂԱՇՈՒՏ ԽՕՍԻՑՆ ԵՒ ԳՈՐԾՈՑՆ, ԵՒ ՆՇԱՆԱՑՆ՝ ՈՐ ՅԱՍՏՈՒԾՈՅ Ի ՎԵՐԱՅ ՆՈՐԱ ԵՂԵՆ

Այլ Յոհան եպիսկոպոս, որդի Փառինայ հայրապետի, հինաւուրց[1]. թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս: Եւ էր սա այր կեղծաւոր, և երևեցուցանէր զինքն զանձն իւր[2] մարդկան պահող և խորգահանդերձս[3], մինչ զի մոյգս անգամ ոչ ագանէր, այլ զամառն հեսկով պատէր, և զձմեռն կեմով: Եւ յագահութեան առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիւղին աստուծոյ. այնչափ ինչ զի զիրս անարժանս և չհաւատալիս գործէր:

Զի էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն, զի նստէր նա ի գրաստու վերայ, և գայր. եկն դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգոտւոյ, աղեղնակապարճ զմիջով. լուացեալ զհերս իւր օծեալ մերձեալ[4], վարսակալ եդեալ ի գլուխ իւր, և օղիկ արկեալ զուսովք իւր. և գայր զճանապարհս իւր. թերևս յաւազակութենէ: Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր գունաւոր, գնացող, մինչ զի ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր: Ապա իբրև եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա անդր, ապա սպասեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն, և ասէր. «Է՞ջ դու վաղվաղակի ի ձիոյ այտի, զի բանք են ինձ ընդ քեզ»: Ասէ այրն. «Զի ոչ դու զիս

գիտես, և ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ»: Մանաւանդ զի այրն արբեալ ևս դիպեցաւ, և շատ յամառեաց այրն իջանել ի ձիոյն: Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ձիոյ անտի. և առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն: Եւ առնն խոնարհել հրամայէր և ասէր. «Ձեռցութեան ձեռն դնեմ ի վերայ քո»: Իսկ նա տայր պատասխանի զանձնէն[5], եթէ «Այր աւազակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց. և այժմ դեռ ի նմին գործ կամ»: Եւ շատ ի վէզ եկեալ յամառէր այրն, և նա ևս չար քան զնա: Ապա բռնաբար զգետնեալ զայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. և յարուցեալ հրամայէր լուծանել զհանգոյցս մեկնոցին, և արկանել նմա ադաբողոն: Եւ ասէր. «Ե՛րթ ի գեւղ քո, և լիջի՛ր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես»: Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ գեղջէ իցէ: Ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն, և ասէր. «Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ»: Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ զձին, և զայրն արձակեաց: Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն:

Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղէբողոն արկեալ, գնայր ի տուն իւր, և երթեալ մտանէր ի մէջ ընդանեաց իւրոց, ասէ ցկին և ցընդանիս. «Արի՛ք յաղօթս կամք»: Եւ նոքա ասեն. «Մոլիս դու, դե՞ւ ուրեմն հարաւ ի քեզ»: Իսկ նա ասէ. «Արի՛ք կամք յաղօթս, վասն զի երէց եմ»: Իսկ նոքա զարմացեալ, մերթ շիկնէին, մերթ ծիծաղէին. մինչև բազում անգամ յամառեալք, ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա: Ապա ասէ կինն ցայրն իւր. «Ո՞չ դու երախայ[6] էիր, և չէիր մկրտեալ»: Ասէ այրն ցկինն իւր. «Ապշեցոյց, չետ յիշել. և ոչ ես յիշեցի զայդ ա-

սել ցնա. զիս երէց արար, և ձին սանձաւ թամբաւ առ և անց»: Եւ ասէ ցայրն ընդանիքն իւր. «Յարիցես[7] անդրէն գնասցես առ եպիսկոպոսն, և ասասցես. «Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց»: Իսկ նորա յարուցեալ[8] գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. «Ես մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց»: Եւ ասէ Յոհան. «Սափորով միով ջո՛ւր բերեք»: Եւ առեալ զջուրն էարկ զգլխով նորա, և ասէ. «Ե՛րթ, մկրտեցի զքեզ»: Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ (Բուզ., VI, Ը, էջ 404, 406, 408):

*1. Հինաւուրց*–այստեղ՝ *նախկին:*

2. *Զանձնիւր*–իրեն:

3. *Խորգահանդերձ* – քուրձ հագած, խարազնազգեստ:

*4. Մերձեալ*–այստեղ՝ *հարդարած:*

5. *Զանձնէն*–իր մասին:

6. *Երախայ*–անկնունք, չմկրտված:

7. *Յարիցես*–վեր կկենաս:

8. *Նորա յարուցեալ*– նա վեր կացավ:

*2. Ռ. Ս. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանից» դո՛ւրս գրել երկուական կայուն կապակցություն՝ ըստ հետևյալ իմաստային խմբերի.*

1) կենդանական աշխարհ,

2) բնության երևույթներ,

3) ռազմական գործ,

4) կրոնական հավատալիքներ,

5) պետական և հասարակական կյանք,

6) գիտություն և արվեստ:

*3. Կատարե՛լ բառարանային աշխատանք մենիմաստ և բազմիմաստ կայուն կապակցությունների շուրջ՝ կազմելով միևնույն սկզբունքով խմբավորվող կապակցությունների շարքեր:*

*4. Գրաբարյան մատենագիրներից (ըստ նախընտրության) մեկ-երկուսի համաբարբառներից դո՛ւրս գրել հոմանշային և հականշային կայուն կապակցություններ՝ համապատասխան բնագրային օրինակներով հանդերձ:*

### *Հարցեր*

1. Ըստ իմաստային տիպերի՝ գրաբարի կայուն կապակցություններն ի՞նչ խմբավորման են ենթարկվում:
2. Որո՞նք են միաբնետ դարձվածային միավորները:
3. Ի՞նչ է իդիոմատիկ արտահայտությունը:
4. Գրաբարի կայուն կապակցություններն իմաստային (թեմատիկ) ի՞նչ դասակարգման են ենթարկվում:
5. Ըստ իմաստային հարաբերությունների՝ գրաբարի կայուն կապակցություններն ի՞նչ հիմնական խմբերի են բաժանվում:
6. Ի՞նչ է բազմիմաստությունը և ի՞նչ առնչակցություն ունի հոմանշության ու հականշության հետ:
7. Որո՞նք են գրաբարի հոմանշային կայուն կապակցությունների հիմնական ենթատեսակները:
8. Ըստ ձևաբանական դասակարգման՝ գրաբարի հոմանշային և հականշային կայուն կապակցություններն ի՞նչ խմբերի են բաժանվում:

9. Հին հայերենի հականշային կայուն կապակցություններն իմաստային առումով ի՞նչ խմբավորման են ենթարկվում:
10. Ի՞նչ նշանակություն ունի գրաբարի կայուն կապակցությունների իմաստաբանության յուրացումը Ձեր իմացության ընդլայնման, առհասարակ լեզվաոճական գիտելիքների հարստացման հարցերում:

***Անդրադարձ***

*Գործնական առաջադրանքների կատարում:*

*Վերլուծական աշխատանք.* կայուն կապակցությունների իմաստային առանձնահատկությունների ուսումնասիրություն՝ ըստ տեքստի լեզվաոճական վերլուծության:

Արտահայտիչ ընթերցանություն:

Վարժություններ:

*Հետադարձ կապ. բանավոր և գրավոր հիմնավորումներ, դատողություններ:*

*Ինքնուրույն հետազոտական աշխատանք. բառարանային աշխատանք* դարձվածաբանական իմաստաբանության շուրջ: Կայուն կապակցությունների ցանկերի կազմում՝ ըստ իմաստային դիտվածքի:

*Աշխատանք համաբարբառներով:*

*Հետադարձ կապ. գրավոր վերլուծություն:*

*Ամփոփում՝ ըստ խմբային հետազոտության:*

***Գրականություն***

***Ա. Սկզբնաղբյուրների համառոտագրություններ***

1. Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց (Ամերիկեան ընկերութիւն Գրոց Սրբոց, Վիեննա, 1929)։ Աստուածաշունչ մատյան Հին և Նոր կտակարանների։ Արևելահայերեն նոր թարգմանություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, Երևան, 2001։

*Մարկ.* – Աւետարան ըստ Մարկոսի։

2. Մատենագրական երկեր և այլ բնույթի գործեր

*Արծր.* – Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985։

*Բուզ.* – Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987։

*Եզն.* – Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, Թիֆլիս, 1914։ Աղանդների հերքումը, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970։

*Եղ.* – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան), Երևան, 1957։ Վարդանի և հայոց պատերազմի մասին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1994։

*Խոր.* – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի,

աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981:

*Կոր.* – Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

*Մանդ.* – Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի Ճառք, Վենետիկ, 1860:

*Նար.* – Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան և այլ երկասիրութիւնք, Անթիլիաս, 2003:

*Փարպ.* – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, Թիֆլիս, 1907:

## *Բ. Տեսական գրականություն*


1. *Աբրահամյան Ա. Ա.,* Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976:
2. *Բադիկյան Խ. Գ.,* Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986:
3. *Բեդիրյան Պ. Ս.,* Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս» հրատ., 1973:
4. *Բեդիրյան Պ. Ս.,* Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., ՀՊՄԻ, 1990:
5. *Խաչատրյան Լ. Մ., Ավետիսյան Լ. Ն.,* Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XVI դդ.), Ե., «Զանգակ» հրատ., 2015:
6. *Խաչատրյան Լ. Մ., Թումանյան Գ. Բ.,* Գրաբարի դասագիրք, Ե., «Զանգակ-94» հրատ., 2004:
7. *Համբարձումյան Վ. Գ.,* Գրաբարի ձեռնարկ, Ե., Էդիթ Պրինտ, 2018:

8. *Ղազարյան Ս. Ղ.,* Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., Եր. համալս. հրատ., 1981:
9. *Մկրտչյան Է. Ս.,* Գրաբարի դասընթաց. ուսումնաօժանդակ ձեռնարկ, Ե., «Մանկավարժ» հրատ., 2008:
10. *Սուքիասյան Ա. Մ.,* Ժամանակակից հայոց լեզու, Ե., Եր. համալս. հրատ., 1999:
11. *Назарян А. Г.,* Фразеология современного французского языка, М., Изд-во “Высшая школа”, 1987.
12. *Чернышева И. И.,* Фразеология современного немецкого языка, М., Изд-во “Высшая школа”, 1970.

## *Գ. Բառարաններ*

1. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Անթիլիաս, 1988:
2. *Խաչատրյան Լ. Մ.,* Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Ե., «Զանգակ-97» հրատ., 2003:
3. *Խաչատրյան Լ. Մ.,* Գրաբարի ուսումնական բառարան, Ե., «Զանգակ» հրատ., 2013:
4. *Ղազարեան Ռ. Ս.,* Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., Եր. համալս. հրատ., 2006:
5. *Ղազարեան Ռ. Ս.,* Գրաբարի դարձուածաբանական բառարան, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2012:
6. *Ղազարյան Ռ. Ս.,* Գրաբարի բառարան, հհ. Ա-Բ, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2000:
7. *Մալխասեանց Ս.,* Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., «Հայպետհրատ», 1944-1945:

8. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հհ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837:
9. *Ахманова О. С.,* Словарь лингвистических терминов, М., Изд-во “Сов. энциклопедия”, 1969.

## *Դ. Համաբարբառներ*

1. Համաբարբառ *Փ. Բիւզանդացւոյ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեց՝ Վ. Գևորգյան), հհ. 1-3, Ե., 1974-1978:
2. Համաբարբառ *Եզնկայ Կողբացւոյ* «Եղծ աղանդոց» երկի (Կազմեց՝ Գ. Թոսունյան), Ե., 1972:
3. Համաբարբառ *Եղիշէի* «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի (Կազմեց՝ Լ. Գուլզազարյան), հհ. 1-2, Ե., 1974-1978:
4. Համաբարբառ *Մ. Խորենացւոյ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեցին՝ Օ. Խաչատրյան և ուրիշներ), հհ. 1-3, Ե., 1975-1976:
5. Համաբարբառ *Կորիւնի* «Վարք Մաշտոցի» երկի (Կազմեց՝ Է. Դեմիրճյան), Ե., 1972:
6. Համաբարբառ հին եւ նոր կտակարանաց, Աշխատասիրութիւն *Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցւոյ,* Երուսաղէմ, 1895:
7. Համաբարբառ *Գր. Նարեկացւոյ* «Մատեան ողբերգութեան» երկի (Կազմեցին՝ Գ. Թոսունյան, հհ. 1-2, Է. Դեմիրճյան, հ. 3), Ե., 1975-1978:
8. Համաբարբառ *Ղ. Փարպեցւոյ* «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկի (Կազմեց՝ Հ. Հովհաննիսյան), Ե., 1973:
9. Համաբարբառ *Ղ. Փարպեցւոյ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեց՝ Ալ. Մարգարյան), հհ. 1-3, Ե., 1975-1978:

# ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՏՐՎՈՂ (ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ) ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ա. Ուսանողների գործնական հմտությունների զարգացում

### 1. Տեքստային աշխատանք

*1. Լրացնե՛լ աղյուսակը և հիմնավորե՛լ՝ կատարելով հետևյալ աշխատանքը.*

Տեքստից դո՛ւրս գրել ազատ և կայուն կապակցությունները, դրանք գրե՛լ եռաթև աղյուսակի առանձին սյունակներում՝ ցույց տալով ընդհանրություններն ու տարբերությունները:

## ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ ՈՐԴՒՈՅ ԴԱՒԹԻ ԹԱԳԱՒՈՐԻ ԻՍՐԱՅԵԼԻ

Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զդարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, և ուղղել զիրաւունս: Զի տացէ անմեղաց[1] զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս և զհանճար: Որոց լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ, զառաջնորդութիւն ստասցի: Ի միտ առցէ զառակս և զբանս խորինս, զճառս իմաստնոց և զառակս նոցա: Լո՛ւր, որդեա՛կ, խրատու հօր քո, և մի՛ մերժեր զօրէնս մօր քո, զի պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո, և մանեակ ոսկի ի պարանոցի քում[2]:

Որդեակ, մի՛ խաբեսցեն զքեզ արք ամպարիշտք, և մի՛ ախորժեսցես՝ եթէ կոչեսցեն զքեզ և ասիցեն՝ Եկ ընդ մեզ՝ կցորդ լեր արեան, ծածկեսցուք յերկրի[3] զայր արդար ի տարապարտուց:

Որդեա՛կ, մի՛ երթար ճանապարհ ընդ նոսա, խոտորեա՛ զոտն քո ի շաւղաց նոցա, զի ոտք նոցա ի չարիս ընթանան, և երագունք են ի հեղուլ զարիւն:

Իմաստութիւն յելս ճանապարհաց գովի, և ի հրապարակս համարձակութիւն բերէ, և ի գլուխս պարսպաց քարոզի, և առ դրունս հզօրաց յաճախէ, և ի դրունս քաղաքաց համարձակեալ խօսի:

Ահաւասիկ առաջի առնեմ ձեզ զհոգւոյ իմոյ զպատգամս, ուսուցից զբանս իմ ձեզ: Քանզի կոչէի, և ոչ լսէիք. յերկարէի զբանս իմ, և ոչ անսայիք: Այլ ապախտ առնէիք զխորհուրդս իմ, և յանդիմանութեանց իմոց ոչ անսայիք: Այսուհետև ես ծիծաղեցայց զկորստեամբ ձերով[4], և ոտնիար եղէց՝ յորժամ գայցէ ձեզ նեղութիւն և պաշարումն: Եւ յորժամ հասանիցէ ձեզ յանկարծակի խռովութիւն, և կործանումն ի նմանութիւն մրրկի գայցէ. կամ յորժամ հասանիցէ ձեզ սատակումն. իցէ զի կարդայցէք առ իս, և ես ոչ լսիցեմ ձեզ. խնդրեսցեն զիս չարք, և ոչ գտանիցեն: Զի ատեցին զիմաստութիւն, և զերկեւղ Տեառն ոչ խնդրեցին: Եւ ոչ կամէին անսալ խորհրդոց իմոց, և արհամարհեցին զյանդիմանութիւնս իմ: Այսուհետև կերիցեն զպտուղս ճանապարհաց իւրեանց, և իւրեանց ամպարշտութեամբն յագեսցին: Փոխանակ զի զրկէին զտղայս՝ կոտորեսցին, և կշտամբութիւն զամպարիշտս սատակեսցէ[5]: Իսկ որ ինձ լսէ՝ բնակեսցէ յուսով, և դադարեսցէ աներկեւղ յամենայն չարութենէ (Առակ, Ա., էջ 660-661):

1. *Անմեղաց*–պարզամիտներին:
2. *Ի պարանոցիքում*–քո պարանոցին:
3. *Ցերկրի*– հողի տակ:
4. *Ծիծաղեցայց զկորստեամբ ձերով*– պիտի ծիծաղեմ ձեր կորստյան վրա:
5. *Սատակեսցէ*–կսպանի՝ պիտի սպանի:

| Գրաբարի ԿԿ | | |
|---|---|---|
| **Ընդհանրություն** | **Տարբերություն** | |
| *Ազատ և կայուն ԿԿ* | *Ազատ ԿԿ* | *Կայուն ԿԿ* |
| Նմուշ՝ *Իգլուխս պարսպացքարոզել* և *ի միտ առնուլ.* | Նմուշ՝ *Իգլուխս պարսպացքարոզել.* | Նմուշ՝ *Ի միտ առնուլ.* |
| 1. Բառակապակցություննե-րի՝ ըստ բաղադրիչների կա-պակցելիության աստիճանի տարբերակվող տեսակներ: | 1. Տվյալ խոսքաշարում ստեղծված կապակցություն: | 1. Պատրաստի վերարտադրելի (տվյալ դեպքում՝ վերաիմաստա-վորված) կա-պակցություն: |
| 2. Անվանողական կապակ-ցություններ: | 2. Խոսքաշարում բաղադրիչ-ները՝ առանձին անդամներ: | 2. Խոսքաշարում բաղադրիչները՝ անտրոհելի: |

*2. Հետևյալ հատվածները ներկայացնե՛լ ըստ տրված աղյուսակի (եռամաս օրագիր)՝ վերլուծելով և մեկնաբանելով գրաբար և աշխարհաբար համարժեք հատվածներում ի հայտ եկող կայուն կապակցությունների ձևակազմական-քերականական հատկանիշները՝*

*ա) ըստ հաղորդակցման գործընթացի հետ ունեցած փոխհարաբերության,*

*բ) ըստ իրենց կազմում նախդիր-նախադրություններ ունենալու կամ չունենալու (գրաբարյան ԿԿ),*

*գ) ըստ բառակապակցական կայուն կապակցությունների ձևաբանական արժեքի և շարահյուսական կիրառության,*

*դ) ըստ նախադասության ձևավորումով կայուն կապակցությունների կազմության:*

1) Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց.
Ե՛կ հաւանեա՛ց[1] բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝
Տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու[2] ոչ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն,
Կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել,
Եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել (Խոր., II, Ծ, էջ 178):

2) Մինչ դու գնացեր,
Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ[3] տարար,
Ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ:

Եթէ դու յորս հեծցիս[4] յԱզատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք,
Տարցին յԱզատն ի վեր ի Մասիս.
Անդ կայցես, և զլոյս մի՛ տեսցես (Խոր., II, ԿԱ, էջ 191):

3) Վա՜յ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բարկացուցի,

Վա՜յ որդւոյս կորստեան, որ զկենդանութեանն[5] ձիր մոռացայ (Նար., Բան Է, Գ, էջ 39):

Եւ թէ ի ցամաքի անտես առնիցես,
Իբր զանկայուն՝ պնդութիւն յատակիս
Ի ներքոյ աստի հոսեալ սասանի (Նար., Բան ՁԵ, Ա, էջ 384):

4) Քրքում վակասիր պտուղն[6]
սնանէր խուռն տերևով.
Տերևն տաւիղ տուողին,
զոր երգէր Դաւիթ հրաշալին:
....Աստեղքդ ամէն շուրջ առին,
դէմ լուսնին գունդ-գունդ բոլորին.
Գունդ-գունդ խաչաձև գնդակ,
յօրինուած երկնից շուրջանակ (Նարեկ. Տաղ., էջ 30, 32, 34):

| Գրաբար | Աշխարհաբար | Մեկնաբանություններ |
|---|---|---|
| Նմուշ՝<br>Եւ թէ ի ցամաքի *անտես առնիցես,*<br>Իբր զանկայուն՝ պնդութիւն յատակիս<br>Ի ներքոյ աստի հոսեալ սասանի<br>(Նար., էջ 384): | Նմուշ՝<br>Իսկ եթե *անտես անես* ցամաքում,<br>Ամուր գետինը անկայուն դարձած,<br>Խարխլված, փլված իսկույն կհոսի մեր ոտքի տակից<br>(Նար., էջ 583): | Նմուշ՝<br>*Անտես առնել* ԿԿ<br>ա) Անվանողական կապակցություն թե՛ գրաբարում, թե՛ աշխարհաբարում:<br>բ) Առանց նախդիր-նախադրությունների ձևավորված (գրաբարյան ԿԿ):<br>գ) Թե՛ գրաբարում, թե՛ աշխարհաբարում բայական ԿԿ՝ պարզ ստորոգյալի գործառույթով: |

1. *Հաւանեա՛ց*– Այստեղ՝ *համաձայնի՛ր:*
2. *Վասն միոյ քինու*– մի քենի պատճառով:
3. *Ընդ քեզ*– քեզ հետ:
4. *Եթէ դու յորս հեծցիս*– Թե դու (ձի) հեծնես որսի (գնալու) համար:
5. *Կենդանութեանն*– անմահության:
6. *Քրքում վակասիր պտուղն* – հասուն ոսկեգույն պտուղը:

*3. Առանձնացնե՛լ հետևյալ տեքստում առկա կայուն կապակցություններն ըստ իմաստային տիպերի (դարձվածային, ոչ դարձվածային) և խմբավորե՛լ ըստ եռաթև աղյուսակի՝*

*ցույց տալով նրանց ընդհանրություններն ու տարբերություն-ները:*

.... ԶԽորձեան և զՀանձէթն յորժամ յիշեմ և որ ինչ ի նոսա գործեցաւ, հատկլիմ արտասուօք, փղձկի սիրտ իմ, և յիմարին միտք իմ, և զդողի հարկանի ձեռքս և ոչ կարեմ ոճ տողիս յառաջ խաղացուցանել: Բազում և անհամար հոգիք ի վերագոյն զաւառացն, վասն տեղեացն ամրութեան՝ անդր ժողովեալ էին. յորոց վերայ հասեալ անօրինացն[1] արագապէս որպէս թռչունք, անողորմաբար որպէս գազանք, սրտմտութեամբ եռացեալք որպէս վրէժխնդիրք, և խիլ արկեալ ի քարանձաւս և յանտառախիտ մայրիս՝ անյագաբար կոտորեցին զորս և գտին. ....արեան առուք ի դիականցն անկելոցն ելեալ, ի զառ ի կող տեղիս ի յորդութեան զնացիցն զհող երկրին հեղեղատէին:

Այլ դու յանժամ եղեալն ա՛ծ զմտաւ, զկրօնաւորացն դաս և զքահանայիցն՝ որ անդ հանդիպեցան, կամ զերամս ծերոցն, կամ զերիտասարդացն բազմութիւնս, որոց դեռաբոյս մօրուացն՝ իբրև զնկար գեղեցկայարմար զայտսն զարդարէին, և խոպոպք վարսիցն փաղփեալք ի վերայ ճակատուն[2] զօրէն վարդի վառ ի վառ գունով զդիրս երեսացն պայծառացուցանէին, թէ որպէս յանկարծակի ի սրոյ թշնամեացն իբրև ի կարկտոյ հարեալք՝ յերկիր թաւալ անկեալ զլոր խաղային: Բե՛ր ի մէջ և զտղայոցն համար, զորս առեալ ի գրկաց մարցն յերկիր ընկենուին: ....Կոյսք ի խայտառականս անկեալք, նորահարսունք յարանց բաժանեալք և ի գերութիւն մատնեալք. ի միում վայրկենի երկիրն՝ որ իբրև զքաղաք մարդախիտ ա-

ռատութեամբ խճողեալ էր[3], եղև անմարդ ամայի, յերկուս բաժանեալ կամ սրակոտոր կամ գերի (Ա. Լաստ., ԺԶ, էջ 86-87):

.... Արդ զի՛նչ է ինձ մի ըստ միոջէ զանկանգնելի կործանումն քրիստոնէից ընդ գրով սահմանել, որ իբրև ծով ի սաստիկ հողմոյ յուզեալ՝ ահագին ծփանօք, և փրփրադէզ կուտակօքն յամենայն կողմանց գայ ի ծփանս, այսպէս և մեզ հանդիպեցաւ, աշխարհս ամենայն յանկարծակի լի եղև խռովութեամբ, և ոչ ուրեք գտանիւր[4] տեղի ապաւինի, զի վասն անհնարին չարեացն՝ բարձաւ յոյս կենաց յամենայն մարդկանէ (ն. տ., էջ 89):

1. *Յորոց վերայ հասեալ անօրինացն* – որոնց վրա հասան այն անօրենները:
2. *Փաղփեալք ի վերայ ճակատուն* – ճակատի վրա փայլփլելով:
3. *Իբրև զքաղաք մարդախիտ առատութեամբ խճողեալ էր* – բնակչախիտ մի քաղաքի պես մարդկանց բազմությամբ խճողված էր:
4. *Ոչ ուրեք գտանիւր* - ոչ մի տեղ չկար՝ չէր գտնվում:

| Գրաբարի ԿԿ | | |
|---|---|---|
| Ընդհանրություն | Տարբերություն | |
| *Դարձվածային և ոչ դարձվածային ԿԿ*<br><br>Նմուշ՝<br><br>*Լինել (իմ) ամայի* (ամայի դառնալ, ամայանալ) - ոչ դարձվածային ԿԿ,<br>*զղողի հարկանել* (դողալ, սարսափել) - դարձվածային ԿԿ.<br>**1**.Պատրաստի վերարտադրելի կայուն կապակցություններ, որոնց բաղադրիչները հանդես են եկել միասնաբար՝ ի տարբերություն ազատ կապակցությունների։ | *Դարձվածային ԿԿ*<br><br>Նմուշ՝<br><br>*Զղողի հարկանել* (դողալ, սարսափել).<br><br>1. Պատրաստի վերարտադրելի և վերաիմաստավորված կայուն կապակցություն։ | *Ոչ դարձվածային ԿԿ*<br><br>Նմուշ՝<br><br>*Լինել (իմ) ամայի* (ամայի դառնալ,ամայանալ).<br><br>**1.** Պատրաստի վերարտադրելի և առանց վերաիմաստավորման կայուն կապակցություն։ |

## 2. Վարժություններ

*1. Նախդրավոր կառույցներում ցո՛ւյց տալ, թե ո՛ր նախդիրն ի՛նչ խնդրով է հանդես եկել՝ լրացնելով գծապատկերը: Բացատրե՛լ նախդրավոր կայուն կապակցությունների իմաստները:*




Զբռմամբ ածել, ընդ վայր հարկանել, ի տխրութեան ըմբռնել, առ ոտն կոխել, մերժել ի կենաց, վճարել զկենցաղս, զդիմի հարկանել դիւին, կռել կոփել զդուռն, ի մտի արկանել, ակն ի ճանապարհ, առ ետեղ, արկանել ընդ կապանաւք, տանել (իմ) ընդ միտ, այլ ընդ այլոյ, թմբրել (իմ) ի գինւոյ, ըստ այն յառաջել, ընդ գրով արկանել:

Նմուշ՝ *ընդ վայր հարկանել* (արհամարհել) – *հայցական* խնդրով նախդրավոր կայուն կապակցություն *(ընդ* նախդիրը՝ *հայցական* խնդրով):

*2. Վերլուծե՛լ հետևյալ կայուն կապակցությունները՝ըստ որևէ հոլովով խնդիր առնող նախադրությունների՝լրացնելով գծապատկերը: Բացատրե՛լ կապակցությունների իմաստները:*

Օրինակ իմն կիսամահ, բառնալ ի վերայ ուսոց, չար քան զօձ, ոգւով չափ սիրել, իբր օրինակ իմն թագաւորական պատիւ, փայլատակել իբրև յամպոյ մեծէ, յայգէ մինչև ցերեկոյ, քան զհողմ թեթև, իբրև հեղեղօք անձրևաց, պայծառագոյն քան զլոյս, գետոյ պէս սահել անցանել, նման դեղոց մահու, զօրէն վարդի, իբրև զգառն, պէս գունակ Բաբելովնի, նման անասնոյ, որպէս զբարբարոս, ի ձեռն հաւատոց, իբրև յաղբերէ դիմել:

Նմուշ՝ *ի ձեռն հաւատոց* (հրաշքով) – *ի ձեռն* սեռական խնդրով նախադրությամբ կայուն կապակցություն:




*3. Տրված կայուն կապակցությունները խմբավորե՛լ ըստ երկթև (T–աձև) աղյուսակի:*

Անխառն իբրև զօղ, նման յորդառատ անձրևի, արագ քան զմիտս, իբրև զնահատակ առաքինի, անհեղեղ անձամբ, յանց ըստ հրաման օրինադրին մերոյ, բարձրացուցանել զաղաղակ, զօրէն երկաթապինդ կապանօք, պապանձել որպէս համր դև, զերդ զապակի, ոտնհար լինել (իմ), ընդ բնաւ:

**Անվանողական ԿԿ**

| *Միազգաթ կառուցատիպ* | *Երկզգաթ կառուցատիպ* |
|---|---|
| | |

*4. Տրված կայուն կապակցությունները ենթարկե՛լ ձևաբանական դասակարգման՝ լրացնելով աղյուսակը:*

Թևամուխ լինել (իմ), աստուածեղէն գիրք, տեղի տալ (իմիք՝ ումեք), աներկիւղք իբրև զանմահս, առակ արկանել, դառնագոյն քան զլեղի, խորան սրբութեան, հարցանել կենօք, բազում իբրև զաստեղս, իբրև զվայրենիս, դրան երէց, նման մեղուի, անկանել (իմ) ընդ անթիւ ախտից ծառայութեան, նշանք աստուածայինք, լիրբ քան զամենայն շուն, խորշիւ բան, յառաջ քան զՆոյ, պահել իբրև զբիբական:

| Գոյականական ԿԿ | Ածականական ԿԿ | Բայական ԿԿ | Մակբայական ԿԿ |
|---|---|---|---|
| | | | |

*5. Դո՛ւրս գրեք ընդգծված կայուն կապակցությունները և ենթարկե՛ք քերականական վերլուծության (խոսքիմասային արժեքներ և շարահյուսական պաշտոններ):*

....Միայն յօժարութիւն կամաց սրտին՝ սիրով մատուցանել զլսելիս, հաւատովք ձգտեալ զականջս՝ աման պատգամաց[1], և անդէն *ի կամս սրտին* հասեալ գեղեցկագոյն *իբրև զպատուական մարգարիտն* ծանրագին ընդ յօժարութեանն[2] զարդ ականջաց՝ զինդ եղեալ կախեսցի. միայն զգլուխդ խոնարհեցո՛[3], և անդէն[4] հոգևորական պսակն ի վերայ գլխոյդ դնի, և *առաւել քան զականս պատուականս* զարդարեսցէ զքեզ: ....Արդ՝ ջան *յանձին կալեալ* մտանել ի պատմագիր մատենիցս խորութիւն, ցուցանել այնոցիկ, ոյք իմաստութեամբ կամիցին *ունկնդիր լինել* օգտակար պատմութեանս: ....*Իբրև զհուր վառեալ էր* (Ագաթ., էջ 14, 16, 214): Մի՝ զի յառաջ քան զՆինոսի ժամանակ թագաւորութեանն է, յորում ոչ ոք այսպիսի իրաց *փոյթ յանձին ունէր.* երկրորդ՝ զի ոչ հարկ ինչ և ոչ պէտք կարևորք էին նոցա՝ զազգաց օտարաց և զաշխարհաց *ի բացեայ,* և զհամբաւս հինս և զզրոյցս նախնականս իւրեանց թագաւորաց կամ մեհենից մատեանս գրել: ....Այլ առ ի մէնջ այսոքիկ կա՛մ երկար, և քեզ *ըստ կամաց,* կա՛մ փոյթ, և քեզ ոչ հաճելիք (Խոր., էջ 47, 88): *Առ ժամանակ մի* վասն այս երկուց պատճառանաց *ընդ մահուամբ անկանիցի* (Եզն., էջ 75): Արդ նախ առաջին՝ խնդացի ընդ այս[5], որ այսպիսի միտս երևեցուցեր առ ի քննել զգիրս[6], և *հոգ տանել* ուսմանց, որ է զուշակ[7] *երկիւղի տեառն*...: Որ և սակաւ ինչ յառաջ երթեալ՝ ասէ, թէ «Այլ *յօրէնս տեառն* խորհեսցի նա *ի տուէ և ի գիշերի*»: Ապա զհաստուցումն խորհելոյն[8] *զօրէնս տեառն ի վերայ բերեալ* ասէ, թէ «Եղիցի նա *որպէս ծառ* ՝որ տնկեալ է ի գնացս ջուրց»: Զի *որպէս ծառ*՝ որ տնկեալ է ի գնացս ջուրց, *անթարշամ* է, նոյնպէս և որ *զպատուիրանս աստծոյ* քննէ, և այնմ *հոգ տանի ի տուէ և ի գիշերի,* այնպէս անթարշամ մնայ յայսմ ի կեանս. և զամե-

նայն զոր ինչ առնէ, յաջողէ նմա աստուած: *Երգ երգոցդ* է *օրհնութիւն օրհնութեանց*. ....Եւ զոր ինչ անդ կայ պահի պարգևք սրբոց՝ անհիմանալիք, և զտռփումն սիրոյ սրբոցն որ առ Քրիստոս[9], որ *արեամբ* և *մահու չափ* կրեցին յանձինս, սիրելով զՔրիստոս, որպէս և նա զմեզ: ....Այլ ինքն զանդամեան *զգեցաւ մարմին*, և զմահ նորա յինքն առ[10], և իրաւամբք փրկեաց: ....Զայս ամենայն պատմէ *Երգ երգոցն* (Նարեկ. Երգ., էջ 389-392): Են մեղք՝ որ *մահու չափ* են (Փարպ., էջ 417):

1. *Աման պատգամաց* – պատգամների ընդունարան:
2. *Ընդյօժարութեանն* - (սրտի բարի) կամքով:
3. *Խոնարհեցո՛* - խոնարհեցրո՛ւ:
4. *Անդէն*–այստեղ՝ *անմիջապես:*
5. *Խնդացի ընդ այս*– ուրախացա այս բանի համար:
6. *Առ ի քննել զգիրս*– գիրքը քննելու համար:
7. *Որ է զուշակ*– որը նշան է:
8. *Զհատուցումն խորհելոյն* – հատուցման վերաբերյալ խորհելով:
9. *Զտռփումն սիրոյ սրբոցն որ առ Քրիստոս*– առ Քրիստոս սրբերի սիրո տռփանքը:
10. *Զմահ նորա յինքն առ*– նրա մահն իր վրա վերցրեց:

*6. Խմբավորե՛լ հետևյալ հաղորդակցական կայուն կապակցությունները՝ ըստ երկթև (T–աձև) աղյուսակի՝ բացատրելով նրանց իմաստները:*

1. Մի՛ խնայեր խրատել զտղայ. զի թէ հարկանես զգաւազանաւ, ոչ մեռանի:

2. Շատ է աւուր չար իւր:
3. Երկու հակառակք իրերաց՝ միմեանց ծախիչք են:
4. Շաբաթ վասն մարդոյ եղև, և ոչ մարդ վասն շաբաթու:
5. Բաժանեա՛, զի տիրեսցես:
6. Ոչինչ է խտիր ընդ բազումս կամ ընդ սակաւս:
7. Զուգութիւն է մայր բարեաց, և անզուգութիւն է ծնող չարեաց:
8. Վազեցին զինև:
9. Կենդանի՜ է անձն քո:
10. Մոլիս դու, դե՞ւ ուրեմն հարաւ ի քեզ:

**Հաղորդակցական ԿԿ**

| *Պարզ կառուցատիպ* | *Բարդ կառուցատիպ* |
|---|---|
| | |

*7. Հետևյալ կայուն կապակցությունների իմաստն արտահայտե՛լ մեկ բառով՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով* www.nayiri.com *կայքի գրաբարի էլեկտրոնային բառարաններից.*

| | | |
|---|---|---|
| ձեռն տալ | ցուցական առնել | դաւ բերել |
| չհամարեալ յազգս | շնչակալ անօթք | այպն կատականաց |
| ուս դնել | երեսս առնել | ցան աստ անդ |
| առ ականէ | ի վերին երեսս | ապախտ առնել |

Նմուշ՝ *ապախտ առնել* – արհամարհել:

*Էլեկտրոնային բառարաններ*


1. *Ղազարեան Ռ. Ս.,* Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., Եր. համալս. հրատ., 2006:
2. *Ղազարեան Ռ. Ս.,* Գրաբարի դարձուածաբանական բառարան, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2012:


*8. Խմբավորե՛լ հետևյալ հաղորդակցական կայուն կապակցություններն ըստ դարձվածային և ոչ դարձվածային ենթատեսակների:*

1. Վախճան պսակէ զգործն:
2. Եղերո՛ւք միամիտք իբրև զաղաւնիս:
3. Միայն օգտիցն նեթ հայիք:
4. Որչափ մեծ է իշխանութիւն, դժուարին է մարդն:
5. Դարձո՛ զքեզ ի բարկութենէդ:
6. Անցո՛ զբաժակս զայս յինէն:
7. Երկիւղ թերահաւատութեան է նշանակ:
8. Բժի՛շկ, բժշկեա՛ զանձն քո:

| *Դարձվածային հաղորդակցական ԿԿ* | *Ոչ դարձվածային հաղորդակցական ԿԿ* |
|---|---|
| | |

*9. Հետևյալ հաղորդակցական կայուն կապակցությունները ենթարկե՛լ իմաստային (թեմատիկ) դասակարգման՝ ըստ տրված աղյուսակի:*

1. Յերկուց չարեաց փոքրագոյնն է ընտրելի:
2. Ամենայնի յաղթեաց ժիր ջան:
3. Կամ լիցի քեզ:
4. Օրհնեա՜ զմեզ, սո՛ւրբ հայր մեր:
5. Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք:
6. Միրեցէ՛ք զմիմեանս:
7. Լաւ է իմաստուն, քան հզօր, և հանճարեղ, քան զայն, որ ունիցի դաստակերտս մեծամեծս:
8. Յականջս անզգամի ամենևին մի՛ խօսիր, զի մի՛ անգոսնեսցէ զիմաստուն բանս քո:
9. Նմանն զնմանն գտանէ:
10. Ես՝ ձայն բարբառոյ յանապատի:

| Հաղորդակցական ԿԿ իմաստային խմբեր | | |
|---|---|---|
| *Մարդկային կյանք և հասարակական հարաբերություններ* | *Կրոն և հավատ* | *Գիտություն և իմացություն* |
| | | |

*10. Օգտվելով Լ. Մ. Խաչատրյանի «Գրաբարի ուսումնական բառարանից»՝ նշե՛լ տրված բազմիմաստ կայուն կապակցությունների իմաստները: Նրանցից երկուսի տարբեր (ոչ բոլոր) իմաստներով կազմե՛լ հոմանշային և հականշային զույգեր (կամ շարքեր):*

Ակն ածել, ընդ հակառակս ելանել, եղջիւր ածել, զմտաւ ածել, առաջի դնել, երդումն ուտել, ի վերուստ, վաւերական մատանի, ծաղր առնել, հուր հարկանել, մօտ ի մօտոյ, յանդիման առնել, դատ առնել, շտապ տագնապի, թափել զոգի, պնդել զանձն, քթթելական, դեղ դնել, թեկն ածել, ակն դնել:

*11. Հետևյալ կայուն կապակցությունները խմբավորե՛լ ըստ հոմանշային և հականշային զույգերի՝ լրացնելով աղյուսակը:*

Ոտնհար լինել (իմ), քան զիրեշտակս, ի վեր ելանել, իբրև դժոխք, յանզիւտ կորուստն յուղարկել (իմ), լքանել ի սիրտ, պաշտել որպէս զկայսր, նախանձ արկանել, վճարել (իմ) ի կենաց, նման եղեման դրախտին, յետս հարկանել, իբրև զաւելորդ ի բաց թքանել, մտանել ընդ լծով, բանալ զբերան, յաչս դնել, պապանձել որպէս համր դև, ամփոփել իբրև զցորեան ի շտեմարանս, քան զչափ մանանխոյ, իբրև զանմարմինս, երկրպագել իբրև տեառն, ելանել ըստ ձեռն ուրուք, սրտակաթ առնել, տապաստ անկանել (իմ), ժոյժ ունել (իմ), նախանձաբեկ առնել, մատնել զանձն ի կորուստ, քան զանաասունս ի վայր իջանել, քան զդրամ:

| *Հոմանշային ԿԿ* | *Հականշային ԿԿ* |
| --- | --- |
| | |

## Բ. Ուսանողների որոնողական-հետազոտական ունակությունների զարգացում

### Ինքնուրույն աշխատանք

*1. Օգտվելով առաջադրված հղումներից՝ համացանցից (վեբ-որոնում) ընտրե՛լ գրաբար տեքստով հոլովակներ, ներբեռնե՛լ առցանց ուսուցման հարթակ՝ դուրս գրելով կայուն կապակցությունները և խմբավորելով՝*

*ա) ըստ անվանողական և հաղորդակցական տեսակների,*

*բ) ըստ իմաստային տիպերի,*

*գ) ըստ թեմատիկ խմբերի:*

***Հղումներ***

1. https://sharakanner.blogspot.com
2. https://www.spasavor.blogspot.com
3. https://www.youtube.com

*2.*

*ա) Ռ. Ս. Ղազարյանի «Գրաբարի բառարանից» (հհ. Ա-Բ) դո՛ւրս գրել կայուն կապակցությունների խոսքիմասային (գոյականական, ածականական, բայական և մակբայական) տեսակների տասնական օրինակ և էլեկտրոնային տիրույթում ներկայացնե՛լ բառացանկի տեսքով:*

*բ) Օգտվելով Ռ. Ս. Ղազարյանի «Գրաբարի դարձուածա-բանական բառարանից», այլև Ա. Մ. Սուքիասյանի, Ս. Ա. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարա-նից»՝ կազմե՛լ գրաբար և աշխարհաբար համարժեք կայուն կապակցությունների հոմանշային և հականշային զույգեր*

*(կամ շարքեր) ընդգրկող էլեկտրոնային բառացանկ և ներկայացնել առցանց ուսուցման հարթակում:*

### *Բառարաններ*

1. *Ղազարեան Ռ. Ս.,* Գրաբարի դարձուածաբանական բառարան, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2012:
2. *Ղազարյան Ռ. Ս.,* Գրաբարի բառարան, հհ. Ա-Բ, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2000:
3. *Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա.,* Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 1975:
4. www.nayiri.com (*էլեկտրոնային բառարանների գրադարան*):

*3. Գրաբարյան մատենագրական երկերից ընտրե՛լ բնագրային որևէ հատված, արտահայտիչ ընթերցե՛լ, վերլուծե՛լ նրանում ի հայտ եկող կայուն կապակցությունները՝*

*ա) ըստ ներկառուցվածքային յուրահատկությունների (նախդիր-նախադրություններ ունեցող և չունեցող միավորներ),*

*բ) ըստ դարձվածային և ոչ դարձվածային ենթատեսակների (ձայնագրությունը կամ հոլովակը ներբեռնե՛լ առցանց ուսուցման հարթակ):*

*4. Օգտվելով տրված գրականությունից՝ համակարգչային Microsoft Power Point կամ Google ներկայացման միջոցով (մինչև 10 սահիկ) առցանց ուսուցման հարթակում ցո՛ւյց տալ գրաբարի կայուն կապակցությունների՝*

*ա) ձևակազմական-քերականական հատկանիշները,*

*բ) իմաստային առանձնահատկությունները:*

### ***Տեսական գրականություն***

1. *Աբրահամյան Ա. Ա.,* Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976:
2. *Բաղիկյան Խ. Գ.,* Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986:
3. *Բեղիրյան Պ. Ս.,* Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս» հրատ., 1973:
4. *Թումանյան Գ. Բ.,* Գրաբարի նախադրությունները (V-XI դդ.), Լեզվի և ոճի հարցեր, VII, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:
5. *Խաչատրյան Լ. Մ., Ավետիսյան Լ. Ն.,* Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XVI դդ.), Ե., «Զանգակ» հրատ., 2015:
6. *Սուքիասյան Ա. Մ.,* Ժամանակակից հայոց լեզու, Ե., Եր. համալս. հրատ., 1999:
7. *Քոսյան Վ. Ա.,* Գրաբարի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:

### ***Բառարաններ***

1. *Խաչատրյան Լ. Մ.,* Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Ե., «Զանգակ-97» հրատ., 2003:
2. *Խաչատրյան Լ. Մ.,* Գրաբարի ուսումնական բառարան, Ե., «Զանգակ» հրատ., 2013:
3. *Ղազարեան Ռ. Ս.,* Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., Եր. համալս. հրատ., 2006:
4. *Ղազարեան Ռ. Ս.,* Գրաբարի դարձուածաբանական բառարան, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2012:

5. www.nayiri.com (*էլեկտրոնային բառարանների գրադարան*)։

## Գ. Ուսանողների առցանց հաղորդակցական կարողությունների զարգացում

### Առցանց քննարկում *«Կայուն կապակցությունների ձևակազմական-քերականական և իմաստային առանձնահատկությունները զրաբարում»* թեմայով

*Ըստ նախընտրության՝ ուսումնասիրե՛լ տրված ենթաթեմաներից որևէ մեկը՝ ստեղծելով համապատասխան գծակարգեր և ներբեռնելով առցանց ուսուցման հարթակ՝ կայուն կապակցությունների վերաբերյալ քննարկում (հարց ու պատասխան) իրականացնելու և ձեռք բերված գիտելիքների՝ առցանց հաղորդակցման շնորհիվ ամփոփման համար։*

1. *Անվանողական կայուն կապակցությունների ձևաբանական դասակարգումը։*
2. *Անվանողական կայուն կապակցությունների շարահյուսական գործառույթները։*
3. *Հաղորդակցական կայուն կապակցություններ։*
4. *Տարբերակային կայուն կապակցություններ։*
5. *Կայուն կապակցությունների իմաստային խմբերը։*
6. *Կայուն կապակցությունների իմաստային տիպերը։*
7. *Կայուն կապակցությունների ներկապակցական իմաստային հարաբերությունները։*
8. *Կայուն կապակցությունների միջկապակցական իմաստային հարաբերությունները։*

## ՀԱՎԵԼՎԱԾ

## Ա. ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿ

Ազատ կապակցություններ - 63, 120, 122, 128

Ածական // մակբայ երկարժեքություն ցուցաբերող կապակցություններ - 44

Ածականական կայուն կապակցություններ - 40, 58, 63, 132

Ածականական հականիշ կայուն կապակցություններ - 92, 109, 132

Ածականական հոմանիշ կայուն կապակցություններ - 92, 109

Ածականի արժեք ունեցող կայուն կապակցություններ - 43

Ամբողջական վերաիմաստավորմամբ կայուն կապակցություններ - 74

Անվանական հաղորդակցական կայուն կապակցություններ - 23

Անվանողական կայուն կապակցություններ - 20, 29-30, 32, 39, 43, 49, 76, 80-82, 142

Անվանողական կայուն կապակցությունների դասակարգում ըստ ձևաբանական արժեքի - 43

Անվանողական կայուն կապակցությունների իմաստային խմբեր - 72

Անվանողական կայուն կապակցությունների իմաստային տիպեր - 72

Անվանողական կայուն կապակցությունների շարահյուսական գործառույթներ - 142

Առանց նախդիր – նախադրությունների անվանողական կայուն կապակցություններ - 34

Առանց նախդիր - նախադրությունների կայուն կապակցություններ - 29, 125

Առանց նախդիր - նախադրությունների հաղորդակցական կայուն կապակցություններ - 35

Առանց վերահիմաստավորման կայուն կապակցություններ - 77, 128
Բազմիմաստ կայուն կապակցություններ - 89-91, 101, 103, 109, 114
Բազմիմաստ կայուն կապակցությունների իմաստային իրացումներ - 90
Բաղադրիչների իմաստային կախվածության աստիճան - 77
Բաղադրյալ անվանումներ - 73
Բայական անդամի լրացումների գործառույթներ ունեցող կայուն կապակցություններ - 49
Բայական կայուն կապակցություններ -40, 63, 132
Բայական հականիշ կայուն կապակցություններ - 92, 109
Բայական հոմանիշ կայուն կապակցություններ - 92, 109
Բայի արժեք ունեցող կայուն կապակցություններ - 43
Բառակապակցական կայուն կապակցությունների կառուցատիպեր - 64
Բառակապակցության կառուցվածքի կայուն կապակցություններ - 24
Բառային (հոմանշային) տարբերակներ - 36, 38, 58, 62-63
Բարդ հաղորդակցական կայուն կապակցություններ - 28
Բացառական խնդրով նախադրությամբ կայուն կապակցություններ - 131
Բացառական խնդրով նախդրավոր կայուն կապակցություններ - 129
Բուն հոմանշային (համանիշ) կայուն կապակցություններ - 93
Գոյական // ածական երկարժեքություն ցուցաբերող կապակցություններ - 44
Գոյական // ածական // մակբայ եռարժեքություն ցուցաբերող կապակցություններ - 44
Գոյական // մակբայ երկարժեքություն ցուցաբերող կապակցություններ - 44
Գոյականական անդամի լրացումների գործառույթներ

ունեցող կայուն կապակցություններ - 49

Գոյականական հականիշ կայուն կապակցություններ - 92, 109

Գոյականական հոմանիշ կայուն կապակցություններ - 92, 109

Գոյականական կայուն կապակցություններ - 39, 58, 132

Գոյականի արժեք ունեցող կայուն կապակցություններ - 39, 43

Գործիական խնդրով նախադրությամբ կայուն կապակցություններ - 131

Գործիական խնդրով նախդրավոր կայուն կապակցություններ - 129

Դարձվածային անվանողական կայուն կապակցություններ - 76

Դարձվածային արտահայտություններ - 73

Դարձվածային կայուն կապակցություններ - 72, 75, 125

Դարձվածային հաղորդակցական կայուն կապակցություններ - 136

Դարձվածային միասնություններ - 75

Դարձվածային սերտաճումներ - 75

Դարձվածայնորեն կապված անդամ (անդամներ) - 74

Դարձվածքներ - 4, 16, 40, 71, 73-74, 90

Դիմավոր հաղորդակցական կայուն կապակցություններ - 23

Ենթակայի գործառույթ ունեցող կայուն կապակցություններ - 49

Երկզագաթ (երկբևեռ) կայուն կապակցություններ - 20-22, 25, 58, 63

Երկկազմ հաղորդակցական կայուն կապակցություններ - 63

Ընդարձակ կայուն կապակցություններ - 28

Իդիոմատիկ արտահայտություն(ներ) - 74, 114

Իդիոմատիկ կայուն կապակցություններ - 75

Իդիոմներ - 74-75, 109

Իմաստային (թեմատիկ) խմբեր - 4, 14, 71, 79, 83, 113, 142

Իմաստային կառուցվածք - 88, 90

Իմաստային հակադրություն - 96

Իմաստային հարաբերություններ – 4-5, 71, 88-89, 114

Իմաստային միջկապակցական հարաբերություններ - 14, 72

Իմաստային ներկապակցական հարաբերություններ - 14, 72

Իմաստային նույնականություն - 35

Իմաստային պատճառաբանվածություն - 73

Իմաստային տիպեր - 4, 14, 71-72, 114, 125, 139

Լեզվական տարբեր գոյավիճակներում միավորների դրսևորած ընդհանրություններ - 55

Լեզվական տարբեր գոյավիճակներում միավորների դրսևորած տարբերություններ - 55

Լիարժեք հականիշներ - 96-97, 106, 108-109

Խոսքիմաստային եռարժեք կայուն կապակցություններ - 64

Խոսքիմաստային երկարժեք կայուն կապակցություններ - 64

Խոսքիմաստային տարարժեքություն դրսևորող կայուն կապակցությունների իմաստարժեքային իրացում - 42

Խոսքիմաստային տարարժեքություն ցուցաբերող կայուն կապակցություններ - 44

Խոսքիմաստային տարբեր արժեքներով հատկանշվող (անվանողական) կայուն կապակցություններ - 44

Ծավալային տարբերակներ - 36-38, 63

Ծավալումով երկզագաթ կայուն կապակցություններ - 22

Ծավալումով միազագաթ կայուն կապակցություններ - 22

Կայուն կապակցության բառացի թարգմանություն աշխարհաբար համարժեքով - 99

Կայուն կապակցության փոխարինում իմաստով մոտ այդ կարգի այլ կապակցությամբ - 99

Կայուն կապակցության փոխարինում հոմանիշ բառով կամ ազատ բառակապակցությամբ - 99

Կայուն կապակցություններ՝ բարդ համադասական նախադասությունների կառուցատիպերով - 24

Կայուն կապակցություններ՝ բարդ ստորադասական նախադասությունների կառուցատիպերով - 24

Կայուն կապակցություններ՝ պարզ նախադասությունների կառուցատիպերով - 24

Կայուն կապակցությունները որպես միջմակարդակային իրողություններ - 63

Կայուն կապակցությունների արտահայտության դիտվածք - 35

Կայուն կապակցությունների բովանդակության դիտվածք - 35

Կայուն կապակցությունների դասակարգում ըստ իմաստային հարաբերությունների - 89

Կայուն կապակցությունների դասակարգում ըստ հաղորդակցման գործընթացի հետ ունեցած փոխհարաբերության - 24

Կայուն կապակցությունների դասակարգում ըստ ներկառուցվածքային յուրահատկությունների - 33

Կայուն կապակցությունների իմաստաբանություն - 14, 71, 115

Կայուն կապակցությունների իմաստային (թեմատիկ) դասակարգում - 84, 114

Կայուն կապակցությունների իմաստային (թեմատիկ) խմբեր - 79, 83, 113, 142

Կայուն կապակցությունների իմաստային հատկանիշներ - 3, 6, 14-15

Կայուն կապակցությունների իմաստային հարաբերություններ - 88
Կայուն կապակցությունների իմաստային տիպեր - 72, 142
Կայուն կապակցությունների հականշային զույգեր - 139
Կայուն կապակցությունների հականշային շարքեր - 137
Կայուն կապակցությունների հոմանշային զույգեր - 139
Կայուն կապակցությունների հոմանշային շարքեր - 137
Կայուն կապակցությունների հոմանշային տարբերակներ - 92
Կայուն կապակցությունների ձևաբանական դասակարգում - 39
Կայուն կապակցությունների ձևակազմական-քերականական հատկանիշներ - 3, 5-6, 14-15, 122, 140
Կայուն կապակցությունների միջկապակցական իմաստային հարաբերություններ - 142
Կայուն կապակցությունների ներկապակցական իմաստային հարաբերություններ - 142
Կայուն կապակցությունների ներկառուցվածքային յուրահատկություններ - 28
Կայուն կապակցությունների շարահյուսական գործառույթներ - 44
Կայուն կապակցությունների տարբերակներ - 35
Կառույցների զերադաս բաղադրիչներ - 40
Հականիշ կայուն կապակցություններ – 89, 92, 96-97, 109-110
Հականշային զույգեր - 137- 139
Հականշային կայուն կապակցությունների իմաստային խմբավորում - 115
Հականշային շարքեր - 110, 137, 140
Հաղորդակցական կայուն կապակցություններ - 14, 23-24, 27-28, 32-35, 58, 63-64, 72-75, 80-82, 87, 135-137, 142
Հաղորդակցական կայուն կապակցությունների դարձ-

վածային և ոչ դարձվածային ենթատեսակներ - 136

Հաղորդակցական կայուն կապակցությունների իմաստային (թեմատիկ) դասակարգում - 137

Հաղորդակցական կայուն կապակցությունների իմաստային խմբեր - 72, 137

Հաղորդակցական կայուն կապակցությունների իմաստային տիպեր - 72

Համադասական կայուն կապակցություններ - 28

Համանիշ կայուն կապակցություններ - 93

Համառոտ կայուն կապակցություններ - 28

Համարժեք կայուն կապակցությունների համեմատական վերլուծություն - 98

Համեմատություն-դարձվածային արտահայտություններ - 30-31

Հայցական խնդրով նախադրությամբ կայուն կապակցություններ - 131

Հայցական խնդրով նախադրավոր կայուն կապակցություններ - 129

Հոմանիշ կայուն կապակցություններ - 89, 93-94, 109-110

Հոմանշային զույգեր – 137-138

Հոմանշային շարքեր - 110

Հոմանշային տարբերակներ (նույնանիշներ) - 92-94

Ձևաբանական տարբերակներ – 36, 38, 58, 63

Ձևաբանորեն դասակարգվող հականիշ կայուն կապակցություններ - 109

Ձևաբանորեն դասակարգվող հոմանիշ կայուն կապակցություններ - 109

Մակբայական կայուն կապակցություններ - 41, 58, 63, 132

Մակբայական հականիշ կայուն կապակցություններ - 92, 109

Մակբայական հոմանիշ կայուն կապակցություններ 92, 109

Մակբայի արժեք ունեցող կայուն կապակցություններ - 43

Մասնակի վերաիմաստավորում ունեցող դարձվածային միավորներ - 74
Մենիմաստ կայուն կապակցություններ – 89-91, 101, 103
Միաբևեռ դարձվածային միավորներ - 74, 109, 114
Միաբևեռ կայուն կապակցություններ - 21, 75
Միազազաթ կայուն կապակցություններ - 20-22, 25
Միակազմ հաղորդակցական կայուն կապակցություններ - 63
Միջկապակցական իմաստային հարաբերություններ – 4-5, 89, 92
Միջկապակցական իրողություններ - 92
Միջմակարդակային իրողություններ - 19
Նախադասության ձևավորում ունեցող կայուն կապակցությունների միակազմ և երկկազմ ենթատեսակներ - 27
Նախադասության ձևավորումով կայուն կապակցություններ - 14, 24, 123
Նախադասության շարահյուսական դիտվածքում կայուն կապակցությունների գործառույթներ - 46
Նախադրություններով կայուն կապակցություններ - 28, 30, 33, 131
Նախադրություններով (հետադրություններով) անվանողական կայուն կապակցություններ - 29
Նախդիր-նախադրություններ չունեցող կայուն կապակցություններ - 32
Նախդիր-նախադրություններ ունեցող հաղորդակցական կայուն կապակցություններ - 32
Նախդիր-նախադրություններով անվանողական կայուն կապակցություններ - 34
Նախդրավոր անվանողական կայուն կապակցություններ - 29
Նախդրավոր կայուն կապակցություններ - 33, 128-129
Ներկապակցական իմաստային հարաբերություններ – 4-5, 89-90
Ներկապակցական իրողություններ - 90
Նույնանիշ կայուն կապակցություններ - 93
Շարահյուսական տարբերակներ - 36, 38, 63
Ոճական հոմանիշներ - 92, 94, 109

Ոճեր - 4, 71
Ոչ դարձվածային անվանողական կայուն կապակցություններ - 76
Ոչ դարձվածային հաղորդակցական կայուն կապակցություններ - 136
Ոչ դարձվածային կայուն կապակցություններ - 73, 125, 128
Ոչ լիարժեք հականիշներ - 96-97, 106, 108-109
Ոչ փոխաբերական հարադրական բայեր - 73
Չծավալված երկզագաթ կայուն կապակցություններ - 22
Չծավալված միազագաթ կայուն կապակցություններ - 22
Պարզ հաղորդակցական կայուն կապակցություններ - 28
Սեռական խնդրով նախադրությամբ կայուն կապակցություն - 131
Սեռական խնդրով նախադրավոր կայուն կապակցություն - 129
Ստորադասական կայուն կապակցություններ - 28
Ստորոգյալի գործառույթ ունեցող կայուն կապակցություններ - 49
Վերաիմաստավորված-դարձվածային կայուն կապակցություններ - 72, 77, 109, 128
Վերաիմաստավորում չունեցող (ոչ դարձվածային) կայուն կապակցություններ - 72-73, 109
Տարարժեք կայուն կապակցություններ - 42
Տարբերակային կայուն կապակցություններ - 37-38, 142
Տրական խնդրով նախադրությամբ կայուն կապակցություն - 131
Տրական խնդրով նախդրավոր կայուն կապակցություն - 129
Քերականական տարբերակներ – 36, 38, 58, 63

## Բ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

*Ագեւոր աստղ.* Գիսավոր աստղ, գիսաստղ:

*Ազատ առնել.* Ազատություն տալ, ազատել:

*Ածել զմտաւ.* Մտածել, միտքը բերել:

*Ածել ի համբոյր և ի քծինս.* Շողոքորթել:

*Ակն ածել. 1.* Պատկառել: 2. Ամաչել: 3. Կասկած՝ երկյուղ զգալ: 4. Հոգ տանել: 5. Աչքերն այս ու այն կողմ դարձնել:

*Ակն առնուլ.*
1. Երեսպաշտություն անել: 2. Նախապատվություն տալ մի բանի, գերադասել: 3. Ցանկանալ:

*Ակն արևու.* Արեգակ:

*Ակն արկանել.*
1. Ակնարկ գցել, թեթևակի նկարագրել: 2. Աչքով՝ հայացքով նշան անել, ակնարկել:

*Ակն դնել* / *Ակն դնել ումեք* — 1. Աչք դնել (մեկի վրա վատ մտքով): 2. Հետամուտ լինել:

*Ակն ընդական, ատամն ընդ ատաման, հաղ.* Աչքի փոխարեն աչքը (հանել), ատամի փոխարեն՝ ատամը:

*Ակն ի խոնարհ.* Խոնարհաբար, համեստորեն:

*Ակն ի ճանապարհ.* Կարոտով, անհանգիստ վիճակում, ապարդյուն սպասելով:

*Ակնակառոյց լինել (իմ)* / *Ակնկառոյց լինել (իմ)* — Աչքը հառել մի բանի, ակնապիշ՝ զարմացած նայել, աչք դնել, ակնկալել, սպասել, հույս ունենալ

*Ակն ունել (իմ).* Աչք պահել, ակնկալել, հույս ունենալ:

*Ահեղ դատաստան.* Հանդերձյալ կամ վերջին դատաստան:

*Աղ կնքեալ.* Կնքված աղ:

*Աղբաբոյնորովայն.* Քաղիրթ. կենդանիների փորի մեծ մասը, որի մեջ հավաքվում է աղբը:

*Աղեղն երկնից.* Ծիածան:

*Ամբառնալ զձեռն.* Ընդվզել, ձեռքբարձրացնել:

*Ամենայն աշխատութիւնք վարձատրութեամբ են յԱստուծոյ, հաղ.* Ամեն ինչ հատուցվում է Աստծուց: Ոչինչ չի մոռացվում:

*Ամենայն ինչ կատարեալ է, հաղ.* Ամեն բան կատարվեց, լրացավ:

*Ամենայն իրօք.* Ամենայն կերպով:

*Ամենայնի յաղթեաց ժիր ջան, հաղ.* Ջանքն ամեն բանի հաղթեց:

*Ամփոփել իբրև զգորեան ի շտեմարանս.* Որպես ամենաթանկ բան ամփոփել՝ պահել՝ պահպանել:

*Այս լինէր վասն օգնականութեան բարձրելոյն, հաղ.* Այս բանը լինում էր Աստծո օգնությամբ:

*Այր զօրաւոր.* զորավոր մարդ:

*Այրեցեալ գօտի.* Երկրագնդի սաստիկ շոգ կլիմա ունեցող գոտին, որ ընկնում է հասարակածից հյուսիս և հարավ:

*Այրընտիր լինել (իմ).* Ընտրությամբ մարտիկներ կամ զորք հավաքել:

*Այրուձի առնել.* Հեծելազունդ կազմել:

*Անազան ուրեմն.* Ուշ, վերջում:

*Անաչառ իբրև զարդարադատս.* Չափազանց արդար՝ անաչառ, արդարադատ:

*Անարատ քստ մարդկանէ.* Խիստ մաքուր՝ անբիծ:

*Անբեղուն միտս ունել (իմ).* Զարությամբ լցվել:

*Անգործ մեղու.* Բոռ, արու մեղու:

*Անգործ մեղու՝ լաւ է քան զժիր պիծակ, հաղ.* Անգործ մեղուն ժրաջան պիծակից լավ է: Հնազանդ մարդն իր կամքին ծառայող մարդուց լավ է:

*Անդ և անդր վաղվաղակի.* Իսկույն, միանգամից:

*Անդէն ի սկզբանէ.* Հենց սկզբից:

*Անդէն վաղվաղակի.* Իսկույն, տեղնուտեղը:

*Աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից.* Անմահության հույս՝ սպասում:

*Աներկիւղք իբրև զանմահս.* Խիզախ, անվեհեր:

*Անխալամ գէսք.* Մազեր առանց գլխի. մազերի փնջեր, որոնցով զարդարվում էին զինվորականները՝ կրելով տարբեր հարմարանքների՝ սաղավարտների՝ վահանների վրա:

*Անխառն իբրև զօղ.* 1. Չափազանց մաքուր, անխառն, անարատ: 2. Բարոյապես անեղծ:

*Անկանել (իմ) ընդ անթիւ ախտից ծառայութեան.* Արատավորվել, զեխության մեջ ընկնել:

*Անկանել (իմ) ի ձեռն սրոյ.* Սրով ընկնել, սպանվել:

*Անկանել (իմ) յարևէ.* Կյանքից զրկվել:

*Անկարօտք գոլով ըստ բնական պիտոյից, սակայն ի պէտս փառացն անյագ են, հաղ.* Ոչ մի բանի կարիք չունենալով հանդերձ անկուշտ՝ ընչաքաղց լինելու մասին: Ոչ մի բանի կարիք չունեն, սակայն փառքի հարցում անհագ են:

*Անհեղեղ անձամբ.* Հաղթանդամ, ամրակազմ:

*Անձին հրամայել.* Ինքն իրեն սպանել, ինքնասպան լինել:

*Անմխիթար մինչև ի մահ, ա./մ.* Մինչև մահ՝ չափազանց տխուր:

*Անողորմաբար որպէս գազանք.* Խիստ դաժան կերպով, անգթորեն:

*Անտես առնել.* Չտեսնելու տալ, անուշադրության մատնել, զանց առնել:

*Անտի առնել*<br>*Անտիս առնել* – Կյանքից զրկել:

*Այլ ընդ այլ, մ./ա.* Այս ու այն կողմ, դեսուդեն, ցրված, խառնակ:

*Այլ ընդ այլոյ, ա./մ.* 1. Մի բանի տեղ ուրիշ բան:

2. Խառն, շփոթ, խառնակ, խառնիխուռն, ներհակ:

3. Դեպի այս ու այն կողմ:

*Այպն կատականաց.* Ամոթ, խայտառակություն:

*Անցանել բանիւ*<br>*Անցանել գրով* – Խոսել, պատմել, շարադրել:

*Անցանել որպէս զարծուի սրաթև.* Չափազանց արագ ընթանալ՝ շարժվել:

*Անցեալ զաւուրբք.* Տարիքն առած, խոր ծերության հասած, զառամած, ծերացած:

*Անցին զմտաւ, հաղ.* Մտքիցս թռան:

*Անցո՛ զբաժակս զայս յինէն, հաղ.* Այս բաժակն ինձնից հեռացրո՛ւ: Մահվան բաժակն ըմպելու ժամը ինձնից հեռացրո՛ւ:

*Անցոյց զքեւ զմեղս քո, հաղ.* Մեղքերից (Աստված) թողություն տվեց: Մաքրագործեց քեզ:

*Անփույթ առնել.* Չհոգալ, չջանալ, անտեսել:

*Անօթ պատերազմի.* Պատերազմական՝ ռազմական գործիք՝ զենք:

*Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթք առ ի վարդապետել, հաղ.* Աշակերտները սովորելու մեջ՝ ծույլ, իսկ սովորեցնելու մեջ՝ փութաջան:

*Աշխատ առնել.* Նեղություն պատճառել, չարչարել:

*Աշխարհագիր առնել.* Մարդահամար անցկացնել:

| | |
|---|---|
| *Աչք հոգւոյ*<br>*Աչք մտաց* | Հոգու՝ մտքի աչք. իմացականություն, ներքին՝ հոգևոր տեսողություն: |

*Առ ականէ.* Դուր գալու համար, երեսպաշտությամբ:

*Առ աչս.* 1. Աչառությամբ, կողմնապահությամբ: 2. Աչքի երևույթի համար, ձևի համար, երեսանց, արտաքուստ:

*Առ աչս պարծել.* Արտաքուստ պարծենալ:

*Առ աչօք.* 1. Աչքի առաջ, դեմառդեմ: 2. Աչքին թվալով, երևակայաբար, կեղծ:

*Առ ետեղ.* Շատ արագ, իսկույն, տեղնուտեղը:

*Առ խուռն.* Խառն՝ շփոթ կերպով:

*Առ ժամանակ մի.* Միաժամանակ:

*Առ հասարակ.* 1. Հավասար չափով: 2. Ընդհանրապես: 3. Միասնաբար:

*Առ հարկի.* Հարկադրված լինելով, չկամենալով, ակամա, բռնի:

*Առ մի նուագ.* Միայն մեկ անգամ, մի անգամի համար:

*Առ յափոյ.* Հանպատրաստից, իսկույն:

*Առ ոչինչ գրել*
*Առ ոչինչ համարել* — Բանի տեղ չդնել, անտեսել, արհամարհել:

*Առ ոտն կոխել*
*Առ ոտն հարեալ կոխել* — Ոտնատակ անել, կոխկռտել:

*Առոտս.* Մոտը, առընթեր:

*Առանցիկ ճառ.* Առասպել:

*Առաջաղնել.* Գլուխների բաժանել (գիրքը):

*Առաջի արկանել.* Ձեռնարկել, գործադրել, նպատակ դնել:

*Առաջի դնել.* 1. Մտադրվել, մտքում դնել, աչքի առաջ ունենալ: 2. Ձեռնամուխ լինել, ձեռնարկել, սկսել:

*Առատ քան զգինի.* Չափազանց շատ, խիստ առատ:

*Առաւել քան զականս պատուականս, ա.* Չափազանց լավ՝ ընտիր՝ թանկ: *մ.* Չափազանց, խիստ, սաստիկ, շատ-շատ:

*Առն լինել (իմ).* Ամուսնանալ (կնոջ մասին):

*Առնուլ զկերպարանս մահու*
*Առնուլ զհրաժեշտ մեղանչական կենցաղոյս* — Մահկանացուն կնքել, մահանալ:

*Առնուլ ի գերութիւն.* Գրավել, գերեվարել:

*Առնուլ ի կնութիւն.* Կնության առնել, ամուսնանալ:

*Առնուլ յանձն.* Հանձն առնել, ստանձնել, ընդունել, համաձայնել:

*Ապախտ առնել.* Բանի տեղ չդնել, արհամարհել:

*Ապաստան առնել.*
1. Ապավինել:
2. Վստահելով հանձնել մեկին:

*Ասպատակ առնել*
*Ասպատակ սփռել* — Ձիավոր զորք ղնել կողոպտելու համար:

*Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս, հայր.* Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ:

*Աստուած կենդանի.* Կենդանի Աստված, Տեր:

*Աստուածագործ զօրութիւն.* Աստծո գործած՝ կատարած հրաշք:

*Աստուածեղէն գիրք.*
Սուրբ գիրք, Աստվածաշունչ:

*Ատեան հարցափորձի.* Հրապարակային հարցուփորձի տեղ, դատական դահլիճ:

*Արագ քան զմիտս*
*Արագապէս որպէս թռչունք* — Չափազանց արագ:

*Արեամբ չափ, ա./մ.* Խիստ շատ:

*Արեամբ քրտամբ չափ մարտնչել (իմ).* Շատ-շատ պայքարել, մարտնչել:

*Արեան կցորդ.* Արյունակից, հարազատ:

*Արեան չափ,* տե՛ս *Արեամբ չափ:*

*Արիւն ձեր ի գլուխ ձեր, հայր.* Ձեր արյունը ձեր գլուխը: Մեղքը ձեր վիզը:

*Արծաթ կենդանի.* Սնդիկ:

*Արկանել ընդ կապանաւք.* Ազատությունը խափանող արգելքի տակ ղնել, կապանք ղնել:

*Արկանել ընդ վնասիւք.* Վնասի ենթարկել:

*Արկանել ի սուր սուսերի.* Սրի մատնել, սրի քաշել, կոտորել:

*Արուեստաւոր գործաւոր.* Արհեստավոր վարպետ:

*Արտ ևս քան զչափն.* Չափազանց, չափից դուրս, շատ-շատ:

*Արտաքոյ կարգի.* Սովորական կարգից դուրս, արտակարգ:

*Արտաքոյ մտաց.* Խելքը զգած, խելագար:

*Արք աղեղանց.* Լավ նետաձիգներ:

*Արքունական ճանապարհ.* Լայն՝ բանուկ ճանապարհ:

*Արև կրել.* Ապրել:

*Արև տալ.* Արև ծագել:

*Աւազ աչք.* Միտք:

*Աւաչ ասել*
*Աւաջ ասել* } Երգել:

*Աւար առնուլ.* Ավար առնել, կողոպտել, թալանել:

*Բազմաշահ լինել (իմ).* Շատ շահ ստանալ, հարստանալ, ճոխանալ:

*Բազումք են կոչեցեալք, և սակաւք ընտրեալք, հաղ.* Շատերն են հրավիրված, բայց քչերն են ընտրված: Շատ մարդիկ կան, որոնք նվիրված են մի գործի, բայց քչերն են արժանավոր:

*Բազում իբրև զաւտեղս.* Խիստ շատ, անհամար:

*Բաժ առնել.* Արածի դիմաց վարձ ստանալ:

*Բաժանեա՛, զի տիրեսցես, հաղ.* Բաժանի՛ր, որպեսզի տիրես:

*Բակ առնուլ.* Պատել, շրջապատել:

*Բակ արեգական.* Արևի շուրջը եղած ծիրանի գոտի:

*Բան*
*Աստուծոյ*
*Բան*
*Աստուծոյ*
*էական*
*Բան Հօր*
*Բան*
*փրկչին*
} Աստծո խոսքի մարմնացումը, Աստծո միածին որդին. Քրիստոս:

*Բանալ զբերան.* Բերան բացել խոսելու համար:

*Բանին ծառայել.* Տառին՝ բառացի իմաստին հետևել:

*Բանիւ բերանոյ.* Բերանացի:

*Բանիւք իւրեանց խոցեն որպէս սրով, հաղ.* Իրենց խոսքերով խոր խոցում են:

*Բանտարգել առնել.* Բանտը գցել, բանտարկել:

*Բանք Ժողովողի.* Սողոմոն Իմաստունի և նրա գրքի պատգամները:

*Բանք Տեառն որպէս զարծաթ ընտրեալ և փորձեալ յերկրէ, հաղ.* Աստծո խոսքերը սուրբ են:

*Բառնալ թողուլ.*

Բարձիթողի անել, անուշադրության մատնել, անտեսել:

*Բառնալ ի կենաց.* Կյանքից զրկել, սպանել:

*Բառնալ ի վերայ ուսոց.* Հաղթահարել, ուսերից թոթափել:

*Բարեկամք մեծատանց բազումք, հաղ.* Հարուստների բարեկամները շատ են: Մարդիկ շահամոլ են: Հարուստներին են պատիվ մատուցում:

*Բարձի թողի առնել,* տե՛ս *Բառնալ թողուլ:*

*Բարձր պարանոց.* Վիզը բարձր ձգած, հպարտ:

*Բարձրագլուխ կամակարութեամբ.* Բացահայտորեն, անարգել:

*Բարով իմն.* Սիրալիր կերպով, սիրով, բարությամբ:

*Բաց ի բաց.* Բոլորովին:

*Բացաւ գլխով.*

1. Գլխաբաց: 2. Անամոթաբար:

*Բեկանել սրտի.* 1. Սիրտը կոտրվել: 2. Ջղջալ:
3. Վախենալ:

*Բերել ատելութիւն.* Թշնամանք ցույց տալ:

*Բժի՛շկ, բժշկեա՛ զանձն քո, հաղ.* Բժի՛շկ, ինքդ քեզ բժշկիր: Դեղ ունես՝ քո գլխին արա:

*Բուռն մարմնով.* Հաղթանդամ, ուժեղ:

*Բուռն ուսկերօք.* Ամրակազմ, ուժեղ:

*Գազան ի վայրէ.* Վայրի գազան:

*Գազանակուր դառնալ.* Գազանի կերակուր դառնալ:

*Գազանամարտ լինել (հմ).* Կռվել՝ մարտնչել գազանների հետ:

*Գալ ի ծնունդ* / *Գալ յաշխարհ* — Աշխարհ գալ, ծնվել:

*Գալարել զաղիս.* Աղիքները գալարվել, գութը շարժվել, կարեկցել:

*Գառն Աստուծոյ.* Հիսուս Քրիստոս:

*Գելուլ զսիրտ.* Սիրտը ճմլվել, ցավ զգալ, հուզվել:

*Գեղեցիկ իբրև զլուսին.* Խիստ գեղեցիկ, չքնաղ:

*Գեղեցիկ տեսլեամբ.* Արտաքնապես գեղեցիկ:

*Գեղեցկագոյն քան զսիրամարգ.* Շատ գեղեցիկ, չնաշխարհիկ:

*Գետոյ պէս սահել անցանել.* Խիստ շատ հոսել, հորդել:

*Գեր ի վերոյ, մ.* Ավելի շատ: *ա.* Կատարյալ, բարձրագույն:

*Գերազանց քան զմիտս.* Խելքից՝ մտքից վեր. անհնարին, անհասկանալի, անըմբռնելի, չափազանց:

*Գէր զհռչակելին և զվեհն ամենայն քերթողաց Հոմերոս.* Բոլոր բանաստեղծներից անվանի ու մեծ Հոմերոսից վեր՝ բարձր:

*Գինի ուրախ առնէ զմարդ, հաղ.* Գինին մարդուն ուրախացնում է:

*Գիրք Ժողովողի.* Հին կտակարանի գրքերից մեկը:

*Գիրք Մնացորդաց.* Հին կտակարանի պատմական գրքերից երկուսի անվանումը:

*Գոչել իբրև զառիւծ զայրացեալ.* Առյուծի

պես մռնչալ, խիստ հուզվել՝ զայրանալ, փոթորկվել:

*Գովեսցէ զքեզ ընկերն՝ և մի քո բերան, օտարն՝ և մի քո շրթունք, հաղ.* Թող քեզ քո ընկերը գովի, և ոչ թե քո բերանը, օտարը, և ոչ թե քո շուրթերը: Դու քեզ մի՛ գովիր, թող քեզ ուրիշները գովեն:

*Գումարտակ դնել.*
Գունդ կազմել, զորք գումարել՝ արձակել՝ հանել:

*Գունակ ի խաղս գնդակաց.* Շատ վատ՝ անելանելի վիճակում:

*Գրով դրոշմել.* Գրել, արձանագրել:

*Դադար տալ.* Վերջ տալ, վերջացնել:

*Դաշն հաւատոյ.* Հավատի խորհրդանիշ, հավատամք:

*Դաշնաւոր լինել (իմ).*
Դաշնակից դառնալ, դաշնակցել, միաբանվել:

*Դատ առնել.* Իրավունքը վերականգնել, դատել:

*Դառնագոյն քան զլեղի.* Շատ դառն:

*Դառնալ աւուր.* Երեկոյանալ:

*Դառնալ ընդ կրունկն.* Հետ դառնալ:

*Դատ դնել.* Դատ սկսել մեկի դեմ:

*Դատել սրով.* Սրակոտոր անել:

*Դարձո՛ զքեզ ի բարկութենէդ, հաղ.* Մի՛ բարկացիր: Զսպի՛ր քեզ:

*Դարձուցանել զխաւար առ լոյս.* Մութը՝ խավարը լույսի վերածել, լուսավորել:

*Դարձուցանել զսուր ի պատեան.* Խաղաղություն հաստատել, կռիվը՝ պատերազմն ավարտել:

*Դաւ բերել.* Դավ նյութել, դավաճանել:

*Դեղ դնել.* 1. Բուժել:
2. Սփոփել:

*Դեղակուր լինել (իմ).* 1. Թունավորվել: 2. Թունավորված մեռնել:

| | |
|---|---|
| *Դեն մազդեզանց* *Դենի մազդեզն* | Զրադաշտական կրոն, կրակապաշտություն: |

*Դէմ յանդիման.* 1. Դեմառդեմ, երես առ երես: 2. Դեմուդեմ, ճիշտ դիմացը: 3. Անձամբ:

*Դէտունել (իմ).* Ուշադրություն դարձնել: 2. Դիտել, զգուշությամբ նայել, զգուշանալ:

*Դիաթաւալ կացուցանել.* Գետին փռել, սպանել:

*Դիաթաւալ խաղալ.* Սպանվելով ընկնել, գետնի վրա թավալվել:

| | |
|---|---|
| *Դիպան ելանել* *Դիպան պատահել* | Դեմուդեմ, ճակատ առ ճակատ պատահել, դեմ դուրս գալ պատերազմով: |

*Դնել զիրս.* Մատենագրել:

*Դուռն արքունի.* Պալատ և պալատականներ:

*Դրան երէց.* Պալատի կամ եպիսկոպոսարանի քահանա:

*Դրօշեալ գիրք նուիրականք.* հիերոգլիֆներ:

*Ելանել ըստ ձեռն ուրուք.* Մեկի ենթակայությունից ազատվել:

*Ելեր զխրատով նորա, հաղ.* Նրա խրատն անտեսեցիր: Չլսեցիր նրան:

*Եկեղեցւոյ մանկունք.* Եկեղեցու սպասավորներ:

*Եղերո՛ւք միամիտք իբրեւ զաղաւնիս, հաղ.* Աղավնիների նման անմե՛ղ եղեք:

*Եղեւ ըստ դնել մտաց իւրոց, հաղ.* Ուզածի պես եղավ: Հիանալի եղավ:

*Եղիցի լոյս, հաղ.* Թող լույս լինի:

*Եղջիւր աճել.* 1. Եղջյուրներով խփել: 2. փխբ. Հոխորտալ, գոռոզանալ, սպառնալ, մեծ-մեծ խոսել:

*Ես ՝ձայն բարբառոյ յանապատի, հաղ.* Ես՝ խոսքի՝ աղաղակի ձայն անապատում:

Մեկի խոսքին լսող չկա, ինչպես անապատում խոսողին:

*Երանի տալ.* 1. Երանի ասել: 2. Մեկին երանելի՝ բարեբախտ համարել:

*Երգ երգոց.* Սողոմոն Իմաստունին վերագրվող «Երգ երգոց» գիրքը:

*Երդումն ուտել.* Երդումը դրժել, ուրանալ:

*Երեսս առնել.* Ակնածել, խոսքը կատարել, ուշ դարձնել:

*Երէց եկեղեցւոյ.* Եկեղեցական, քահանա:

*Երթալ զհետ.* Հետևել:

*Երկիր աւետեաց.* Խոստացած երկիրը. Պաղեստին:

*Երկիր պագանել.* Գետինը՝ հողը համբուրել՝ ի նշան խոնարհության և հարգանքի, երկրպագություն անել, երկրպագել:

*Երկիւղ ՝թերահաւատութեան է նշանակ, հաղ.* Վախը թերահավատության նշան է:

*Երկիւղ տեառն.* Աստվածավախություն, բարեպաշտություն:

*Երկնաւոր վարդապետութիւն.* Քրիստոնեություն:

*Երկու հակառակք իբերաց միմեանց ծախիչք են, հաղ.* Երկու իրար հակառակ բաները միմյանց ոչնչացնում են:

*Երկրպագել իբրև տեառն.* Խիստ շատ պաշտել՝ պատվել, փառավորել:

*Զահ տեառն զիտելով չափ, ա./մ.* Չափազանց շատ:

*Զամենայն ծառ ի պտղոյն ճանաչեմք: Զամենայն ծառ պտղովն ճանաչեմք:* } *հաղ.* Ամեն ծառ իր պտղով՝ պտղից ենք ճանաչում: Ամեն գործում կարևորն արդյունքն է:

*Զանձինս առ իմաստունս ունել (իմ).* Իրենք իրենց իմաստունների տեղ դնել:

*Զանց առնել զիմեքէ.* Մի բանից անցնել, մի բանի մասին չխոսել:

*Զառի թափ Զառի կող* } *ա./գ.* Զառիվայր. դեպի ցած կամ դեպի մի կողմ թեքված, թեք՝ շեղակի դիրք:

*Զարդ կայսերական.* Կայսերական զարդ, թագավորական նշան:

ԶԲանն Աստուած Որդի, տե՛ս *Բան Աստուծոյ, Բան Աստուծոյ էական, Բան Հօր, Բան փրկչին:*

*Զբօսամբ ածել.* Հնազանդեցնել, տիրել:

*Զգենուլ բանին զմարմին Զգենուլ զմարմին* } Մարմնավորվել իբրև մարդ, մարդկային մարմին՝ բնություն առնել (Քրիստոսի մասին):

*Զգիշերն ամենայն և զտիւն ամենայն.* Գիշեր-ցերեկ, շարունակ:

*Զգրովք գալ.* Գրքերով պարապել՝ զբաղվել:

*Զդիմի հարկանել դիւին.* Սատանայի հետ հանդիպել, սատանայի առաջ ելնել:

*Ջրողի հարկանել.* Դողալ, սարսափել:
*Ջերդ զապակի.* Խիստ հարթ և թափանցիկ:
*Ջերդ ի սզի.* Վշտաբեկ:
*Ջթիկունս դարձուցանել.* 1. Երես դարձնել մեկից, արհամարհել: 2. Փախչել:
*Ջի՞նչ էյարդ աւ ցորենաւ, հաղ.* Հարդն ի՞նչ է ցորենի համեմատ: Կարևորն անկարևորից զատել է պետք: Իրական արժեքն անցողիկ բաներից տարբերել է պետք:
*Ջկապ բերանոյն արձակել.* Սանձարձակ՝ լկտի խոսել:
*Ջհասարակ գիշերաւ.*
Կեսգիշերին:
*Ջհետ մտանել.* Հետամուտ լինել:

| | |
|---|---|
| *Ջհետ մտանել որպէս առիւծ ընդ նապաստակ* | Համառորեն հետապնդել: |

*Ջմտաւ ածել. 1.* Մտածել, խորհել:
2. Մտքում դնել:
Զմտօք զառանցեալ, տե՛ս *Արտաքոյ մտաց:*

*Զշանթակէզ հրոյն ապրեցաւ, հաղ.* Այրողփոթորկող կրակից ազատվեց: Մեծ փորձանքից փրկվեց:
*Զոր ինչ գրեցի՝ գրեցի, հաղ.* Իրենց մի անգամ ասած կամ գրած խոսքին հավատարիմ մնալու, հաստատակամ լինելու մասին դատողություն:
*Զոր օրինակ ձիւն սպիտակութեամբն.* Չափազանց սպիտակ, ձյունաթույր:
*Զուգութիւն է մայր բարեաց, և անզուգութիւն է ծնող չարեաց, հաղ.* Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը:
*Զուլամբ երթալ.* 1. Ջրու հետ գլխիվայր գլորվել:
2. Զեխության մեջ թավալվել:

*Չչարութիւն նիւթել.* Չար բան հնարել՝ նախապատրաստել՝ձեռնարկել:

*Ձտապանակ ուխտին.* Երբայեցիների մեջ՝ անփուտ փայտից շինված արկղ, որի մեջ պահում էին իրենց նվիրական սրբությունները (տասնաբանյա տախտակները, ոսկե սափորը և Աբրահամի ծաղկած գավազանը):

| | |
|---|---|
| *Ձտիւն ամենայն և զգիշերն ամենայն Ձտուրնջեան և ի գիշերի* | Գիշեր-ցերեկ, մշտապես, շարունակ: |
| *Ջօր հատանել Ջօրաժողով լինել (իմ)* | Զորք հավաքել (պատերազմելու համար): |

*Ջօրէն անասնոց, ա.* Անասունների պես, անմիտ՝ տխմար: *մ.* Լուռ՝ անխոս մնալով:

*Ջօրէն երկաթապինդ կապանօք.* Անելանելի վիճակում:

*Ջօրէն վաճառակա-նաց.*
Վաճառականների պես. տուրևառությամբ:

*Ջօրէն վարդի. 1.* Վառ կարմիր: 2. Շատ գեղեցիկ:

*Ջօրէն տարաշխար-հիկ.*
Օտարի պես, առանց հոգատարության, անտարբեր՝ անհոգի կերպով:

*Ջօրէն տղայոց.* Անփորձ կերպով, անմտորեն:

*Ըմպել զինի յարբենալ.* Հարբելու աստիճան գինի խմել, սաստիկ հարբել:

*Ընդ ակամբ հայել (իմ).* Աչքի տակով նայել, խոժոռ՝ խեթ՝ խիստ հայացքով նայել:

*Ընդ ահիւ անկանել (իմ).* Վախենալ, ահաբեկվել:

*Ընդ աղօտս.* Աղոտ կերպով, աղոտաբար:

*Ընդ այգն*
*Ընդ առաւօտն* — Լուսաբացին:

*Ընդ բնաւ.* 1. Ամենուրեք, 2. Բոլորը միասին:

*Ընդ գրով արկանել.* Գրի առնել, արձանագրել:

*Ընդ դատարկ բանէն համարս տալ.* Դատարկ բանի համար հաշիվ տալ:

*Ընդ երեկոյս.* Երեկոյանդեմ:

*Ընդ երեսս թքանել.* Թուքումուր՝ ամոթանք տալով նախատել, անարգել:

*Ընդ հակառակս ելանել.*
1. Դեմ կանգնել: 2. Մրցել:

*Ընդ ձեռամբ.* Իշխանության ներքո:

*Ընդ մահուամբ անկանել (հմ).* Մահվան ենթարկվել, մեռնել:

*Ընդ մէջ, մ.* Մեջտեղից: *գ.* Խտրություն երկու բանի միջև:

*Ընդ մի բերան.* Միաբերան, միաձայն:

*Ընդ միտ ածել,* տե՛ս *Զմտաւ ածել:*

*Ընդ յոլով եղանակս.* Շատ ձևերով:

*Ընդ ոտս առնել.* Ոտքի տակ տալ, ոտնակոխ անել, *փխբ.* արհամարհել:

*Ընդ սուր անցուցանել*
*Ընդ սուր հանել* — Սրի մատնել, սրի քաշել, կոտորել:

*Ընդ ցից հանել.* Ցից հանել, սպանել:

*Ընդ վայր հարկանել.* Երեսի վրա թողնել, լքել:

*Ընդ վնասիւք արկանել.* Վնաս հասցնել, վնասել:

*Ընթերցակից լինել (հմ).* Միասին ընթերցել՝ կարդալ:

*Ընկալարո՛ւք զգիտութիւն քան զոսկի ընտիր, հաղ.* Սիրո՛վ ընդունեք գիտությունը:

*Ընկալել քան զոսկի ընտիր.* Սիրով՝ ջերմորեն ընդունել՝ ընկալել:

*Ընչատեացք իբրև զան-կարօտս.* Աչքը կուշտ, խիստ լիացած:

*Ընտիր իբրև զարեգակն.* Շատ լավ, հիանալի:

*Ըստ այն յառաջել.* Մեկից առաջ անցնել:

*Ըստ անձանց կամս գնալ.* Ուզածի պես վարվել:

*Ըստ աչս.* Աչքին երևացածի պես, հարևանցի, աչառու-թյամբ:

*Ըստ առիծին գոչել,* տե՛ս *Գոչել իբրև զառիւծ զայրացեալ:*

*Ըստ Արարչին հրամայելն.* Արարչի հրամայածի՝ պատվի-րածի համաձայն, Աստծո կամքով:

*Ըստ գործոց մեղաց մերոց հատուցանէ մեզ Տէր, հաղ.* Տերը հատուցում է մեզ հա-մաձայն մեր գործերի:

*Ըստ կամաց*
*Ըստ կամի*
*Ըստ կամս*
*Ըստ կամս անձանց իւրեանց*
— Ուզածի պես, կամքի համա-ձայն:

*Ըստ կարգի.* Կարգ ու կանոնով, մեկ առ մեկ:

*Ըստ միտս*
*Ըստ մտաց*
*Ըստ մտի*
— տե՛ս *Ըստ կամաց, ըստ կամի, ըստ կամս, ըստ կամս անձանց իւրեանց:*

*Ըստ նմանութեան ամ-պոյ հոսել.* Առատորեն թափել՝ հոսեցնել:

*Ըստ նմանութեան արա-գաթև արծուոյ.* Չափա-զանց արագ:

*Ըստ նմանութեան հայելւոջ ցուցանել.* Շատ որոշակի՝ պարզ արտացոլել:

*Ըստ օրինակի երիտասարդի.* Անփորձությամբ, առանց երկար-բարակ մտածելու:

*Ըստ օրինակի տեառն մերոյ մեռանել (իմ).* Սուրբ մահով մեռնել:

*Ըստ օրինաց.* Օրենքով, կարգով, կանոնով:

*Ըստգիւտ լինել (իմ).* 1. Մեղադրելի լինել: 2. Հանդիմանել, մեղադրել: 3. Իմանալ, ճանաչել: 4. Հասնել փափագածին:

*Թագ առնուլ.* Թագ կրել, թագավորել:

*Թագ ի գլուխ.* Գլխին թագ դրած, թագ կրելով:

*Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ, հաղ.* Թագավորը եթե իմաստուն չէ, չի կարող իր վիճակի մեջ վայելուչ լինել:

*Թաւալ անկեալ գլոր խաղալ,* տե՛ս *Դիաթաւալ խաղալ:*

*Թափել զոգի.* Հոգին հանել, չարչարել:

*Թափել հրոյ.* Կայծ ցայտել:

*Թափել յերկրէ.* Հայրենիքից հեռանալ, պանդխտել:

*Թեկն ածել.* 1. Հետամուտ լինել՝ ձգտել մի բանի: 2. Թիկունք լինել՝ սատարել մեկին:

*Թևամուխ լինել (իմ)*
*Թևամուխ միջամուխ լինել (իմ)*
Ձեռք զարկել, ձեռնամուխ լինել, ձեռնարկել, խորամուխ լինել:

*Թէ թշնամւոյն չաղօթես որպէս քեզ, ապա լաւ է չաղօթել, հաղ.* Եթե թշնամու համար չես աղոթում (այնպես), ինչպես քեզ համար, լավ է չաղոթել:

*Թէ ունիցիք հաւատս որչափ զհատն մանանխոյ, հաղ.* Եթե մանանեխի հատի չափ հավատ ունենաք: Եթե գոնե մի փոքր հավատ ունենաք:

*Թիկունս դարձուցանել,* տե՛ս *Զթիկունս դարձուցանել:*

*Թմբրել (իմ) ի զինուոյ,* տե՛ս *Ըմպել զինի յարբենալ:*

*Թշնամանս դնել.* Անարգել, նախատել:

*Թշնամութիւն յուզել.* Կռիվ՝ պատերազմ բորբոքել:

*Թոպամահ առնել.* Գանակոծելով սպանել:

*Թուխ զգենուլ.* Սև հագնել, սուգ անել:

*Ժամն ընդ երեկոյ կոյս էր խոնարհեալ, հաղ.* Երեկոյացել էր: Երեկոյան կողմ էր:

*Ժաման լինել (իմ).* Ժամանակին գալ. հասնել:

*Ժառանգաւոր եկեղեցւոյ.* Եկեղեցու հոգևոր պաշտոնյա (դպիրներից մինչև քահանաները):

*Ժոյժ ունել (իմ).* 1. Դիմանալու ներքին ուժ ունենալ, տոկալ: 2. Ինքն իրեն զսպել: 3. Ուժ ունենալ, ուժը պատել:

*Ի բաց ընկեցիկ.* Արհամարհված, անարգ:

*Ի բացեայ, մ.* հեռու, հեռվից, *ա.* 1. Հեռավոր, օտար: 2. Բացօթյա:

*Ի բացէ ի բաց.* 1. Հեռվից: 2. Շատ հեռու: 3. Իսպառ, շատ-շատ:

*Ի բերանոյ աւանդել.* Բերանացի սովորեցնել:

*Ի բնէ.* Սկզբից ի վեր, հիմքից:

*Ի գուճս իջանել.* Ծնկի գալ, խոնարհվել:

*Ի գումարտակի.* Կռվի՝ պատերազմի մեջ:

*Ի դուրս ստանչել (իմ) որպէս փայլատականաց ճառագայթք.* Արագ՝ հանկարծակի դուրս թռչել:

*Ի թօթափել ական.*

Մի ակնթարթում, միանգամից, հանկարծակի:

*Ի լուր ականջաց.* Ականջով՝ անձամբ լսելով:

*Ի խաչ ելանել.* Խաչը ելնել, խաչվել:

*Ի ծածուկ.* Գաղտնի կերպով:

*Ի ծովէ մինչև ի ծով.* Ծովից ծով:

*Ի կամաց*
*Ի կամս սրտին* — տե՛ս *Ըստ կամաց, ըստ կամի, ըստ կամս, ըստ կամս, անձանց իւրեանց:*

*Ի կայս և ի կոյս.* Կողմերը, սահմանները, կողմերում, սահմաններում:

*Ի հիացման լինել (իմ).* Հիացմունք ապրել, հիանալ:

*Ի հնոց ժամանակաց հետէ.* Հնուց ի վեր, անհիշելի ժամանակներից:

*Ի հող դառնալ.* Հող դառնալ, հողի վերածվել:

*Ի ձեռն զաւազանի.* Միանգամից, հանկարծակի:

*Ի ձեռն հաւատոց*
*Ի ձեռն հրեշտակաց* — Հավատքով, հրաշքով:

*Ի մասնէ.* Մասնակիորեն, մասամբ:

*Ի մատենի հարկանել*
*Ի մատենի տալ* — Գրի առնել, գրել, արձանագրել:

*Ի մեծի տան.* Տիեզերքում:

*Ի միում վայրկենի.* Մի վայրկյանում, հանկարծակի:

*Ի միտ առնուլ.* Խելքը կտրել, հասկանալ:

*Ի մտի արկանել.* Մտաբերել, հիշել:

*Ի յայտբերել.*Երևան հանել՝ բերել, հայտնի դարձնել:

*Ի չքմեղս առնուլ.* 1. Անմեղ ձևանալ: 2. Ծածկվել:

*Ի սրտէ.* Ամբողջ սրտով, սրտանց, անկեղծորեն:

*Ի վայր կործանել (իմ).* Ցած ընկնել, կործանվել:

*Ի վեր ելանել.* 1. Վեր բարձրանալ, դեպի վեր գնալ: 2. *փխբ.* Բացահայտվել, հայտնի դառնալ:

*Ի վեր քան զլեզու մարդկան*
*Ի վեր քան զմիտս*
— տե՛ս *Գերազանց քան զմիտս:*

*Ի վերայ բերել.* Ավելացնել, շարունակել:

*Ի վերայ համբերութեան մարդոյն է, հաղ.* Համբերությունը մարդուն հատուկ է:

*Ի վերայ հասանել.* 1. Խելքը հասնել, հասկանալ: 2. Վրա հասնել, վրա գալ:
3. Հարձակվել:

*Ի վերին երեսս.* Արտաքուստ, երեսանց:

*Ի վերուստ.* 1. Բարձրից, 2. Երկնքից: 3. Ի բնե:

*Ի վէգ գալ.* Վիճել, հակառակվել:

*Ի տխրութեան ըմբռնել.* Տխրել, տրտմել, սգալ:

*Ի տուէ և ի գիշերի*
*Ի տուընջեան և ի գիշերի*
— տե՛ս *Զտիւն ամենայն և զգիշերն ամենայն, զտուընջեան և ի գիշերի:*

*Ի փախուստ դարձուցանել.*Հալածել, քշել:

*Իբր դառնութիւն եղեալ ընդ քաղցու, ա.* Խիստ տարբեր, հակադիր, հակոտնյա:

*Իբր օրինակ իմն թագաւորական պատիւ.*

1. Մեծ շուքով, փառքով: 2. Մեծարանքով, հարգանքով:

*Իբրև զառինք, ա.* Խիստ հնազանդ: *մ.* Հնազանդորեն:

*Իբրև դժոխք.* Դժոխային, սարսափելիորեն:

*Իբրև զածուխ սևանալ.* Սաստիկ սևանալ:

*Իբրև զամպ թռչել.* Չափազանց արագ ընթանալ՝ սահել՝ սլանալ, թռչել:

*Իբրև զայր.* Քաջաբար, խիզախորեն:

*Իբրև զանասունս,* տե՛ս *Զորէն անասնոց:*

*Իբրև զանխորհուրդս.* Անմտորեն, առանց ծանրութեթև անելու:

*Իբրև զանմարմինս, ա.* Հրեշտակային, ոգեղեն: *մ.* Հրեշտակաբար, հոգևորապես:

*Իբրև զաշտարակն Դաւթի.* Շատ երկար՝ բարձր, սլացիկ:

*Իբրև զապառաժ*
*Իբրև զապառաժ խստաքար* — *ա.* Խիստ դաժան, խստասիրտ: *մ.* Դաժանաբար:

*Իբրև զաստեղս բազմանալ.* Սաստիկ շատանալ, բազմանալ:

*Իբրև զարծաթ*
*Իբրև զարծաթ ընտիր* — Շատ պատվական, ընտիր, պայծառափայլ, մաքրամաքուր:

*Իբրև զարծաթ ի բովս.* Շատ թրծվելով, պայծառանալով, մաքրվելով, զտվելով, փորձության ենթարկվելով:

*Իբրև զարս,* տե՛ս *Իբրև զայր:*

*Իբրև զաւազ բազմանալ.* տե՛ս *Իբրև զաստեղս բազմանալ:*

*Իբրև զաւազ ծովու անթիւ*
*Իբրև զաւազ ծովու անչափ*
*Իբրև զաւազ ծովու բազում* — Խիստ շատ:

*Իբրև զաւելորդ ի բաց թքանել.* Ավելորդ համարելով՝ անարգելով դեն նետել՝ մերժել:

*Իբրև զզառինս* / *Իբրև զզառն* — տե՛ս *Իբրև զառինք:*

*Իբրև զլոյս առօթագին.* Չափազանց պայծառ՝ լուսավոր, կիզիչ:

*Իբրև զխաշինս ցրուեալս և վայրավատնեալս.* Ցիրուցան եղած, շատ վատ վիճակում:

*Իբրև զխարիսխ հաստատուն.* Չափազանց ամուր, զորավոր, անդրդվելի, տոկուն:

*Իբրև զծառայ.* Հպատակվելով, ծառայամտորեն:

*Իբրև զծուխ պակասել.* Արագ և անսպասելի սպառվել՝ անհետանալ՝ ի չիք դառնալ:

*Իբրև զկաղնի, ա./մ.* Պինդ կեցվածքով, հաստատուն:

*Իբրև զկաւեղէն անօթ փշրել.* 1. Արագորեն փշրվել՝ խորտակվել, 2. Խիստ տրտմել, վշտանալ:

*Իբրև զկեղն նռան.* Վառկարմիր:

*Իբրև զկենդանի ի գերեզմանի.* Սաստիկ վատ՝ անելանելի վիճակում:

*Իբրև զհուր* / *Իբրև զհուր բորբոքեալ* / *Իբրև հուր վառեալ* — *ա.* Շատ տաք: *մ.* Խիստ բորբոքված, մոլեգնորեն:

*Իբրև զձիւն սպիտակել.* Խիստ սպիտակել:

*Իբրև զմայրսն Լիբանանու բազումք.* Չափազանց շատ, անթիվ-անհամար:

*Իբրև զմարդիկ մեռանել.* Բնության օրենքով մահկանացուն կնքել:

*Իբրև զնահատակ առաքինի.* Առաքինաբար:

*Իբրև զշուն անպիտան ընդ վայր հաջել.* Զուր՝ ավելորդ տեղը խոսել, չարախոսել:

*Իբրև զշուն կատաղեալ խածանել.* Սաստիկ կատաղած՝ վիրավորել՝ վնասել:

*Իբրև զշուն մեռանել.* Չարաչար մահով մեռնել:

*Իբրև զշուշան.* Սպիտակափայլ, մաքրափայլ, շատ գեղեցիկ:

*Իբրև զոչխար*
*Իբրև զոչխարս* — *ա.* Խիստ հնազանդ: *մ.* Հնազանդորեն:

*Իբրև զպատուական մարգարիտն.* Շատ լավ՝ գովելի՝ պատվական, թանկագին:

*Իբրև զջահ վառել.* Լույսի՝ ջահի պես վառել՝ սկզբնավորել որևէ լավ բան:

*Իբրև զջորի.* Խիստ շատ աշխատելով:

*Իբրև զսառն ձմերայնոյ հալել (իմ).* Արագորեն սպառվել՝ անհետանալ:

*Իբրև զվայրենիս.* Դաժանաբար, վարենաբար, մոլեգնորեն:

*Իբրև զվէմ հաստատուն,* տե՛ս *Իբրև զխարիսխ հաստատուն:*

*Իբրև զտեսիլ հրեշտակաց.* Հրեշտականման, սքանչելի:

*Իբրև զփայլակն*
*Իբրև զփայլակն անկեալ յերկնից* — Շատ արագ և հանկարծակի:

*Իբրև զփոշի մանր.* Շատ մանր:

*Իբրև ի թանձրամած խաւարի.* Անհույս՝ անմխիթար վիճակում:

*Իբրև լուսաւորք ծագել (իմ).* Անսպասելի հայտնվել, լուսավորել:

*Իբրև ծառայ,* տե՛ս *Իբրև զծառայ:*

*Իբրև ծովի սաստիկ հողմոյ գալ ի ծփանս.* Հանկարծակի՝ անսպասելի ալեկոծվել՝ հուզվել՝ խռովվել:

*Իբրև հաւու խաղալ նովաւ.* Ծաղրուծանակի ենթարկել, ծաղրել:

*Իբրև հեղեղօք անձրևաց.* Առատորեն:

*Իբրև յաղբերականց հոսէին յաչաց իւրեանց, հաղ.* Առատ արցունք էին թափում:

*Իբրև յաղբերէ դիմել.* Խիստ ուժեղ ընթանալ, առատորեն և անվերջ թափվել:

*Իբրև ոչխարս,* տե՛ս *Իբրև զոչխար, իբրև զոչխարս:*

*Իբրև սաղմոս ասել.* Ինչպես սաղմոս՝ աղոթք՝ օրհնություն երգել, ինչպես սաղմոսարանով նվագել:

*Իբրև տէր.* Տիրաբար, ենթարկելով:

*Իմաստութեան ճառ.*
Գիտական ճառ:

*Իջանել իբրև զտեղատարափ ի վերայ խոտոյ.* Ուժգին թափվել:

*Իջանել իբրև զցօղ.* Սահուն՝ աննկատ իջնել՝ թափվել:

*Լաւ է իմաստուն, քան հզօր, և հանճարեղ, քան զայն, որ ունիցի դաստակերտս մեծամեծս, հաղ.* Իմաստունը լավ է հզոր մարդուց, և խոհեմ մարդը՝ մեծամեծ դաստակերտներ ունեցողից:

*Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք, հաղ.* Լավ է աչքով կույր լինել, քան մտքով կույր:

*Լաւ է յստակ խորհրդով ննջել, քան պիղծ խորհրդով աղօթս մատուցանել, հաղ.* Լավ է մաքուր մտքով քնել, քան պիղծ մտքով աղոթել:

*Լի աւուրբք,* տե՛ս *Անցեալ զաւուրբք:*

*Լիճ լուսոյ.* Աչք:

*Լիճ հրոյ.* Դժոխք:

*Լինել (իմ) ամայի.* 1. Անմարդաբնակ դառնալ՝ ամայանալ: 2. Զրկվել, լքվել:

*Լինել (իմ) իբրև զԵրուսաղէմ.* Խաղաղվել:

*Լիրբ քան զամենայն շուն.* Խիստ անամոթ՝ անպատկառ, լպիրշ:

*Լոյս առնուլ.* Լուսավորվել:

*Լու առնել.* Իմաց տալ, տեղեկացնել:

*Լուծանել ուրէք.* Մի տեղ իջնել, հյուրի պես մի տուն մտնել:

*Լուծանել զաանձս լեզուի.* Սանձարձակ՝ լկտի խոսել:

*Լուսաւոր վարդապետութիւն.* Քրիստոնեություն:

*Լուսաւոր որպէս ական բիբ.* Շատ լուսավոր՝ պայծառ, լուսափայլ:

*Լքանել ի սիրտ.* Ընկճվել, հուսահատվել, փխատվել:

*Խազմ առնել.* Վիճել, վիճաբանել:

*Խաղալ նովաւ իբրև հաւու,* տե՛ս *Իբրև հաւու խաղալ նովաւ:*

*Խայտալ զեկեղեցեաւ.* Եկեղեցուց անջատվել՝ առանձնանալ:

*Խանգար առնել.* Խռովություն առաջացնել:

*Խառնազնաց լինել (իմ).* Խառնակ վարքի տեր լինել:

*Խիստ պարանոց.* Համառություն:

*Խնդրել զվրէժ.* Վրեժխնդիր լինել, վրեժ լուծել:

*Խոզի նման.* Սաստիկ կեղտոտ՝ անմաքուր՝ փնթի, աղտեղասեր:

*Խռհական համձարով.* Խելացի՝ խոհեմ:

*Խոստանայ ի վերքան զմարդ, և քան զմժիխ ազդել ոչ կարէ, հաղ.* Մարդու ուժերից վեր խոստումներ է տալիս և ոչինչ չի կարողանում անել:

*Խորագէտք իբրև զօձս.* Շատ խոհեմ՝ խորամանկ՝ իմաստուն:

*Խորան սրբութեան.* Եկեղեցի, տաճար:

*Խորշ առնուլ առազաստից.* Առագաստները քամուց ուռչել:

*Խորշել ի ճանապարհաց ո-մանց իբրև ի պղծութեանց.* Խույս տալ, խուսափել, փախչել, գար-շել:

*Խորշիւ բան.* Խորհրդավոր խոսք:

*Խոցոտեցին զիս ի մահ, հար.* Սաստիկ մեծ ցավ պատ-ճառեցին՝ խոցոտեցին ինձ:

*Խոցոտել ի մահ.* Մահու չափ խոցոտել, վիրավորել՝ ցավ պատճառել:

*Խումբ առնել.* Խումբ կազմել, զորք հավաքել:

*Խուճապ տագնապի.* Սաս-տիկ իրարանցում՝ խուճապ:

*Խրախ առնել.* Ուրախացնել:

*Խօսել(իմ)զոքումեք.*Նշանա-դրել:

*Խօսել (իմ) ի խաղաղութիւն.* Խաղաղության բանակցություն սկսել:

*Խօսել (իմ) իբրև ընդ տղայս.* Խիստ արհամարհանքով՝ պար-զամիտ համարելով՝ խաբելով խոսել մեկի հետ:

*Խօսել (իմ) հաւու.* Աքաղաղը կանչել:

*Խօսս դնել.*Շարադրել:

*Խօսք հաւու.* Աքաղա-ղի կանչելը:

*Ծագել (իմ) իբրև զլոյս.* Լույսի պես ծագել՝ փայ-լել՝ պայծառանալ:

*Ծախս ծախել.* Ծախս անել:

*Ծաղր առնել.* Ծաղ-րուծանակի ենթարկել, ծաղրել:

*Ծառայել իբրև Աստու-ծոյ.* Խիստ նվիրված լինել՝ պաշտել:

*Ծափ զծափի հարկա-նել.*Ծափ տալ:

*Ծունր կրկնել.* 1. Շատ անգամ ծունր դնել:

2. *փխբ.* Երկրպագել:

*Կաթողիկէ եկեղեցի.* Ընդհանրական՝ տիե-զերական եկեղեցի:

*Կազմել զճակատն.* Ճակատ կազմել. նախա-պատրաստվել պատե-րազմի:

*Կալ աչաց.* Կուրա-նալ:

*Կալ յաղօթս.* Աղոթել:

*Կամ լիցի քեզ, հաղ.* Թող քո կամքը լինի:

*Կայսերակերպ զարդ,* տե՛ս *Զարդ կայսերական:*

*Կապարձս դարձուցանել.* Ապստամբել:

*Կարգ եկեղեցւոյ.* Հոգևորականություն:

*Կարգ ըստ կարգի.* Հաջորդաբար, կարգով:

*Կարգել զճակատն,* տե՛ս *Կազմել զճակատն:*

*Կարեվէր եմ մերձ ի մահ, հաղ.* Խիստ վիրավոր եմ:

*Կեանք յաւիտենական.* Հավիտենական կյանք. անմահություն:

*Կենդանի է անձն քո, հաղ.* Ապրած կենաս:

*Կիրք լուսնի.* Լուսնի փոփոխվելը:

*Կիցս ընկենուլ.* Չինազանդվել, անսաստ լինել:

*Կնիք առնուլ.* Կնքվել, մկրտվել:

*Կոծ ջերմացուցանել.* Սաստիկ լացացնել:

*Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալ է, հաղ.* Սխալ է կույրի կողմից կույրին առաջնորդելը (անտեղյակության՝ տգիտության մասին):

*Կռել դաշինս.* Դաշինք կնքել մեկի հետ:

*Կռել կոփել զդուռն.*
1. Դուռը ծեծել: 2. փխբ. Խնամախոսության գնալ:

*Կռուել ցմահ.* Կռվել մինչև մահ, պայքարել:

*Կտտամահ առնել*, *Կտտամահ սատակել* — Տանջանքներով սպանել:

*Կցորդ արեան,* տե՛ս *Արեան կցորդ:*

*Հալածական առնել.* Հալածել, դուրս քշել:

*Հակառակ կալ.* Դեմ կանգնել, հակառակվել:

| | |
|---|---|
| *Հակառակ որպէս սպիտակ թխոյ Հակառակ որպէս քաղցր դառին* | Խիստ հակադիր՝ հակոտնյա, հակառակ: |

*Համ և հաւան.* Միաբանված, սիրով, խաղաղությամբ:

*Համեմատ Յիսուսի.* Փրկչի՝ Հիսուսի նման. փրկելով:

*Հանգոյն մահու, մ./ա.* 1. Մինչև մահ, մեռնելու աստիճանին մոտ: 2. Մահվան հավասար, մահացու:

*Հանդէս հարցափորձի,* տե՛ս *Ատեան հարցափորձի:*

*Հանդերձեալ հուր.* Գալիք պատիժը. դժոխք:

*Հանել յայլ լեզու.* Թարգմանել:

*Հաշմ մտօք.* Խիստ հիմար՝ ապուշ:

*Հասանել ի թիկունս.* Օգնության գալ՝ հասնել:

*Հասանել յականջս.* Ականջին հասնել, լսել:

*Հատուած գնալ.* Ճանապարհվել, տեղափոխվել, գաղթել:

*Հատուցէ մարդոց ըստ իւրաքանչիւր գործոց նոցա, հաղ.* Հատուցելու է բոլոր մարդկանց համաձայն իրենց գործերի:

*Հարկս հարկանել.* Հարկեր վճարել:

*Հարկ զօրէնս լուծանէ, հաղ.* Դատողություն այն մասին, որ երբեմն կարիքն ստիպում է օրենքը զանց առնել:

*Հարկս հարկաւորաց, պատիւս արժանաւորաց, հաղ.* Հարկերը՝ հարկահավաքներին, պատիվները՝ արժանավորներին: Ամենքին պետք է իրենց արժանին տրվի:

*Հարուստ ժամս.* Բավական երկար ժամանակ, երկար ժամերով:

*Հարուստ մի.* Բավական հեռու:

*Հարուստ ոսկերօք,* տե՛ս *Բուռն ոսկերօք:*

*Հարցանել կենօք.* Կյանքին սպառնալով՝ տանջանքներով խոստովանություն կորզել:

*Հաւան լինել (հմ).* Համաձայնության գալ, համաձայնել, հավանել:

*Հաւանակից լինել (հմ).* Համաձայնել, ընդունել, անսալ:

*Հաւանք և հաւաստաւք,* տե՛ս *Համ և հաւան:*

*Հաւաստել անսանց անբանից.* Լուռ՝ անխոս՝ անմիտ՝ տխմար լինել:

*Հեղգ առ ուսումն.* Ուսման նկատմամբ ծույլ:

*Հզօր իբրև զկաղնի,* տե՛ս *Իբրև զկաղնի:*

*Հիւրամեծար զետոց.* Ծով:

*Հնազանդ լինել (հմ).* 1. Հնազանդվել, լսել, անսալ: 2. Նվաճվել, հպատակվել:

*Հոգ տանել (հմ).* Մի բանի հոգսը քաշել, հոգալ:

*Հոգւոյն աչք,* տե՛ս *Աչք հոգւոյ:*

*Հոծեալ լեզու.* Դժվար խոսող:

*Հուր հարկանել.* 1. Կրակ վառել: 2. Հրդեհել:

*Հրաժարել իբրև ի պղծոյ.* Գարշելով՝ սաստիկ զզվելով՝ ձեռք քաշել՝ հրաժարվել՝ մերժել:

*Հրձիգ առնել.* Կրակ տալ, հրկիզել, հրդեհել:

*Հրոյ ընդ խոտոյ ոչ ամուսնութիւն լինի, հաղ.* Իրար հակառակ բաները միմյանց ոչնչացնողներ են:

*Ձաղածանակ առնել.* Հրապարակային ծաղրուծանակի՝ անարգանքի ենթարկել, ծանակել:

*Ձայն ածել*
*Ձայն ամբառնալ*
*Ձայն արկանել* } Ձայն հանել, խոսել, ձայնել, գոչել:

*Ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ, հաղ.* Բազմության ձայնն Աստծո ձայնն է: Ճշմարիտը՝ արդարն այն է, ինչ որ հասարակության ընդհանուր կարծիքն է:

*Ձայն բառնալ*
*Ձայն շրջել* — տե՛ս *Ձայն ածել, ձայն ամբառնալ, ձայն արկանել:*

*Ձեռնղնել.* 1. Ձեռնադրել: 2. Ստորագրել:

*Ձեռն ի ձեռն.* Ձեռք ձեռքի, դեմառդեմ, երես երեսի:

*Ձեռն տալ.* Ձեռք մեկնել, օգնել:

*Ղակիշ ածել.* Բանակ դնել:

*Ճակատ կազմել*
*Ճակատ յարդարել* — տե՛ս *Կարգել զճակատն, կազմել զճակատն:*

*Ճակատյուզել,* տե՛ս *Թշնամութիւն յուզել:*

*Ճաշակել զաշխարհ.* Ամուսնանալ:

*Ճապաղիք արեան.* Մեծ արյունահեղություն, կոտորած:

*Ճառ արկանել.* Խոսք բացել, խոսք մեջ գցել:

*Ճշմարտութեան մօտ է, հաղ.* Ճշմարտանման է: Խելամիտ է:

*Ճռաքաղ առնել.* 1. Այգու մնացած հատուկենտ պտուղները և ողկույզները հավաքել: 2. Ամբողջապես կոտորել, մնացորդ չթողնել:

*Ճրագարան տեսութեանց.* Աչքեր:

*Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է, հաղ.* Չհասկացված մահը մահ է, հասկացված մահն անմահություն է: Ով չի հասկանում՝ ինչ է մահը, նրա համար մահը մահ է, իսկ ով հասկանում է, նրա համար մահն անմահություն է:

*Մահու երկիւղ.* Կորստյան՝ մահվան վախ՝ ահ՝ սպառնալիք:

*Մահու չափ*
*Մահուամբ չափ* } Տե՛ս *Հանգոյն մահու:*

*Մայր արեգական*
*Մայր արևու* } Արեգակի մայր մտնելու տեղը. արևմուտք:

*Մայր եկեղեցի.* Գլխավոր՝ աթոռանիստ եկեղեցի:

*Մայր վանուց.* Կանանց վանքի գլխավոր. մայրապետ:

*Մայր քաղաքաց.* Քաղաքամայր:

*Մատնել զանձն ի կորուստ*
*Մատնել զանձն ի մահ* } Կորստյան՝ մահվան մատնվել, մեռնել:

*Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի, հաղ.* Մարգարեն իր գավառում պատիվ չունի: Դատողություն ծննդավայրում ըստ արժանվույն չգնահատվելու մասին:

*Մարգարէապետ Հօր.* Մարգարեներից գուշակված Տերը. Քրիստոս:

*Մարդ ըստ պատկերի Աստուծոյ արարաւ, հաղ.* Մարդն ստեղծվեց Աստծո պատկերով:

*Մարտիրոսական խորան.* Մատուռ:

*Մաքուր որպէս զլոյս.*
1. Խիստ մաքուր, անբիծ:
2. Անբասիր, ողջախոհ, առաքինի:

*Մեծամեծս փքալ.* Մեծ-մեծ խոսել, հոխորտալ, գոռոզանալ:

*Մերժել ի կենաց,* տե՛ս *Բառնալ ի կենաց:*

*Մէջ գիշերի*
*Մէջ գիշերոյ* } Կեսգիշեր:

*Մթերք ուկւոյ.* Գանձարան:

*Մթերք որովայնի.* Փորոտիք:

*Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, հաղ.* Ձեր մարգարիտները խոզերի առաջ շաղ մի՛ տվեք: Վեհ գաղափարների մասին չարժե խոսել անգետ և նյութապաշտ մարդկանց մոտ, որոնք ունակ չեն հասկանալու:

*Մի՛ դատիք, զի մի՛ դատիցիք, հաղ.* Մի՛ դատե՛ք, որ Աստծուց չդատվեք: Ինչ չափով որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համար:

*Մի ըստ եզոջէ.* Մեկ առ մեկ:

*Մի՛ լինիր վկայ սուտ՝ ընկերի քում, և մի՛ խաբիր շրթամբք քովք, հաղ.* Ընկերոջդ հանդեպ սուտ վկա մի՛ եղիր և մի՛ խաբիր քո շուրթերով:

*Մի՛ խաբիր լրութեամբ որովայնի, հաղ.* Մի՛ խաբվիր, որ նրա որովայնը լիքն է:

*Մի՛ խնայեր խրատել զտղայ. զի թէ հարկանես զգաւազանաւ, ոչ մեռանի, հաղ.* Քո խրատը մի՛ խնայիր երեխային, որովհետև եթե գավազանով էլ զարկես նրան, չի մեռնի:

*Միայն օգտիցն նեթ հայիք, հաղ.* Միայն ձեր շահն է ձեզ հետաքրքրում:

| | |
|---|---|
| *Մինչև արևուն մտանելոյ*<br>*Մինչև ի մուտս արեգականն* | Մայրամուտին մոտ, երեկոյան կողմ, մինչև օրվա վերջը: |

*Միջամուխ լինել (իմ).* 1.Մեջը մտնել, մի երկրի սահմաններից ներս մտնել:
2. Խորամուխ լինել:

*Մնա՛ ոչ զանցաւոր կեանս, այլ զյաւիտենականն, հաղ.* Ապրի՛ր ոչ անցավոր, այլ հավիտենական կյանքով:

*Մոլիս դու, դե՞ւ ուրեմն հարաւ ի քեզ, հաղ.*

Գժվե՞լ ես, ինչ է, թե՞ դիվահարվել:

*Մտանել ընդ լծով.* Իշխանության՝ լծի տակ ընկնել:

*Մտանել իբրև զբոց հնոցի.* Սաստիկ չարչարվել՝ տանջվել՝ այրվել:

*Մտանել յարքայութիւնն Աստուծոյ.* Մտնել այն վայրը, որտեղ, ըստ կրոնական պատկերացումների, արդարների հոգիները մշտնջենապես երանավետ կյանք են վայելելու, երկնային թագավորություն՝ դրախտ մտնել:

*Մտօքն աղքատագոյն,* տե՛ս *Հաշմ մտօք:*

*Մրուր տալ.* Նախատել, անարգել:

*Մօտ ի մօտոյ.* 1. Մեկը մյուսին հաջորդելով: 2. Առաջիկայում:

*Յական թօթափել,* տե՛ս *Ի թօթափել ական:*

*Յականէ յանուանէ.* Անձամբ, թե՛ անունով, թե՛ դեմքով:

*Յականջս անզգամի ամենևին մի՛ խօսի՛ր, զի մի՛ անգոսնեսցէ զիմաստուն բանս քո, հաղ.*

Անզգամի ականջին ամենևին բան մի՛ ասա, որ նա չանարգի քո իմաստուն խոսքերը:

*Յակն առեալ սիրել.* Աչքը վրան պահած՝ սիրել:

*Յաղթ մարմնով,* տե՛ս *Բուռն մարմնով:*

*Յաճիւն փախճանել.* Հող՝ մոխիր դառնալ:

*Յամօթի լինել (իմ).* Ամաչել, ամոթ զգալ, խայտառակվել:

*Յայգէ մինչև ցերեկոյ.* Առավոտից մինչև գիշեր, շարունակ, մշտապես:

*Յայս կոյս.* Այս կողմը:

*Յայտ ածել*
*Յայտ առնել*
Հայտնի դարձնել, ցույց տալ:

*Յանգիւտ կորուստն յուղարկել (իմ).* Անդառնալի կորստի մատնվել:

*Յանդիման առնել.* 1. Ներկայացնել, ցույց տալ: 2. Հանդիմանել, խրատել:

*Յանց բստ հրաման օրհնաղրին մերոյ.* Տիրոջ հրամանին հետևելով, աստծո պատվիրանի համաձայն:

*Յաշտ առնել.* Զոհ մատուցել (զրադաշտական ծեսով):

*Յաչս դնել.* 1. Արհամարհել: 2. Համարձակվել:

*Յառաջ սահմանել*, *Յառաջագոյն սահմանել* — Նախասահմանել:

*Յառաջ քան զՆոյ.* Հնուց ի վեր, անհիշելի ժամանակներից:

*Յարնելս կոյս.* Դեպի արևելք:

*Յարնէ անկանել (իմ),* տե՛ս *Անկանել (իմ) յարնէ:*

*Յաւիտենական Հայր.* Աստված իբրև արարիչ ամենքի՝ մշտնջենական հայր:

*Յետս ընկենուլ.* Դեն գցել, մերժել, արհամարհել:

*Յետս հարկանել.* Վանել, մերժել:

*Յերկուց չարեաց փոքրագոյնն է ընտրելի, հաղ.* Երկու չարիքից նախընտրելի է փոքրագույնը:

*Յիշատակաց դպիր.* Հիշատակելու դեպքերն արձանագրող:

*Յոգիս ապաստան.* Մահամերձ:

*Յոչ կամաց.* Չկամենալով, չուզելով, ակամա:

*Յորդել (իմ) իբրև զհեղեղ*, *Յորդել (իմ) իբրև զհեղեղ անհուն* — Չափազանց ուժեղ՝ առատորեն հոսել, հորդել:

*Յուխտին կալ.* Կոած դաշինքին հավատարիմ մնալ:

*Նախ քան զմարմնով գալուստն Քրիստոսի.* Քրիստոսից առաջ:

*Նախակարգ բանի.* Առաջաբան:

*Նախանձաբեկ առնել.* Նախանձը շարժել, տանջել:

*Նախանձել (իմ) ընդ ումեք.* Մեկի հաջողությունը կամ բախտավորությունը տեսնելով՝ նախանձի զգացումով լցվել նրա նկատմամբ, նախանձել մեկին:

*Նկուն ելանել.* Ընկճվել, ենթարկվել, ամոթահար լինել:

*Նման անասնոյ,* տե՛ս *Զօրէն անասնոց, իբրև զանասունս:*

*Նման գայլոց.* Ագահաբար:

*Նման գայլոց յարձակել (իմ).* Ագահաբար՝ գազանաբար հարձակվել մեկի՝ մի բանի վրա:

*Նման դեղոց մահու.* Ոչնչացնելով, սպանելով:

*Նման եղեման դրախտին, ա.* Երանավետ: *մ.* Փափուկ՝ երանավետ կյանքով, հիանալի վիճակում:

*Նմանն զնմանն զտանէ: Նմանն զնմանն սիրէ, հաղ.* Մարդ սիրում է իր նմանին: Վատ մարդու ընկերն էլ վատը կլինի:

*Նման թռչնոյ.* Շատ արագ:

*Նման մեղուի, ա.* Աշխատասեր, ժրաջան: *մ.* Ժրաջանորեն:

*Նման յորդառատ անձրևի, ա.* Առատահոս, հորդառատ: *մ.* Ուժեղ՝ առատորեն թափվելով՝ հոսելով՝ հորդելով:

*Նման Յուդայի, ա.* Դավաճան: *մ.* Դավաճանաբար:

*Նման քաղցրութեան մեղու.* Շատ քաղցր՝ անուշ՝ հաճելի:

*Նշանք աստուածայինք.* Աստծուն հատուկ՝ աստվածային հրաշքներ:

*Շանց զունակ.* Շների նման, շատ-շատ, ծայրահեղորեն:

*Շաբաթ վասն մարդոյ եղև, և ոչ մարդ վասն շաբաթու, հաղ.* Շաբաթն է եղել մարդու համար, և ոչ թե մարդը՝ շաբաթվա համար: Օրենքը մարդու համար է, ուստի պետք է համապատասխանի նրա պահանջներին:

*Շատ է աւուր չար իւր, հաղ.* Ամեն օրվա համար բավական է իր (բերած) չարիքը: Չարժե ծանրաբեռնվել ավելորդ հոգսերով. յուրաքանչյուր օր իր հոգսն ունի:

*Շատախօսութեանն հոսանք իբրև յաղբերէ դիմեն, հաղ.* Սաստիկ շատախոսում են:

*Շնորհս առնել.* Շնորհել, ներել:

*Շնչակալ անօթք.* Թոքեր:

*Շտապ տագնապի,* տե՛ս *Խուճապ տագնապի*:

*Շրջել ի հաւատոց.* Հավատափոխ անել, մոլորեցնել:

*Ոգելն զչար.* Չարախոսություն, թշնամանք:

*Ոգի բերել.* Շունչ քաշել՝ առնել:

*Ոգւով չափ.* Ամբողջ հոգով, սրտանց:

*Ոգւով չափ սիրել.* Չափազանց շատ սիրել:

*Ողբամ զքեզ, Հայո՛ց աշխարհ, հաղ.* Ողբում եմ քեզ, Հայո՛ց աշխարհ: Արտահայտում է վիշտ (Հայաստանի համար):

*Ողն բեկանել (իմ).* 1. Մեջքը կոտրվել: 2. Ուժից ընկնել, ընկճվել:

*Ո՛ղջ երուք*
Ո՛ղջ էք:
Ո՛ղջ լերուք:
} *հաղ.* Ո՛ղջ եղեք:

*Ո՛ղջ լեր, հաղ.* Ո՛ղջ լինես:

*Ոճով երկրորդել.* Մեկ առ մեկ կրկնել (խոսքը):

*Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, հաղ.* Մարդը միայն հացով չէ, որ ապրում է: Դատողություն Աստծո խոսքի, հոգևոր արժեքների կարևորության մասին:

*Ոչ ոք է՝ որ հրով հուր շիջուցանէ, հաղ.* Ոչ ոք չի կարող կրակով հանգցնել կրակը: Ոչ ոք չի կարող չարիքով բարիքի հանդիպել:

*Ոչինչ է խտիր ընդ բազումս կամ ընդ սակաւս, հաղ.* Շատի և քչի միջև զանազանություն չկա: Շատի հետևից ընկնելով՝ կարելի է ոչնչի չհասնել:

*Ո՞վ է որ փուշ տնկէ՝ և խաղող կթիցէ. կամ որումն սերմանիցէ՝ և ցորեան հնձիցէ, հաղ.*

Փշից խաղող չեն քաղում, ոչ էլ տատասկից՝ ցորեն: Բարի մարդն իր սրտի բարի գանձերից բարին է բխեցնում, իսկ չար մարդը՝ չարը:

*Ոտնհար լինել (իմ), 1. ն.* Ընկածին աքացի տալ, *փխբ.* ընկածին ծաղրի ենթարկել, արհամարհել, չարախնդալ: *2. կ.* Աքացի՝ հարված կրել, *փխբ.* նախատինքի՝ ծաղրի ենթարկվել, արհամարհվել:

*Որ ընդ ունկն ոչ լսէ ընդ մկանունս տան լսել նմա: Որ ոչ լսէ ընկամբ, լուիցէ թիկամբ:* *հաղ.* Ով ականջով չի լսում, նրան մկանունքների միջոցով լսել են տալիս: Ում վրա խոսքը չի ազդում, նրան խրատում են ծեծելով:

*Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ, հաղ.* Ով ականջ ունի լսելու, թող լսի: Ով հավատում է, թող ապավինի Աստծուն:

*Որդի կորստեան.* Մահվան արժանի:

*Որդի մարդոյ*
*Որդի Միածին*
*Որդին*
*Աստուծոյ*

Աստծո միածին որդին. Քրիստոս:

*Որչափ ի մեծութիւն հասանիցես, ի խոնարհութեան կալջի՛ր զանձն, հաղ.* Որքան բարձրանաս, այնքան խոնա՛րհ եղիր:

*Որչափ մեծ է իշխանութիւն, դժուարին է մարդն, հաղ.* Որքան մեծ է իշխանությունը, այնքան դժնի է մարդը: Փառքին համարժեք փոխվում է և մարդը:

*Որչափ յական թօթափել.* Շատ արագ:

*Որպէս աղօթս առնել.* Աղոթքի պես՝ աղաչանքով, սրտի ուխտով՝ ջերմեռանդորեն անել՝ կատարել:

*Որպէս առիւծ ընդ նապաստակ, մ.* Խիզախորեն՝ գազանաբար հետապնդելով՝ հարձակվելով:

*Որպէս Աստուած.* Աստվածային զորությամբ կենդանացնելով՝ փրկելով՝ իշխելով՝ հատուցելով:

*Որպէս զունակ Արածանւոյ, ա.* Խիստ առատ, վարար, հորդահոս: *մ.* Վարարելով, առատորեն:

*Որպէս զունակ Բաբելովնի.* 1. Խառնակ, անկարգ, խառնիճաղանջ, ժխորաշատ: 2. Անտանելի:

*Որպէս զաղեղն հաստ.* Խիստ ամուր՝ պինդ՝ կարծր, չափազանց դիմացկուն՝ տոկուն:

*Որպէս զբարբարոս.* Անգթորեն, վայրենաբար:

*Որպէս ի խաւարէն զերծեալք ի լոյս.* Դժոխային՝ անմխիթար վիճակից ազատվելով՝ փրկվելով:

*Որպէս ի ծովու ալեկոծիմք, հաղ.* Սաստիկ հուզված ենք:

*Որպէս լոյս առխաւար, ա.* Հակոտնյա: *մ.* Լուսավորելով, խավարը ցրելով:

*Որպէս ծառ, ա./մ.* Հաստատուն:

*Որպէս ծառ անթարշամ.* Խիստ դիմացկուն, անթառամ, մնայուն:

*Որպէս ծնող, ա.* Գորովագութ: *մ.* Հայրաբար, մայրաբար, ծնողական սիրով:

*Որպէս կիսամեռք.* Մահվան եզրին գտնվողի՝ մահամերձի պես, անելանելի՝ վշտահար վիճակում:

*Որպէս հուր ինչ մոլեկան հրդեհի,* տե՛ս *Իբրև զհուր, իբրև զհուր բորբոքեալ, իբրև զհուր վառեալ:*

*Որպէս մեղու,* տե՛ս *Նման մեղուի:*

*Որպէս մեղու ընդդէմ ծաղկանց.* Ժրաջանորեն աշխատելով:

*Որպէս փախստէից հետամուտ լինել (իմ).* Համառորեն հետապնդել:

*Որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ, հաղ.* Ում շատ է տրված, նրանից շատ է պահանջվում: Տաղանդավոր մարդուց սպասում են մեծ գործեր:

*Ուխտաւոր Աստուծոյ.* Աստծո հետ ուխտ դրած, որևէ ուխտ ստանձնած,ուխտյալ:

*Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է, հաղ.* Ամեն ինչ ունայնություն է, ընդունայն է: Ամեն ինչ անցողիկ է:

*Ունել (իմ) ի մտի.* Մտքում պահել, հիշել:

*Ունել (իմ) յանձին.* 1. Հանձն առնել, ընդունել, ստանձնել: 2. Իր մեջ պարունակել:

*Ունկն դնել.* Ականջ դնել, լսել, ունկնդրել:

*Ունկնդիր լինել (իմ).* 1. Մեկի ասածն ունկնդրել: 2. Հնազանդվել, անսալ:

*Ուշ առնել*
*Ուշ առնուլ*
*Ուշ դնել*

1.Ուշադրություն դարձնել, նկատի ունենալ, մտքում դնել, հետամուտ լինել, ջանալ:
2. Դիտել, զգուշությամբ նայել, զգուշանալ:

*Ուշ ի կուրծս.* Ուշադրություն դարձնելով, լավ մտածելով, հիշելով, ջանալով:

*Ուշի մտօք.* Ամբողջ ուշադրությամբ:

*Ուս դնել.* Ոգորել, համառորեն դեմ կանգնել:

*Ուտել ցյագ.* Ուտել մինչև հագենալը, շատ-շատ ուտել:

*Չար առնել.* 1. Վատ բան անել: 2. Վնաս հասցնել, չարիք գործել:

*Չար քան զօձ.* Չափազանց չար:

*Չափ հասակաւ.* Միջահասակ:

*Չհամարեալ յազգս.* Ազգահամարի՝ տոհմաբանության մեջ չմտած, անտոհմիկ:

*Պակասել ի կենաց.* Մահանալ:

*Պահել իբրև զբիբ ական* / *Պահել իբրև զմարգարիտ պատուական* — Որպես ամենաթանկ բան պահել՝ պահպանել, չափազանց շատ սիրել:

*Պայթիւն երկնից.* Որոտում, ամպի գոռոց:

*Պայծառագոյն քան զլոյս.* Շատ պայծառ՝ ջինջ, լուսավոր, լուսափայլ:

*Պաշտել որպէս զկայսր.* Մեկին խիստ՝ չափազանց շատ մեծարել՝ հարգանք մատուցել՝ պատվել:

*Պաշտօն առնել* / *Պաշտօն հարկանել* — Մեծարել, երկրպագել:

*Պապանձել որպէս համր դեւ.* Հանկարծակի՝ անսպասելի լեզուն կապ ընկնել՝ համրանալ՝ կարկամել:

*Պատարագ մատուցանել.* Պատարագ մատուցել:

*Պատգամս յղել.* Լուր՝ հրաման ուղարկել:

*Պատուական քան զոսկի*, տե՛ս *Իբրև զպատուական մարգարիտն:*

*Պատուիրանք Աստծոյ.* Աստծո պատվիրանները:

*Պարզ սրտիք.* Պարզ՝ անկեղծ սրտով, անկեղծորեն:

*Պէս գունակ Բաբելովնի,* տե՛ս *Որպէս գունակ Բաբելովնի:*

*Պէս գունակ Տրդատայ.* Շատ հզոր՝ երևելի՝ փառավոր:

*Պիղծ իբրև զԵսաւ.* Խիստ պիղծ՝ զզվելի՝ զարշելի՝ ապականված:

*Պնդեա՛ իբրև այր զմէջ քո, հայ.* Խիզախաբար գոտեպնդվի՛ր:

*Պնդել զանձն.* 1. Ինքն իրեն սիրտ տալ, քաջալերվել: 2. Ինքն իրեն զսպել, ժուժկալել:

*Ջանալ հողմոյ.* Չնչին բանի հետևից ընկնել, իզուր աշխատել:

*Սակ արկանել.* Գին կտրել՝ նշանակել, սակարկել:

*Սահմանք քաջաց՝ զէնն իւրեանց, հայ.* Քաջերի սահմանն իրենց զենքն է: Քաջերի համար սահման չկա. որքան նրանց ուժը պատում է, զենքով գրավում են:

*Սարսափիւն զայ զոսկերօքն, հայ.* Ոսկրերի վրա դող է գալիս: Սարսափում է:

*Սարսուռ առնուլ.* Վախենալ, սարսափել:

| | |
|---|---|
| *Սեաւ իբրև զագռաւ*<br>*Սեաւ իբրև զկապերտ այծեայ* | Չափազանց սև: |

*Սիրել ըստ անձին.* Իր անձի պես՝ չափազանց շատ սիրել:

*Սիրեսցես զընկերն քո իբրև զանձն քո, հայ.* Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը:

*Սիրեցէ՛ք զմիմեանս, հայ.* Սիրե՛ք միմյանց:

*Սպաս առնել.* Հսկել, ուշադիր հետևել, խնամքով պահել՝ պահպանել:

*Սպասաւորական հոգիք.* Հրեշտակներ:

*Սպասաւորել հրամանի.* Հրամանը կատարել:

*Սպասաւո-րութիւն հարկանել*
*Սպասաւո-րութիւն մատուցա-նել* — Սպասարկել, ծառայել:

*Սպիտակ իբրև զեղեամն ի վերայ երկրի՝ սպիտակ իբրև զձիւն՝ սպիտակ որպէս զասր՝ սպիտակ որպէս զլոյս՝ սպիտակ որպէս զկաթն՝ սպիտակ քան զկաթն* — տե՛ս *Ձոր օրինակ ձիւն սպիտակու-թեամբն:*

*Սրբասէրք իբրև զանմար-մինս,* տե՛ս *Իբրև զանմարմինս (ա.):*

*Սրտաթափիլինել (իմ).* Ահա-բեկվել, սարսափել, զարհուրել:

*Սրտակաթ առնել.* Ջերմ սիրով համակել:

*Սրտի մտօք.* Անկեղծ սրտով, սրտանց, ամբողջ սրտով:

*Սքանչելի իբրև զտեսիլ հրեշտակաց,* տե՛ս *Իբրև զտե-սիլ հրեշտակաց:*

*Վազեցին զինև, հաղ.* Ինձ հանգիստ թողեցին:

*Վախճան մահու.* Մահվան օրհաս, մահ:

*Վախճան պսակէ զգործն, հաղ.* Ավարտն է պսակում գործը: Գործի մասին կարելի է դատել՝ նայելով նրա հետևանքներին:

*Վաղ քաջ.* Շատ վաղ, շատ շուտ:

*Վաճառականութիւն բա-նից.* Խոսքի շարադրանք:

*Վայրիկ մի.* Մի պահ, մի փոքր ժամանակ:

*Վաստակ արքունի.* Պե-տական՝ զինվորական ծա-ռայություն:

*Վատթարագոյն քան զշուն.* Չափազանց չար՝ չարախոս՝ վիրավորող՝ անամոթ՝ վատթար:

*Վարագ նկարագիր մատանի.* Մատանի, որի վրա փորագրված էր վարազ՝ պարսկական զինանշանը, որը ծառայում էր որպես կնիք:

*Վարել ի գերութիւն.* Գերի տանել, գերության ենթարկել, գերեվարել:

*Վարել յաւարի,* տե՛ս *Աւար առնուլ:*

*Վաւերական մատանի.* Պաշտոնական գրությունները վավերացնելու կնիք:

*Վեր ի վերոյ, մ.* Մակերեսայնորեն, հարևանցի, արտաքուստ, թեթևակի: *ա.* Վայրիվերո, մակերեսային, կեղծ:

*Վէգ գալ,* տե՛ս *Ի վէգ գալ:*

*Վճարել զկենցաղս.* Կյանքից հեռանալ, վախճանվել, մեռնել:

*Վրէժ խնդրել,* տե՛ս *Խնդրել զվրէժ:*

*Տալ ակն.* 1. Նայել, նկատել: 2. Տեսության գնալ, այցելել:

*Տալ քաջալերս.* Սիրտ տալ, քաջալերել, ոգևորել:

*Տանել (իմ) ընդ միտ.*
1. Մտքովն անցկացնել, կասկածել: 2. Մտքում պահել:

*Տապանակ ուխտի* / *Տապանակ վկայութեան* — տե՛ս *Զտապանակ ուխտին:*

*Տապաստ անկանել (իմ).* Գետին գլորվել՝ փռվել, տապալվել, ընկնել մեռնել:

*Տասնաբանեայ օրէնք.* Մովսիսական օրենքը՝ փորագրված երկու քարե տախտակների վրա և բաղկացած տասը պատվիրաններից:

*Տեղ յերկրէ մինչև յերկին.* Բավական հեռու:

*Տեղի տալ (իմիք՝ ումեք).* Մի բանի կամ մեկին առիթ տալ, թույլ տալ, զիջել, ենթարկվել:

*Տեղի տալ (յիմիքէ՝ յումեքէ).* 1. Խույս տալ, հետ քաշվել, ընկրկել, նահանջել: 2. Խորշել, հեռանալ:

3. Զիջել, հետ կանգնել:

*Տեսանել իբր ընդ հայելի օ-րինակաւ.* Պարզ և որոշակիորեն տեսնել:

*Տէգաշաց.* Չարնայվածք:

*Տուիչ պարգեւաց.*
Արարիչ, Աստված:

| | |
|---|---|
| *Տրտում եմ, անմխիթար մինչև ի մահ:*<br>*Տրտում է անձն իմ մինչև ի մահ:* | *հաղ.* Տխուր է հոգիս մեռնելու աստիճան: Չափազանց տրտում՝ անմխիթար եմ: |

*Տո՛ւք զկայսերն կայսեր և զաստուծոյն աստուծոյ, հաղ.* Տվե՛ք կայսրինը կայսրին և աստծունն աստծուն: Ամեն մեկին պետք է իրեն արժանին տրվի:

*Ցամաք մարմնով.* Շատ նիհար, վտիտ:

*Ցան աստ անդ.* Այստեղ-այնտեղ ցրված՝ սփռված:

*Ցուցական առնել.* Փաստերով ցույց տալ. ապացուցել:

| | |
|---|---|
| *Փախստական լինել (իմ)*<br>*Փախստեայ լինել (իմ)* | Փախուստի դիմել, փախուստ տալ, փախչել: |

*Փայլատակել իբրև յամպոյ մեծէ.* Անսպասելի ծագել՝ հայտնվել՝ դրսևորվել՝ երևան գալ:

*Փաշաման կրել.* 1. Զղջալ, փոշմանել: 2. Հանդիմանվել, դատապարտվել:

| | |
|---|---|
| *Փշրել որպէս զանօթ*<br>*Փշրել որպէս զանօթ բրտի* | տե՛ս *Իբրև զկաւեղէն անօթ փշրել:* |

*Փոխադրել (իմ) առ Քրիստոս.* Վեր՝ երկինք փոխադրվել՝ տեղափոխվել.մեռնել:

*Փոյթ առնել*
*Փոյթ յանձին ունել (իմ)*
*Փոյթ ունել (իմ)* } Զանալ, հոգ տանել, ուշադիր վերաբերվել:

*Փոքր ի շատէ.* Որոշ չափով, շատից-քչից:

*Քաղաք ամարաստանի.* Ամառանոցային քաղաք:

*Քաղցր քան զխորիսխ մեղու*
*Քաղցր քան զմեղու խորիսխ*
*Քաղցր քան զմեղր*
*Քան զամենայն խունկս անուշութեան* } տե՛ս *Նման քաղցրութեան մեղու:*

*Քան զամենայն սուր երկսայրի.* Չափազանց սուր՝ հատու՝ խոցող:

*Քան զանապատս անպտուղ.* 1. Ստերջ, ամուլ:

2. Արդյունք չունեցող, անօգուտ:

*Քան զանասունս ի վայր իջանել.* Անարգ վիճակի հասնել, խիստ ստորանալ՝ ընկնել՝ նսեմանալ:

*Քան զդրամ.* Շատ փոքր, չնչին, աննշան:

*Քան զհարսն, ա.* Պարկեշտ, առաքինի: *մ.* Պարկեշտորեն, առաքինաբար:

*Քան զհողմ թեթև.* Շատ թեթև, արագաշարժ:

*Քան զհրեշտակս, ա.* Հրեշտակային, ոգեղեն: *մ.* Հրեշտակաբար, հոգևորապես:

*Քան զչափ մանանխոյ.* Շատ փոքր, չնչին, աննշան:

*Քան զչափ նկանակի միոյ.* Շատ քիչ:

*Քան զպիրամարգ,* տե՛ս *Գեղեցկագոյն քան զպիրամարգ:*

*Քան զսուր,* տե՛ս *Քան զամենայն սուր երկսայրի:*

*Քան զփուշ նաչար կտտել.* Հոգեկան ցավ պատճառել, սաստիկ վիրավորել՝ խայթել:

*Քանզի անպատում է և ի վեր քան զմիտս և զլեզուս մարդկան, հաղ.* Խելքից՝ մտքից դուրս է: Աներևակայելի է:

*Քաջ արանց.* Կայսր, թագավոր, մեծ իշխան:

*Քաջհարուստ ոսկերօք,* տե՛ս *Բուռն ոսկերօք, հարուստ ոսկերօք:*

*Քեզ փա՜ռք յամենայնի, հաղ.* Ամեն բանում քեզ փա՜ռք:

*Քթթելական.* 1. Աչքերը թարթելը: 2. Մի վայրկյան, մի ակնթարթ:

*Քինախնդիր լինել (իմ).* Վրեժխնդիր լինել, վրեժ առնել՝ լուծել:

*Քստմունք զնան ընդ անդամսն, հաղ.* Մարմնով սարսուռ է անցնում: Փշաքաղվում է: Սոսկում է:

*Քրիստոնեայ ճշմարիտ.* Ճշմարիտ հավատ ունեցող քրիստոնյա:

*Օձ աւազակ.* Եվային խաբող օձը՝ սատանան:

*Օրէնք մոգուց.* Զրադաշտական կրոն, կրակապաշտություն:

*Օրէնք տեառն.* Տիրոջ՝ Աստծո պատվիրանները:

*Օրէնք քրիստոնէութեանն.* Քրիստոնեական վարդապետություն՝ կրոն, քրիստոնեություն:

*Օրինակ իմն.* 1. Որոշ չափով: 2. Օրինակի համար, որպես օրինակ:

*Օրինակ իմն կիսամահ,* տե՛ս *Որպէս կիսամեռք:*

*Օրինակ իմն որպէս փոթորիկ.* Ուժգին, սաստիկ, մեծ թափով:

*Օրինակ իմն չարագոյն զազանի ինչ.* Գազանաբար, վայրենաբար, դաժանաբար, անգթորեն:

*Օրհնեա՜ զմեզ, տո՛ւրք հայր մեր, հաղ.* Օրհնի՛ր մեզ, տո՛ւրք հայր մեր:

| | |
|---|---|
| *Օրհնեցի՜ց զՏէր յամենայն ժամ:*<br>*Օրհնեցի՜ց զՏէր* | *հաղ.* Կօրհնեմ Տիրոջն ամեն ժամանակ: |

| | |
|---|---|
| *յամենայն ժամ, հանապազ օրհնութիւն նորա ի բերան իմ:* | Նրա օրհնությունը միշտ իմ բերանում է: |

*Օրհնութիւն օրհնութեանց.* Սողոմոն Իմաստունին վերագրվող «Երգ երգոց» գիրքը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## 1. Սկզբնաղբյուրների համառոտագրություններ

*Ա. Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց*[27]

*Առակ*– Առակք Սողոմոնի:
*Դատ.*– Դատաւորք:
*Երգ.* – Երգ երգոց:
*Թագ.* – Գիրք թագաւորութեանց Գ.:
*Ծննդ.* – Ծնունդք:
*Կորն.* – Թուղթ Պօղոսի առաքելոյ առ Կորնթացիս Բ.:
*Մարկ.* – Աւետարան ըստ Մարկոսի:
*Յովհ.* – Աւետարան ըստ Յովհաննու:

*Բ. Մատենագրական և այլ բնույթի գործեր*

*ԱԲ* - Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1852:

*Ագաթ.* – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի, Երևան, 1983:

---

[27] Ամիրկեան ընկերութիւն Գրոց Սրբոց, Վիեննա, 1929: Աստվածաշունչ մատյան Հին և Նոր կտակարանների: Արևելահայերեն նոր թարգմանություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, Երևան, 2001:

*Արծր.* – Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985:

*Բուզ.* – Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987:

*Եզն.* – Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, Թիֆլիս, 1914: Աղանդների հերքումը, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970:

*Եղ.* – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան), Երևան, 1957: Վարդանի և հայոց պատերազմի մասին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1994:

*Լաստ.* – Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, Երևան, 1963:

*Խոր.* – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981:

*Կոր.* – Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

*Ղեւ.* – Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887:

*Մանդ.* – Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի Ճառք, Վենետիկ, 1860:

*Յհ. Կթ.* – Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

*Նար.* – Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան և այլ երկասիրութիւնք, Անթիլիաս, 2003: Մատյան ողբերգության, թարգմանությունը Վ. Գևորգյանի, Երևան, 2005:

*Նարեկ. Երգ.* – Գրիգորի Նարեկայ Վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1827 (Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի, էջ 389-487):

*Նարեկ. Տաղ.* – Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Երևան, 1991 (Վարդավառին, էջ 30-35):

*Սեբ.* – Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի, Թիֆլիս, 1913, Երևան, 1939:

*Փարպ.* – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, Թիֆլիս, 1907:

## 2. Տեսական գրականություն

1. *Աբեղյան Մ. Խ.,* Գրաբարի դասագիրք, Թիֆլիս, հրատ. Ներսիսեան դպրոցի, առաջին գիրք, 1915, երկրորդ գիրք, 1916:
2. *Աբեղյան Մ. Խ.,* Հայոց լեզվի տեսություն, Երկեր, h. Զ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974:
3. *Աբրահամյան Ա. Ա.,* Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976:
4. *Աճառյան Հ. Հ.,* Գրաբարի ուսուցիչ, Ե., Հայպետհրատ, 1954:
5. *Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս.,* Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), Ե., «Մանկավարժ» հրատ., 2005:
6. *Այտընեան Ա.,* Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ եւ յաւելուածով, Վիէննա, Մխիթարեանց տպարան, 1866 (Ե., Եր. համալս. հրատ., 1987):

7. *Ավետիսյան Լ. Ն.,* Գրաբարի բայական դարձվածային միավորների բազմիմաստությունը (Վանաձորի Հովհ. Թումանյանի անվ. ՊՄԻ, Միջազգային գիտաժողովի նյութեր, «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» 1-ին միջազգային գիտաժողով, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2011, էջ 30-37):

8. *Ավետիսյան Լ. Ն.,* Գրաբարի բայական նախդրավոր դարձվածային միավորների իմաստաբանություն («Լեզու և կրթություն», Հավելված «Մանկավարժական միտք» հանդեսի, Ե., «Զանգակ – 97» հրատ., 2011, № 2, էջ 19-27):

9. *Ավետիսյան Լ. Ն.,* Նախադրություններով կայուն կապակցությունների իմաստաբանությունը գրաբարում (ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2011, հուլիսի 7), Ե., «Նաիրի» հրատ., 2011, էջ 11-20):

10. *Ավետիսյան Լ. Ն.,* Գրաբարի բայական դարձվածային միավորների տարբերակները (ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, «Ջահուկյանական ընթերցումներ», Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (հունիսի 7-11), Ե., «Զանգակ» հրատ., 2012, էջ 5-13):

11. *Ավետիսյան Լ. Ն.,* Մակբայական կայուն կապակցությունների իմաստաբանությունը գրաբարում («Լեզու և կրթություն», Հավելված «Մանկավարժական միտք» հանդեսի, Ե., «Զանգակ» հրատ., 2012, № 3, էջ 47-53):

12. *Ավետիսյան Լ. Ն.,* Բայական կայուն կապակցությունների իմաստային տիպերը գրաբարում («Լեզու և կրթություն», Հավելված «Մանկավարժական միտք» հանդեսի, Ե., «Զանգակ» հրատ., 2012, № 4, էջ 69-75):

13. *Ավետիսյան Լ. Ն.,*Ածականական կայուն կապակցությունների իմաստաբանությունը գրաբարում (Երևանի Վ. Բրյուսովի անվ. լեզվաբանական համալսարան, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., «Լինգվա» հրատ., 2013, էջ 250-260)։

14. *Ավետիսյան Լ. Ն.,* Բայական կայուն կապակցությունների իմաստային խմբերը գրաբարում, «Լեզու և կրթություն», Հավելված «Մանկավարժական միտք» հանդեսի, Ե., «Զանգակ» հրատ., 2013, № 5, էջ 64-72)։

15. *Ավետիսյան Լ. Ն.,* Հոմանշությունը գրաբարի բայական կայուն կապակցություններում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., «Ասողիկ» հրատ., 2013, № 3 (56), էջ 72-78)։

16. *Ավետիսյան Լ. Ն.,* Մակբայական կայուն կապակցությունների իմաստային հարաբերությունները գրաբարում (ԵՊՀ «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու (2012 թ. ապրիլի 12-13), Ե., ԵՊՀ հրատ., 2013, էջ 94-97)։

17. *Ավետիսյան Լ. Ն.,* Գոյականական կայուն կապակցությունների իմաստաբանությունը գրաբարում (Երևանի Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (2012 թ. դեկտեմբերի 14), Ե., «Մանկավարժ» հրատ., 2014, էջ 44-47)։

18. *Ավետիսյան Լ. Ն.,* Գրաբարի անվանական կայուն կապակցությունների տարբերակները (ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, «Լեզու և լեզվաբանություն», Ե., ԳԱԱ հրատ., 2014, № 1-2 (12), էջ 35-43)։

*19. Ավետիսյան Լ. Ն.,* Հականշությունը գրաբարի բայական կայուն կապակցություններում (ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Ե., «Մանկավարժ» հրատ., 2014, № 2-3 (26-27), էջ 3-12):

*20. Ավետիսյան Լ. Ն.,* Հաղորդակցական կայուն կապակցությունների իմաստային տիպերը գրաբարում (ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Ե., «Մանկավարժ» հրատ., 2015, № 1 (29), էջ 23-33):

*21. Ավետիսյան Լ. Ն.,* Գրաբարի մակբայական կայուն կապակցությունների տարբերակները (ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Ե., 2016, № 2 (32), էջ 30-40):

*22. Ավետիսյան Լ. Ն.,* Քրիստոնեական վարդապետության առնչվող գոյականական կայուն կապակցությունների իմաստաբանությունը գրաբարում («Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 9-րդ միջազգային գիտաժողով (Գյումրի, 24-25 սեպտեմբերի, 2016), Զեկուցումների դրույթներ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 278-282):

*23. Ավետիսյան Լ. Ն.,* Հականշությունը հին հայերենի համեմատություն-դարձվածային միավորներում (ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Ե., 2017, №1 (35), էջ 27-38):

*24. Ավետիսյան Լ. Ն.,* Հաղորդակցական կայուն կապակցությունների իմաստային խմբերը գրաբարում (ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, «Լեզու և լեզվաբանություն», Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2017, №1 (16), էջ 49-56):

*25. Ավետիսյան Լ. Ն.,* Համեմատություն-դարձվածային միավորները ժամանակակից հայերենում, Ե., Էդիթ Պրինտ, 2018:

26. *Ավետիսյան Լ. Ն.,* Քրիստոնեական վարդապետության առնչվող հատկանշային կայուն կապակցությունների իմաստները գրաբարում (ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, «Լեզու և լեզվաբանություն», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, № 1 (18), էջ 36-47):

27. *Ավետիսյան Հ. Մ., Ղազարյան Ռ. Ս.,* Գրաբարի ձեռնարկ, 6-րդ հրատ., Ե., Եր. համալս. հրատ., 2007:

28. *Բագրատունի Ա.,* Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1852:

29. *Բաղիկյան Խ. Գ.,* Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986:

30. *Բաղիկյան Խ. Գ.,* Դարձվածային ոճաբանություն, Ե., Եր. համալս. հրատ., 2000:

31. *Բեդիրյան Պ. Ս.,* Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս» հրատ., 1973:

32. *Բեդիրյան Պ. Ս.,* Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., ՀՊՄԻ հրատ., 1990:

33. *Գևորգյան Ե. Հ.,* Հայերենի դարձվածքները, Ե., ԵՊՀ հրատ., 1969:

34. *Թումանյան Գ. Բ.,* Գրաբարի նախադրությունները (V-XI դդ.), Լեզվի և ոճի հարցեր, VII, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:

35. *Խաչատրյան Լ. Մ.,* Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996:

36. *Խաչատրյան Լ. Մ., Ավետիսյան Լ. Ն.*, Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XVI դդ.), Ե., «Զանգակ» հրատ., 2015:

37. *Խաչատրյան Լ. Մ., Թոսունյան Գ. Բ.,* Գրաբարի դասագիրք, Ե., «Զանգակ-94» հրատ., 2004:

38. *Համբարձումյան Վ. Գ.,* Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013:

39. *Համբարձումյան Վ. Գ.,* Գրաբարի ձեռնարկ, Ե., Էդիթ Պրինտ, 2018:

40. *Հովհաննիսյան Ա. և ուրիշներ,* Համագործակցային ուսուցում, Ե., «Անտարես» հրատ., 2006:

41. *Ղազարյան Ս. Ղ.,* Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., Եր. համալս. հրատ., 1981:

42. *Մարգարյան Ա. Ս.,* Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 1990:

43. *Մկրտչյան Է. Ս.,* Գրաբարի դասընթաց. ուսումնաօժանդակ ձեռնարկ, Ե., «Մանկավարժ» հրատ., 2008:

44. *Մուրվալյան Ա. Ա.,* Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1975:

45. *Յուզբաշյան Ա. Լ.,* Նախդիրների ուսուցման հիմնախնդիրները բուհական դասընթացում («Մանկավարժական միտք» (3-4), Ե., «Զանգակ» հրատ., 2014, էջ 136-141):

46. *Շարաբխանյան Պ. Ե.,* Գրաբարի դասընթաց, Ե., Եր. համալս. հրատ., 1974:

47. *Չամչեանց Մ.,* Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1843:

48. *Ջուհարյան Թ.,* Հայոց լեզվի մեթոդիկա, գիրք 1-ին, Ե., «Լույս» հրատ., 1978:

49. *Սարուխանյան Ս., Դալլաքյան Ա., Դիշադաջյան Ն.,* Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժութ-

յուններ, Վանաձոր, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, «Վանատուր» ՍՊԸ տպ., 2008:

50. *Սեբաստացի Մ.,* Քերականութիւն գրաբառի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730:

51. *Սուքիասյան Ա. Մ.,* Ժամանակակից հայոց լեզու, Ե., Եր. համալս. հրատ., 1999:

52. *Քոսյան Վ. Ա.,* Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975:

53. *Քոսյան Վ. Ա.,* Գրաբարի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:

54. *Аветисян Л. Н.,* Синонимия компаративных фразеологических единиц древнеармянского языка (Грабара) (сопоставительный анализ), Евразийское Научное Объединение (Eurasian Scientific Association), Современные концепции научных исследований, XLVIII Международная научная конференция, Февраль 2019, № 2 (48), Часть 5, Содержание III, М., 2019, с. 291-293, eLibrary.ru.

55. *Аветисян Л. Н., Согомонян М. Р.,* Концепт «Совесть» во фразеологических единицах (русско-армянское сопоставление), (УДК 8, ББК 81.1 Филологические науки), Санкт-Петербургский Центр Системного Анализа, Сборник научных статей по итогам международной научно-практической конференции «Наука нового времени: от идеи к результату» 18-19 августа 2017 года, Санкт-Петербург, Изд-во «КультИнформПресс», 2017, с. 130-132, (eLibrary.ru), (лицензионный договор с ООО «НЭБ» № 2423-10/2014К). Включена в Российский индекс научного цитирования (РИНЦ).

56. *Аветисян Л. Н., Согомонян М. Р.,* Отношения человек-человек в семантическом поле общечеловеческих ценностей на материале армянских фразеологических единиц (в сопоставлении с русскими), ИНТЕРНАУКА internauka. org, Инновацион-

ные подходы в современной науке, Сборник статей по материалам XVI международной научно-практической конференции, № 4 (16) Февраль 2018 г., М., 2018, с. 108-113. Сборник включен в науко-метрическую базу РИНЦ.

57. *Аветисян Л. Н., Согомонян М. Р.,* Изучение перифраз-словосочетаний в вузе (на примере фразеологизированных и нефразеологизированных перифраз современного армянского языка), Евразийское Научное Объединение (Eurasian Scientific Association), Современные концепции научных исследований, XLVIII Международная научная конференция, Февраль 2019, № 2 (48), Часть 5, Содержание III, М., 2019, с. 302-305, eLibrary.ru.

58. *Архангельский В. Л.,* Устойчивые фразы в современном русском языке, Ростов н/Д, Изд-во РУ, 1964.

59. *Балли Ш.,* Французская стилистика, М., Изд-во “Иностр. лит-ры ”, 1961.

60. *Бредихина И. А.,* Методика преподавания иностранных языков: Обучение основным видам речевой деятельности, Учебное пособие, Екатеринбург, Изд-во УУ, 2018.

61. *Виноградов В. В.,* Русский язык. Грамматическое учение о слове, М., Изд-во “Высшая школа”, 1986.

62. *Жуков В. П.,* Семантика фразеологических оборотов, М., Изд-во “Просвещение”, 1978.

63. *Жуков В. П.,* Русская фразеология, М., Изд-во “Высшая школа”, 1986.

64. *Кунин А. В.,* Английская фразеология, Изд-во “Высшая школа”, 1970.

65. *Мокиенко В. М.,* Славянская фразеология, М., Изд-во “Высшая школа”, 1989.

66. *Назарян А. Г.,* Фразеология современного французского языка, М., Изд-во “Высшая школа”, 1987.

*67.* Педагогика, учебник, под ред. *Крившенко Л. П.,* М., Изд-во “Проспект”, 2005.

*68.* *Раджабов Б. Ф.,* Современные методы обучения студентов с использованием ИКТ в условиях Республики Таджикистан, Сборник научных статей по итогам международной научно-практической конференции “Наука нового времени: от идеи к результату” 18-19 августа 2017 года, Санкт-Петербург, Изд-во “КультИнформПресс”, 2017, с. 79-81.

*69.* *Райхштейн А. Д.,* Сопоставительный анализ немецкой и русской фразеологии, М., Изд-во “Высшая школа”, 1980.

*70.* *Селевко Г. К.,* Энциклопедия образовательных технологий, Том 1, М., Народное образование, 2005.

*71.* *Чернышева И. И.,* Фразеология современного немецкого языка, М., Изд-во “Высшая школа”, 1970.

*72.* *Шанский Н. М.,* Фразеология современного русского языка, М., Изд-во “Высшая школа”, 1985.

*73.* *Arnold I. V.,* The English word, M., “Vishaya shkola” press, 1986.

*74.* *Goursky S. E.,* The idiomatic heart of the English language, Lvow, “Vishaya shkola” press, 1975.

## 3. Բառարաններ

*1.* Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Անթիլիաս, 1988:

*2.* *Բաղիկյան Խ. Գ.*, Ուսումնական դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2002:

*3.* Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան, Վենետիկ, 1837:

*4.* *Բեղիրյան Պ. Ս.,* Դարձվածաբանական բացատրական բառարան, Ե., «Լույս» հրատ., 1971:

5. *Բեդիրյան Պ. Ս.,* Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2011:
6. *Խաչատրյան Լ. Մ.*, Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Ե., «Զանգակ-97» հրատ., 2003:
7. *Խաչատրյան Լ. Մ.*, Գրաբարի ուսումնական բառարան, Ե., «Զանգակ» հրատ., 2013:
8. *Խլղաթյան Ֆ. Հ.,* Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Ե., «Լույս» հրատ., 1976:
9. Հայոց բառ ու բան (կազմեց՝ *Սահակ Վարդապետ Ամատունի*), Ս. Էջմիածին, Միաբ. մայր աթոռոյ Ս. Էջմիածնի, 1912:
10. *Հովհաննիսյան Լ. Շ.*, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Ե., Էդիթ Պրինտ, 2010:
11. *Ղազարեան Ռ. Ս.,* Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., Եր. համալս. հրատ., 2006:
12. *Ղազարեան Ռ. Ս.,* Գրաբարի դարձուածաբանական բառարան, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2012:
13. *Ղազարյան Ռ. Ս.*, Գրաբարի բառարան, հհ. Ա-Բ, Ե., Եր. պետ. համալս. հրատ., 2000:
14. *Մալխասեանց Ս.*, Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., «Հայպետհրատ», 1944-1945:
15. *Նազարյան Ա. Հ.,* Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Ե., «Ապոլոն» հրատ., 1993:
16. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հհ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837:

*17.* Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Սրբագրուած և ճո-խացուած Նորայր Բիւզանդացու ձեռքով: Հրատարակության պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնև, 1990:

*18.* *Սէքաստացի Մ.,* Բառգիրք Հայկազեան լեզուի, Վենե-տիկ, հ. 1, 1749, հ. 2, 1769:

*19.* *Սուքիասյան Ա. Մ.,* Հայոց լեզվի հոմանիշների բա-ցատրական բառարան, Ե., Եր. համալս. հրատ., 2003:

*20.* *Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա.,* Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 1975:

*21.* *Азимов Э. Г., Щукин А. Н.,* Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам), М., Изд-во ИКАР, 2009.

*22.* *Ахманова О. С.,* Словарь лингвистических терминов, М., Изд-во “Сов. энциклопедия ”, 1969.

*23.* *Матвеева Т. В.,* Польный словарь лингвистических терминов, Ростов н/Д, Изд-во “Феникс”, 2010.

*24.* Семантические группи во фразеологии современного английского языка (сост. *А. И. Алехина*), М., Изд-во “Высшая школа”, 1978.

*25.* Словарь – справочник по русской фразеологии (сост. *Р. И. Яранцев*), М., Изд-во  “ Русский язык ”, 1985.

*26.* English idioms and how to use them (By *J. Seidl, W. Mc. Mordie*), M., “Vishaya shkola” press, 1983.

## 4. Համաբարբառներ

*1.* Համաբարբառ *Ագաթանգեղայ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեցին՝ Օ. Խաչատրյան և ուրիշներ), հհ. Ա-Բ, Ե., 1973:

*2.* Համաբարբառ *Փ. Բիւզանդացւոյ* «Պատմութիւն Հա-յոց» երկի (Կազմեց՝ Վ. Գևորգյան), հհ. 1-3, Ե., 1974-1978:

3. Համաբարբառ *Եզնկայ Կողբացւոյ* «Եղծ աղանդոց» երկի (Կազմեց՝ Գ. Թոսունյան), Ե., 1972:

4. Համաբարբառ *Եղիշէի* «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի (Կազմեց՝ Լ. Գուլզազարյան), հh. 1-2, Ե., 1974-1978:

5. Համաբարբառ *Մ. Խորենացւոյ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեցին՝ Օ. Խաչատրյան և ուրիշներ), հh. 1-3, Ե., 1975-1976:

6. Համաբարբառ *Կորիւնի* «Վարք Մաշտոցի» երկի (Կազմեց՝ Է. Դեմիրճյան), Ե., 1972:

7. Համաբարբառ հին եւ նոր կտակարանաց, Աշխատասիրութիւն *Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցւոյ,* Երուսաղէմ, 1895:

8. Համաբարբառ *Ղեւոնդեայ վարդապետի* «Պատմութիւն» երկի (Կազմեց՝ Պ. Բեդիրյան), Ե., 1978:

9. Համաբարբառ *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեց՝ Ս. Ղազարյան), հh. 1-3, 1976-1983:

10. Համաբարբառ *Գր. Նարեկացւոյ* «Մատեան ողբերգութեան» երկի (Կազմեցին՝ Գ. Թոսունյան, հh. 1-2, Է. Դեմիրճյան, h. 3), Ե., 1975-1978:

11. Համաբարբառ *Սեբէոսի* «Պատմութիւն Սեբէոսի» երկի (Կազմեց՝ Գ. Խաչատրյան), Ե., 2004:

12. Համաբարբառ *Ղ. Փարպեցւոյ* «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկի (Կազմեց՝ Հ. Հովհաննիսյան), Ե., 1973:

13. Համաբարբառ *Ղ. Փարպեցւոյ* «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեց՝ Ալ. Մարգարյան), հh. 1-3, Ե., 1975-1978:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԱՌԱՋԱԲԱՆ ........................................................................................3

ԳՐԱԲԱՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԿԱԶՄԱԿԱՆ–ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ........................................................19

Ա. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԻՋՄԱԿԱՐԴԱԿԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ................................19

1. Անվանողական կայուն կապակցություններ ..................................20
2. Հաղորդակցական կայուն կապակցություններ ...............................23

Բ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ...................................................................28

1. Նախդրավոր անվանողական կայուն կապակցություններ ...29
2. Նախադրություններով (այլև հետադրություններով) անվանողական կայուն կապակցություններ.............................30
3. Իրենց կազմում նախդիր-նախադրություններ ունեցող հաղորդակցական կայուն կապակցություններ..........................................................................32
4. Իրենց կազմում նախդիր-նախադրություններ չունեցող կայուն կապակցություններ........................................ 32

Գ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ...........35

1. Բառային (հոմանշային) տարբերակներ ..............................36
2. Քերականական տարբերակներ ............................................36
3. Ծավալային տարբերակներ ..................................................37

Դ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ....................................................................39
1. Գոյականական կայուն կապակցություններ ........................ 39
2. Ածականական կայուն կապակցություններ ........................ 40
3. Բայական կայուն կապակցություններ ................................ 40
4. Մակբայական կայուն կապակցություններ ........................ 41
5. Տարարժեք կայուն կապակցություններ................................ 42
Ե. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ....................................................................44

**ԳՐԱԲԱՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.................................................................. 71**

Ա. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ....72
1. Ոչ դարձվածային կայուն կապակցություններ ...........................73
2. Դարձվածային կայուն կապակցություններ ............................... 73
Բ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ..79
Գ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....................................................................88
1. Ներկապակցական իրողություններ .............................................90
2. Միջկապակցական իրողություններ .............................................92
Ա. Հոմանիշ կայուն կապակցություններ............................................... 92
Բ. Հականիշ կայուն կապակցություններ ..............................................96

**ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՏՐՎՈՂ (ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ) ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.................................... 120**

Ա. Ուսանողների գործնական հմտությունների զարգացում..........120

Բ. Ուսանողների որոնողական-հետազոտական ունակությունների զարգացում .....139
Գ. Ուսանողների առցանց հաղորդակցական կարողությունների զարգացում .....142

ՀԱՎԵԼՎԱԾ ..... 143
Ա. ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿ .....143
Բ. ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ .....152

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....201
1. Սկզբնաղբյուրների համառոտագրություններ .....201
2. Տեսական գրականություն ..... 203
3. Բառարաններ .....211
4. Համաբարբառներ .....213

ԼԻԼԻԹ ՆՎԵՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ
# (ՏԵՍԱԿԱՆ, ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԱՌՑԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ)

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

*Բուհերի բանասիրական ֆակուլտետների համար*

Ստորագրված է տպագրության 26.05.2020:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: 13.75 տպ. մամուլ:

**«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ**

**Հրատարակչություն**
*Երևան, Գրիգոր Լուսավորչի*
*6: Հեռ.՝ 011-52.79.74*
***Էլ. փոստ lusakn@rambler.ru***